BnF

gallica BIBLIOTHÈQUE NUMÉRIQUE

1932

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Chirvanzadé, Alexandre (1858-1935),Demirdjian, Terenik (1877-1956),Arazi (1878-19..),Toumanian, Hovhannes (1869-1923),Hamasdegh (1895-1966),Zorian, Stepan (1889-1967),Zohrab, Krikor (1861-1915),Tchobanian, Archag (1872-1954),Ochagan, Hagop (1883-19..). 1932. 1932.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF.Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :
*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.
*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer ici pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.
*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

ՀԱՅ ԳՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

4123146

Հրատարակուած՝ «Հայրենիք»-ի 1932 թ. Քէմփէյնին առթիւ

ECH-TOL-2008-1637
2008-106211

BnF
L&A

D4 Map

E006

ՀԱՅ ԳՐԱԿԱՆ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Այս ժողավածուի մէջ մտած են ա) Հայաստանի մէջ վերջին տարիներու ընթացքին կամ անկէ առաջ լոյս տեսած եւ բ) արտասահմանի մէջ հրատարակուած գրական պատմուածքներ, որոնք այս կամ այն պատճառով ցարդ անծանօթ են մնացած ընթերցողներու լայն հասարակութեան:

Բնականաբար, խորհրդային պատմուածքները այս ժողովածուին մէջ կը տպուին ոչ թէ բոլշեւիկեան այլանդակ ուղղագրութեամբ, որ անմատչելի դարձուցած էր զանոնք մեր ընթերցողներուն, այլ մեսրոպեան ուղղագրութեամբ, որուն սովոր են մեր ընթերցողները: Այս կերպով այդ պատմուածքներուն առաջին անգամ ըլլալով կրնայ ծանօթանալ արտասահմանի հայ հասարակութիւնը:

Գալով գաղութներու մէջ հրատարակուած պատմըւածքներուն, զորս հաւաքած ենք այս ժողովածուին մէջ, անոնք եւս շատերու համար նորութիւն մը կրնան ըլլալ, քանի որ մինչեւ այժմ կորսուած էին քիչ տարածուած տարեգրքերու կամ սպառած գրքերու մէջ:

Այս ժողովածուն կ'ուղարկուի միայն «Հայրենիք»ի բաժանորդներուն, որոնք 1932 թ. քէմփէյնի շրջանին նորոգեցին իրենց բաժանորդագրութիւնը եւ կամ նոր բաժանորդ գրուեցան:

ՀՈՂԸ

Խորի՛ն, իսկական Հայաստան:

Նրա քաղաքներից մինը: Քաղաք՝ ձեռաց չինած:

Խրճիթների, մարագների ու ախոռների արանքում՝ տապարան, կոոպերատիվ, ելեքտրոկայան:

Եւ երդիկների ծուխը բարդ–բարդ ծառանում է դէպի վեր:

Մի երկար փողոց գնում է իր համար: Մերթ անհամոզիչ ծըռւում է աջ, երբեմն ձախ ու յետոյ գնում, գնում, հարու է տալիս եւ քաղաքից վազում դուրս:

Փողոցի երկու կողմը ինչ որ արտառոց գոմեր, վայրիվերոյ բակեր կան հին պոստային վարչութիւններից մնացած, «ստարոստայական» ռենեսանսի ոճով: Բակերի ընդարձակութիւններ, ուր քայքայուած ֆուրգոնների տակ, ձիու աղբերի չուրջը յախուռն հաւաքոյթներ են լինում ճնճղուկների ու հաւերի: Եւ ճանճե՛ր, ճանճե՛ր... բզզում են, պարում օդի մէջ ամենուրեք:

Ցուցանակներ են յօրանջում խանութների ճակատին: Վիթխարի մալականն իր ահագին դեղնամօրուքի հետ ման է գալիս խանութէ խանութ: Մինչ սայլով խոտը ականջդ ճանկելով անց է կենում քունքին մօտով: Ահա եւ կարմիր–բանակային վաշտը· կարմրաթուշ պատանիներ՝ ամուր նիւթից չինած գիւղացի տըղերք, կարծես քոչարի բռնած իրար են կպել, պատի պէս առաջ են գալիս: Ալեծածան է նրանց ընթացքը եւ երգը համաւոր· մի քիչ էլ համեստ: Եւ շիրակեցի կարմիր բանակայինը ատամների սաղաֆը մերկացրած դողացնում է կզակը·

«Մենք ենք Կարմիր բանակը»...

Անցնում են:

Շուկան: Գիւղացիներ, գեղջկուհիներ, պիոներներ, զինուորական խոհանոցի սայլը, խուրջիններ, եղաններ, աւտոմոբիլ, եւ... Կոոպերատիվ խանութում իրար են ուտում:

Բայց հէնց ծռում ես փողոցի մի կողմը աջ կամ ձախ՝ ուրարտական լռութիւն... Հինօրեայ գիւղն է, իր դատարկ փողոցներով: Հեռուն՝ դաշտերն են արտերի կարկատաններով մինչեւ լեռների լանջերը:

Իմ տանտիրոջ՝ բիձայի արխալուղի պէս:

Եկել եմ հանգստի: Սենեակս գիւղի ծայրին է: Նստում եմ պատշգամում, գիրքը ձեռիս: Դէմից անտառն իր կանաչ աչքերով մտիկ է տալիս...

Եւ քունս տանում է:

Տանտէրս մի ութսուն տարեկան բիձա մարդ է: Ամպի մօրուքը դէմքից կախ:

Նոր ենք ծանօթանում իրար հետ: Կողքովն անցնելիս ասում եմ՝ «բարով, բիձա»:

— Այ բարին արեւիիիի–ի՛դ... — ձգում է յետեւից մի քանի քայլ: Դեռ տնտղում է ինձ: Սպասողական դիրք է բռնել: Մի երկու հոտոտեց — բան դուրս չեկաւ: Ուզում է իմանալ, թէ ինչ մարդ եմ:

Վերջին տարիների վայրիվերումները մի քիչ շփոթել են բիձային: Վրիպում է չարունակ. մարդիկ, նրանց վիճակը, գործը, արտաքինը այնպէս են փոխուել, որ բիձայի աչքերը խառնւում են:

Առայժմ կարծեմ վաճառականի տեղ է դնում ինձ:

Ես էլ դիտմամբ պղտորում եմ ջուրը, տեսնենք ինչ կ՚անի:

Պատշգամիս առջեւ տան բակն է, հաւերի ներկայութիւնը: Աջ կողմը թոնրատունն է, ձախ՝ սենեակներ են վարձու տուած:

Օրը շոգ է, փայլում է կարմիր գաթայի պէս: Օրուան քունը տանում է: Արեւի մեղրը հալւում, ծորում է տների, ծառերի, աթարների բուրգերից գետնի վրայ:

Թմրում եմ պատշգամում: Կիսափակ աչքերիս դէմ մի վաղածանօթ պատկեր է երեւում: Չոր աթարների ճարտարապետութիւնը, թարմ աթարների գաթանները պատերին փակցրած:

Հաւերն իրենց բեւեռագիր կատարներով, աքլորի կանչը՝ ինչ որ ուրարտական չեշտով, որ ծորում է՝ «ծո՛ւղ-րու-ղո՛ւ-ո՛ւ»։

Մեղուները պստլիկ աերոպլանների պէս ճախրում են շուրջդ եւ բզզալով մի տարտամութիւն են բերում վրադ։

Բակը ամայի է։ Տանտէրս է միայն տանը։ Նստել է ջրհորի բերանի մօտ, գերանի վրայ ու գլխով շուռ-շուռ կշռում է ու արթնանում։ Գլխին մի խղոտ շլեապ ունի, որ անշուշտ մի տեւկի մէջ նաւ է նստել Հիւսիսային Միացեալ Նահանգներում եւ Ատլանտեան ովկիանոսը ճեղքել դուրս է եկել Լենինական քաղաքը։ Եւ ո՞վ իմանայ ի՛նչ ժամի՝ երկու վանեցի վաճառական ո՛ր տախտակէ խանութի լռութեան մէջ, երկար շուռ ու մուռ տալով այդ շլեապը՝ խորհրդակցեցին եւ գինը կտրեցին այսպէս․

— Խինդ շահի։

Եւ շլեապը նստեց բիձայի գլխին։ Բիձան երկու աշխարհ ունի իր վրան։ Ուսից վեր եւ ուսից վար։ Ուսից վեր Ամերիկա է։ Ահագնադղորդ շուգունէ քաղաք․ փողոցներով հոսում է աւտոբուսների, տրամվաների, մարդկանց մի յորդ Միսիսիպի։ Ամերիկեան եկեղեցի։ Ազօթող բազմութեան դիմաց կանգնել է վրշտից գերացած պաստորը, որ հնդուհաւի վզի նման կարմիր երեսը մռայլելով՝ ճենճերային ձայնով սաղմոսում է։ Արեւելք, աղքատներ, եղբայրներ ի Քրիստոս։ Ս․ հոգին այցելում է բազմութեանը, եւ հետեւեալ օրը ամերիկացու գլխին շլեապը ճամբայ է ընկնում Արեւելք, մինչեւ բիձայի գլուխը։

Գլխարկից վար ուրիշ աշխարհ է։ Հին օրեր։ Հասան խան, եաթաղան, գնջիլ, Փարրաշներ։ Խանը խօսեց՝ գլուխը թռաւ։ Ցետոյ ուրիշ օրեր։ Երկճիւղ մօրուքաւոր պրիստաւ, եասավուլ՝ ահռելի փափախով։ Մտրակ, ծեծ, հայհոյանք, կաշառք։ Քէօխվան կտրան ծերից ըռխալի հայհոյանքով հրամայում է գզիրին․ «Տո՛ւր, տո՛ւր էդ շուն շան որդուն, տո՛ւր էդ հարամզադին»։ Գիւղացին ծեծւում է, պատռած բազմակարկատ արխալուղը ծլանգ-ծլանգ փռփռում է քամու առաջ։

Քնած է բիձան։

Կարծեմ ես էլ եմ քնած։

Մէկ էլ յանկարծ․

— Քշաա՛, քշա՛, ձեր քոքը վառի․․․

(Հասան խա՛նը)։

— Քշա՛,— կրկնում է բիձան ու քարը շպրտում հաւերի վըրայ:

Սրանք խուճապով փախչում են եւ անհամոզիչ կերպով բարձր ճչալով նահանջում են նախօրօք նշանակուած դիրքերը նոր յարձակման մտադրութեամբ:

Բիձան տան մեծն է: Արամազդը՝ ինքը: Ընտանիքի միւս անդամներից են իր պառաւը, երկու որդին 40 եւ 45 տարեկան, մի որբեւայրի հարս եւ հինգ-վեց մանր ու խոշոր տղայ-աղջիկ:

Ընտանիքի մէջ է մտնում նաեւ մի կիսախենթ բիձա: Նրան չեն սիրում. նախ նրա համար, որ պառաւի եղբայրն է, ասել է՝ տանից չէ, եւ ապա՝ որ խենթ է, կարելի է չսիրել: Բայց եւ այնպէս նրան պահում են, քանի որ նա մի պստիկ տուն ունի, որ ամառուորներին վարձով են տալիս եւ վարձը իրենք են ստանում: Մէկ էլ՝ իրենց բոստանը նա է պահում:

Խենթը տուն չի գալիս: Նա իր խելքը — եթէ ունի, եւ երեւում է, որ ունի ինչ որ իւրատեսակի մի խելք — այդ խելքը տուել է բոստանին:

Դինաւուր խօսակցութեան ժամանակ հարեւանները նրան «բիձա» են ասում, իսկ առօրեայ գործածութեան համար որոշուած է՝ «գիժը»: Բարձրահասակ, չոր ու ցամաք մի ծերուկ է բիձան, աչքերը խորն ընկած, ման է գալիս գլուխը բարձր բռնած, երերալով, կարծես հիմի պիտի ընկնի, կանգ է առնում ու մրթմրթում: Շաբաթը մի հեղ երեւում է բակում, այն էլ յատկապէս գոռգոռալու: Այդ լինում է այն ժամանակ, երբ տանեցիներից մէկը երեխաների մօտ բան է ասած լինում նրա մասին, եւ երեխաները խօսքը տեղ են հասցնում:

— Ո՞ւմ չներն էք,— գոռում է բիձան,— սոված չներ, ո՞վ ա ձեզ իրաւունք տուել իմ վրեն բերան պատռելու: Ես որ չըլեմ, սովից կը սատկէք:

Այդ գոռոցը, ճիշդ ասած, դիւանագիտական բնոյթ ունի, աւելի մարկայի համար է, որպէսզի իր պատիւը որոշ մակարդակի վրայ պահի:

Բոլորը լռում են: Միայն երբ բիձան կանոնադրութեան սահմանից անցնում է եւ գործ է անում ոչ պարլամենտական ոճեր,

տանտէրս ձանը բարձրացնում է.

— Դէ, լաւ, հերիք հաչես, ռա՛դ ըլի:

— Ո՞ւմ ես ասում ռադ ըլի՝ պրիստա՞ւ ես, թէ դուբերնատ… — ու այս ոգով դեռ երկար շարունակում է բիձայի ամբաստանագիրը: Բայց նրան լսող չկայ, նա էլ բաւարարուած է: Ուստի եւ վերջացնում է ու մռմռալով հեռանում դէպի բոստանները: Ճանապարհին երերում է ու կանգ առնում: Ահա բահը զարկեց մի քարի ու շպրտեց ճամբից դուրս: Ահա եւ կանգնեց, նայում է առուների ջրին: Աշխատանք գտաւ, ուրեմն եւ մոռացել է միջադէպը:

Այս առաւօտ անկողնում էի, որ լսեցի բիձայի ձայնը եւ մէկ էլ մի անծանօթ երիտասարդի ձայն:

— Դո՞ւ ես տանտէրը:

— Տանտէ՞րը, ի՞նչ կայ որ,— զգուշացաւ բիձան:

— Դու չե՞ս տանտէրը:

— Ախր մի ասա տեսնեմ ի՛նչ կայ: Հա, ես եմ:

Գլուխս բարձրացրի, որ տեսնեմ, թէ ինչ երիտասարդ էր: Չէր երեւում: Միայն բիձայի միրուքն էր ամբոմբում:

Երիտասարդն ըստ երեւոյթին գործկոմից էր:

— Քանի՞ հոգի էք:

— Քանի հոգի՞:

— Հա, քանի՞ հոգի էք:

— Ըստե՞ղ,— ու բիձան որջից գլուխը դուրս հանած գայլի պէս տնտղում է երիտասարդին,— ըստեղ երկու աշխատող ենք:

— Մի՞թէ այդքանը միայն:

Բիձան գիտէ, թէ ինչ է անում: Զհասկանալու է տալիս, ժամանակ շահում, որ իմանայ, թէ ով է երիտասարդը, ինչի՛ է հարցնում եւ ինչ դուրս կը գայ տակից: Դրա համար էլ գորտի պէս ջուրը պղտորում է տիղմով եւ տակից տազ անում:

— Ոնց թէ երկու հոգի էք, տանը ուրիշ մարդ չկա՞յ:

— Կայ, ամա նրանք ուտող են:

— Դու ինձ բոլորը միասին ասա:

— Ըստեղ երկու հոգի ենք… — ու յանկարծ կրկին նոյն հարցը,— եավաշ, էդ ընչի՞ համար ես հարցնում:

— Պէտք է,— կարճ կտրում է անփորձ երիտասարդը եւ բարկանում:

— Այ ի՞նչ իմանամ: Միտքս վրաս չի:

Երիտասարդը գրում է ըստ երևույթին.

— Քո անո՞ւնը:

— Գրի՝ Մացակ Օվանէսով, ութանասուն տարեկան: (Հալիւոր եմ, անպէտք):

— Ձեր կնոջ անո՞ւնը:

— Գրի՝ Թագուհի Օվանէսով: (Նա էլ վացցուն տարեկան՝ ա, կոները, սաղ ջանը ցաւում ա: Չի կարում թէ բան անի):

Ու տնտղում է երիտասարդին, որ մի կերպ լուծի հանելուկը: «Թող չարը խափանի»:

— Տղաներդ: Քանի՞սն են:

— Մինը՝ Վասին ա: Սալդաթութիւն արած պրծած ա, կըռւում էլ եարալու ա ըլել: Աչխատողը նա ա: էն մեկելը, Սիմոնը, էն տարին որ սաթըլջան ընկաւ...

— Քանի՞ տարեկան են:

— Իցցուն, իցցուն հինգ կ՚ըլեն:

— Պակաս չե՞ն: Քառասուն:

— Հա՛, քառասուն, աւել էլ կ՚ըլեն:

— Քանի տարեկան են վերջը:

— Վասիլը 40 ա, Սիմոնը՝ 45:

— Հարսներդ, թոռներդ:

— Ի՛, անպէտք խալխը, դրանց էլ ես գրո՞ւմ:

Երիտասարդը գրում է:

— Է, վերջացա՞ւ: Ցետո՞յ:

— Բիձեն մնաց, բիձեն,— ձայն է տալիս հարեւանի կնիկը:

— Ուրիչ էլի՞ մարդ մնաց: Ի՞նչ բիձա է:

— Մարդ չկայ: էն գժի համար ա ասում: Դէ նա իրա համար կայ... Պարապ հացակեր ա:

Բայց բիձան հանգիստ չէ: Զգիտէ՝ լա՞ւ է պատասխանում, թէ՞ վատ: Միշուշ է առաջը, չի կարողանում պարզել:

— Սուուգման համար էր,— վերջացնում է երիտասարդը, փակելով իր խորհրդաւոր տետրակը:

— Հա, վնաս չունի,— կմկմում է բիձան, էլի չթափանցելով մեծ գաղտնիքը: Թէ դրուստ մեր հալը կ՚ուզես իմանաս՝ խեղճ ենք. անճարխ մի փոր հաց հանում ենք:

Ու ճամբու է դնում երիտասարդին:

Դեռ ուշքի չի եկել։ Անյայտութիւնը չպարզուեց։ Ու ան-հանգստացած գազանի պէս մտիկ է տալիս հեռացողի ետեւից։

Վեր կացայ անկողնից։ Լուացւում էի ջրհորի մօտ։ Բիձան նստած էր հարեւանի այգու պատի տակ։

Երեսս սրբելով մօտեցայ իրան։

— Բարի օ՛ր, բիձա։ Ի՞նչ կայ, ի՞նչ չկայ։

— Ջանսաղութիւն։ Լաւը դու գիտես, դո՛ւ սաս՝ լսենք։

— Բա դու իսկի լաւ բան չե՞ս իմանում։

— Իի՜... — ճրրաց հին ֆուրգոնի պէս՝ քաշելով իր մոքերի ծանր բեռը։ Լաւը ո՞րն ա։ Գետինը չանգռելով միջից մի բան հանում ենք, ապրում։ Լաւն էն ժամանակն էր, որ Աղբարս Թուրքերի մէջ եասավուլ էի։ Քառասունը հի՞նգ... Հա՛, հա, մի էդքան կ՚ըլի հա՜։ Համարեա պրիստաւ էի։ Դելոպռավիզատել Վալլէ աղէն բաշ-քեաթիպ էր։ Նրա ձեռի տակին էի։ Իմ ճշմարտութիւնիցը ինձ շատ էր սիրում։ Ես էլ մէկ սաստիկ գործ էի բռնում Թուրքերի միջին։ «Հը՞, ո՛նց ես, Մացաք». կ՚ասէի՝ «լա՛ւ եմ, աղա՛»։ Կը հանէր մէկ ճռճռան Թուղթ մանէթ կը խփէր ճակտիս. «Գնա քէ՛ֆ արա»։ Թուրքերը դողում էին ինձանից։ Թուրս լաւ լազաթին կապա՜ծ։ Տախտիս տակին չաքարը, եղն ու պանիրը իրա կարգին։ Կ՚ասէի՝ «Պավլէ՛ աղա, Թուրքն եկել ա, ուզում ա քեզ տեսնի»։ Կ՚ասէր՝ «սաս իցցուն մանէթ ա»։ Կ՚առնէի իցցուն հինգը։ Հինգը Թուրքից կ՚առնէի, հինգն էլ Պավլէ աղէն կը տար։ Հեռի քեզանից՝ ււանակի աշխարք էր։ Հըմի ի՞նչ...

Դա նրա սիրելի նիւթն է, եւ միաժամանակ «չէզոք նիւթը», որով զբաղեցնում է ինձ...

Բայց դեռ տնտղում է ինձ, ատամի տակ գցում։ Դրա համար էլ իր «որջի բերանից» չի դուրս գալիս։

Յանկարծ համարձակւում եմ.

— Քանի՞ եզ ունես, բիձա՛։

Բիձան անակնկալի եկաւ ու պոչն իրան քաշեց։

— Քանի ե՞զ։

— Հա՛, քանի՞ եզ ունես,— սխմում եմ պատին։

— Է՛հ, ո՞վ ա իմանում։ Աստուած ինչքան որ տուել ա՝ էն ա իրա համար կայ։

— Բայց քանի՞ հատ է։

— Էտպէս մի չորսը կ՚ըլի,— վարագուրում է բիձան։

— Լաւ, քո ապրանքը չե՞ս իմանում ինչքան ա։

— Է, ի՞նչ մի բան ա, թէ ի՞նչ իմանամ։ Անասունի բանը ո՞վ ա հասկանում։ Էս «ղարաղ» ա, էս սար ու քոլ ա, գող ա, գէլ ա։ Տակին բա՞ն ա մնում, որ մարդ իմանայ քանիսն ունի, քանիսը չէ՞։

— Քանի՞ կով ունես։

— Կո՞վ,— շունչ է առնում,— մի 4–5–ը կայ։

Ուզում եմ «մարս» անել։

— Տասը հատ չի՞։

— Դէ որ սաղ տանը վրայ գցես, տասը շատ բան չի՛։ Հա, մի էդքանը — ու ըլռւում է։ Թէ Աստուած պահի... տեսնենք...

Անորոշութիւնը բիձայի տարերքն է։ Դա ինձ զուարճացնում է, եւ ես յարձակումը ծաւալում եմ.

— Ո՞ր կառավարութիւնն է լաւ։ Սա՞, թէ Նիկալայինը։

— Ձեմ իմանում։ Մենակ Նիկալայի ժամանակ խարճը քիչ էր։

— «Սրա՞նք» ոնց են։

— Դէ, ջահէլի համար լաւ ա, մին էլ մարդ մարդու վրայ չի կարայ ձեռ բարձրացնի։ Մենակ էն ա, որ խարճը շատ ա։

— Դաշնակցութեան ժամանա՞կ ինչպէս էր։

— Դաշնակցութեան ժամանա՞կ... (մտածում է) հաւտաս էդ ըսկի միտս չի։

— Թուրքի ժամանա՞կ։

— Թուրքի ժամանա՞կ։ Դրուստ ա, մարդ շատ փճացաւ, ամա խարճ չկար։

— Բիձա, ախր էն էլ կայ, որ սրանք հիմի ձեր գեղը քաղաք են դարձնում։

— Ընչի՞ս ա պէտք քաղաքը։

— Տներ կը շինեն, գործարաններ բաց կ՚անեն, ապրանքը կը շատանայ, ճամբաներ կը շինեն։

— Ինչ ուզում ա շինեն։ Էդ ամէնը պտտւում պտտւում՝ վերջը էլի գալիս ա խարճի վրայ։ Իմը գիտե՞ս ոնց ա։ Իմը խարճն ա. բեր էդ բեռը իմ վրից վերցրու՝ էն ա ամէն բան լաւ ա ու լաւ։

— Ապա ո՞ւմնից առնեն խարճը։

— Ով որ ունի։

— Ո՞վ ունի,— հետապնդում եմ ես,— ում մօտ գնաս՝ կ՚ասի

չունեմ։ Կ՚ուզե՞ս կառավարութիւն էլ թող չլինի։

— Ըլում ա, թող ըլի իրա համար։ Ինձ համար լաւ կառավարութիւնը նա ա, որ ինձնից խարճը չի առնի։

Լուսաբացից բիձան ոտի վրայ է։ Ման է գալիս բակում, կտրան, ներքնատանը ու դաշտամկան պէս դուրս է ածում իմպերիալիստական պատերազմը — վայրիվերոյ, անյարիր, անպէտք իրեր — քաղցր կաթի ժանգոտ տուփեր, մեխեր, տաճկական սուին, կարի մեքենայի կոտրած խողովակ, ձիու հին խամուտ, չրապնելի դատարկ ռումբ։ Մխրճւում է նրանց մէջ, խառնըխտորում, նորից ածում ներս։ Ինչի՞ է պահել, ի՞նչ է փնտռում նրանց մէջ...

Պառաւը ինչ որ չկայ մէջտեղը։ Դա ներքին արարած է. բերան-մերանը գլխի թաշկինակի մէջ թաղցրած՝ սուս ու փուս քջուջ է անում թոնրատանը։ Բայց, թէեւ ձայնը դուրս չի գալիս, ինչ որ տակից խէթում, կոցահարում է իր ամուսնացած աղջկան, որ աղքատ մարդու է գնացած, դրա համար այս տանը չեն սիրում ոչ նրան, ոչ էլ ամուսնուն։

Բատրակ է ամուսինը, բայց անեբանք նրան գործ չեն տալիս։ Կոմունիստներին դիմաւորել է 21 թուին։

Կինը, դառն աշխատանքից խունացած մի էակ, յաճախ է գալիս հօրանց, տան գործի մասնակցում ու մի կտոր հաց ճանկում։ Ցոյս ունի, որ ամառուան վերջը հօրանց տան բոլոր ամառուորների իրերն իրենք կը տանեն կայարան եւ հինգ ռուբլու չափ էլ դրանից կը ստանան։

Պառաւի ձայնը լսւում է այն ժամանակ, երբ անիծում է, իսկ անիծում է, երբ բարկանում է իր թոռան՝ Անուշի վրայ։ Սա մի կարմրաթշիկ, սեւաչեայ աղջիկ է, զարհուրելի չարաճճի։ Ամբողջ օրը ճպուռի պէս վխտում է ներս ու դուրս — կրակ է անում, աւլում, սրբում ու կչկչում։ Պիոներ է։ Աշխատելիս էլ բերանը չի դադարում. կամ երգում է, կամ ծիծաղում, կամ վիճում։ Ամէն բան վէճի առարկայ է։ Մի անգամ պատշգամից լըսւում էր։ Վիճում էին ձմերուկի առիթով, թէ ով է ստեղծել ձմերուկը։

— Դու կարծում ես Աստուած ա ստեղծե՛լ,— ճչում է Անուշը

պառաւի երեսնիվար։

— Աղջի, լեզուդ լալկի, սո՛ւս կաց, ասում եմ, է՛,— սաստեց պառաւը։

— Հա՛, սո՛ւս կաց, խի՞ եմ սուս կենում։ Դէ ասա՛ դո՛ւ ասա. ո՞վ ա ստեղծել։

— Ա՛ղջի, սրտա՛մեռ, Աստծու ստեղծած բանին կ՚ասեն թէ ով ա ստեղծե՛լ։ Բա որ Աստուած չստեղծի՝ ո՞վ կարա ստեղծի։

— Բնութիւնը։

— Բնութիւնը ի՞նչ բան ա, որ ստեղծի։ Բոյրդ թաղեմ, բնութիւնը կարա՞ ձմերուկի կորիզները էսպէս կարգով շարի։

— Ինչո՞ւ չի կարա շարի։ Մարդ է ստեղծում՝ ձմերուկի կորիզները չի կարա շարի՞։

— Սո՛ւս կաց, լեզուդ քե՛զ պահի,— զայրանում է պառաւը։ Բայց Անուշը պլին է կանգնել։ Զարացել է ու աւելի գրգռելու համար ճչում է.

— Աստ՞ծդ ինչ ա, Աստուած չկա՛յ, չկայ։ Դա հոգեւորականների ստեղծածն ա։

— Աղջի, Աստուածը քեզ թաղի, չես վախո՞ւմ, ձէնդ կտրի, է՞։

— Աստուած չկայ, Աստուած չկայ.— Այ, ասում եմ, բա խի՞ չի թաղում,— ճչում է աւելի բարձր Անուշը։

Պառաւը ճիպոտը խլեց ու այն է՝ հարուածն իջեցնում էր Անուշի գլխին, սա խաբ տուեց ու փախաւ։

— Այ կրակն ընկնի էն ուսումնարանը, հա՛, որ քեզ էդպէս ուսում ա տուել,— անիծեց պառաւն ու ընկաւ Անուշի ետեւից։ Մի երկու շրջան գործեցին, բայց պառաւը չհասաւ, թողեց Անուշին։ Սա ետ դարձաւ.

— Ի՞նչ ա, ի՞նչ ես մեր ուսումնարանին բան ասում։ Ապա ի՞նչ, ձեզ նման պըտենք ըլի՞լ։ Իմ ուսումնարանին մատա՛ղ, իմ ուսումնարանի պէս լաւ բան կա՞յ։ Նրան բան մի՛ ասի։

Ու գրկում է ինքն իրան, կչկչում անհոգ, ուրախ։

Մի տասը րոպէ անց՝ Անուշը արդէն թոնրատանն է, պղինձ է լուանում։ Հիմի էլ այնտեղից է կչկչոցը գալիս։ Ծիծաղի Ֆարրիկա։

— Անուշ ջան, էս ամանիքն էլ սրբի, ես գնամ էն դաշնիկից չորս կապեկը բերեմ։

— Շո՛ւտ արի։ Ես գնում եմ ակումբ։
— Աղջի, էսօր է՞լ ակումբ կայ։
— Ըստուց յետոյ շաբաթը երկու օր ակումբ կայ։
— Լաւ, կը գամ։
— Չէ, շուտ արի, շո՛ւտ, շո՛ւտ, ես չեմ կարա սպասի։ Տե՛ս, որ ուշացար՝ չեմ սպասի։ կը գնամ։
— Ա՛ղջի, կրա՞կ ես,— չարանում է պառաւը։
— Չեմ իմանում, չեմ իմանում։ Շո՛ւտ արա, ես գնալու եմ։ Կոլվարը բարկանում ա, չի թողնում ուշանանք։

Պառաւը գնում է։ Անուշն արդէն երգում է ու ամանները դզդզում։ Ու մի քանի րոպէում երգը փոխւում է արտասանութեան։ Վերնագիր է տալիս·

«Մենք Լենինեան սերո՛ւնդն ենք»։
Յետոյ ընդոստ–ընդոստ ու արագ վրայ է տալիս·
«Մե՛նք Լենին–եան
սեր–ո՛ւնդն ե՛նք»...

Վերջը փոխւում է ճառի։ Շարում է բառեր — համաշխարհային հակայեղափոխութիւնը... եւրոպական իմպերիալիզմը, յեղափոխութեան կարմիր դրօշը... Բայց ինչպէս երեւում է, նրա նախադասութիւններն այդպէս են կազմած եւ իրա համար ամփոփ իմաստ ունեն։

Ու յանկարծ զըրը՛նգ — պղինձը գլորւում է գետին, որի ձայնից սարսափած կատուն թոնրատնից փախչում է դուրս։

Ասում էին «Վասիլ, Վասիլ»՝ դեռ իրան չէի տեսել։ Անուշի հայրն է, բիձայի մեծ տղան։ Վերջապէս այսօր տեսայ։ Ճաշին եկաւ տուն սայլով։ Արդէն փողոցից լսում էր նրա ճիպոտի շառաչը եւ գոռոցը եզների վրայ·

— Եզն արի՛։

Այնպէս էր ճղաւում, կարծես կոկորդի մէջ արշիններով կըտաւ է ճոթռում։

Ահա ըռխալի հայհոյանքով սայլը քշեց բակը ու կանգնեցրեց·

— Ոհո՛ո՛ո՛... հո՞։

Ածխապան։ Հիմնական մի կեղտ ծոծրակին, երես–մերեսը

մազ-միրուքի մէջ կորած, դարմանոտ, փոշոտ: Ճենճոտ մի կարտուզ ունի աչքերին քաշած, կոզերոկը ականջի կողմը:

Աչքերը չեն երեւում, բերանն է բաց:

Բարկացած է ուրիշի վրայ եւ եզներին է թակում:

— Վասիլ, ի՞նչ կայ,— հարցրեց բիձան մօտ գնալով:

Վասիլը չի պատասխանում:

— Սռնին ա քիչ... բան ելել,— կամաց բացատրում է երիտասարդ հարեւանը, որ սայլի ետեւից գալիս էր:

Վասիլը նոր որ փրփրեց·

— Ես սրան սէլ եմ բան տալիս, սա տանում սար ու քոլ ա քըցում, սռնին կոտրում:

Ու բերանբաց նայում է սայլին:

Բոլորս մօտ ենք գնում: Մօտենում է նաեւ վրացի կայարանապետը, որ նրանց մի սենեակում հանգստանում է ամառը: Նա մանր ժպտով նայում է Վասիլին ու սայլին:

Վասիլը թքում-մրում է հարեւանին: Սա էլ յանցաւոր կատուի պէս սքլել է: Չի պատասխանում եւ եզներն է արձակում:

Վասիլը կարծես հրդեհ հանգցնելու է գնում: Րոպէ չունի: Ու եփւում է: Ոչինչ չի տեսնում, չի լսում:

— Բռնի, է՛, բռնի՛, բռնի՛,— գոռում է հարեւանին եւ ինքը գրկում է անիւը, որ դուրս քաշի:

— Դէ լաւ, դու էլ հերի՛ք արա, Վասիլ,— նկատում է երրորդ հարեւանը, որտեղից-որ յայտնուելով օգնելու:

Վասիլը կանգ առաւ, չխտկուեց ու ճակտին խփեց·

— Ես է՛շ եեեե՛մ... Ինձ նման էշը որ չըլի՝ էշի գինը հազար թուման կըլի: Մինը ինձ ասի, թէ էէէ՛շ, ո՞նց ես դու էս խոտհարի վախտ սէլդ տալի ուրիշի: Բռնի, է՛,— ծղրտում է նորից ու անիւը գրկում:

Վերջապէս հանեցին:

Ներս վազեց ու դուրս բերեց մի արկղ՝ լիքը մեխերով ու գործիքներով: Ուզում է սռնին մեխել:

Կայարանապետը քմծիծաղ է տալիս·

— Բան չի դուրս գայ, Վասիլ, սռնին կոտրուել է, պիտի օղակել տաս: Տար դարբնի մօտ:

Վասիլը բերանն աւելի է բացում եւ աչքերը չռում կայարանապետի կողմը·

— Հը՜՛ա՞... — քորում է ծոծրակը։ Ու յանկարծ յարձակւում է սռնու վրայ։

— Բռնի, բռնի... Ա՜խ, ի՞նչ ասեմ, ախր ինչի՞ համար եմ էչ...

Ակը հանում են եւ արագ-արագ տանում դարբնի մօտ։

Քանի գնում է՝ բիձայենք լարւում են։ Բոլորի ուշքը դաշտի կողմն է, ուր հասնում է հացը։ Եւ կարծես դա հաց չէ հասարակ, այլ մի հզօր, խորհրդաւոր էակ, որ բնութեան ապարանքներից գալիս է։

Ամէնքը պատրաստութեան մէջ են։

Վասիլը երկու անգամ սար գնաց եկաւ։ Պստիկ, տաս տարեկան Գէորգը սարից երկու կով բերեց տուն եւ եղած կովերին տարաւ սար մեն-մենակ։ Յետոյ Վասիլը գնաց խոտհարքի, վերջացրեց, եկաւ։ Խոտ կրեց ուրիշի համար։ Բեռ կրեց կոոպերատիվի համար։

Ամբողջ օրը տան բակում, թոնրատանը, կտերը, ներքնատանն անդուլ եռումուտ է։ Գալիս են, գոռգոռում, հայհոյում, անիծում, որը վերջանում է երեխաների թակով, թակում են ու գնում։

Ամենից շատ գոռում է Վասիլը, նրան ձայն է պահում Սիմոնը։ Բայց սա չի կարողանում տանը տիտիկ անել։ Մի ոտը սարումն է։ Ցարմար առիթին ծլկում է այնտեղ։

«Պարապ հացակեր» բիձան՝ գիժը, օրն ի բուն աշխատում է։ Լաւ խնամում է բոստանը։ Ոտաբոբիկ կլխճորում է ցեխերը, առուները դրստում։ Նրա շինարարութիւնն արդէն հասարակական բնոյթ է ստացել։ Նա առուն մաքրում է քարերից ու ճումբերից, ճամբի քարերը շպրտում է մի կողմ։

Ահագին տեղ ճահճի ցեխը հաւաքեց տարաւ, պատուար շինեց, ջուրը բանտ արեց ու մի ծորակ բաց թողեց, որ լուացքի ջուրը այնտեղից վերցնեն։

Ճահիճը ցամաքեց, էլ այնտեղից նեխած հոտ չի գալիս։

— Բիձա,— հարցնում եմ,— էս ինչո՞ւ ես բոլոր առուները դու մաքրում:

Թողնում է գործը, դառնում չեչտ աչքերով նայում ինձ.

— Ինձ հարցրու՝ «դու ո՞վ ես»:

— Դու ո՞վ ես:

Ժպտում է եւ զինուորի պէս արագ-արագ պատասխանում.

— Ինձ արեւը կարգել ա, որ առուն ծռեմ, մարդը դրստեմ, ջրերը հաւաքեմ, կարտոպը բաժանեմ: Ասա՝ ընչի՞ համար:

— Ընչի՞ համար:

— Ընդուր որ՝ մարդը ծուռն ա, առուն դրուստ, ջրերը բաժան, կարտոպը մի հատիկ: Աշխարքը մի բահի տակին ա,— եզրափակում է բիձան ու շարունակում է իր գործը:

Հարեւաններս մի քանի հոգի են: Վրացի կայարանապետը, նրա ռուս կինը: Ինքը հաստ բեղերով, սրամիրուք առողջ մարդ է, իսկ կինը սուս ու փուս արարած է՝ չաղլիկ ու գնդլիկ: Մի երկու անգամ գնաց Թիֆլիս, տանելով հետը ճուտ, ձու, իւղ, պանիր: Ծախեց ու վերադարձաւ: Ջրի տո՞մս ունի թէ ինչ...

Երկրորդ կենողը մի «բանուորի հայր» է՝ ինչպէս ասում են: Ցիսունից անց մարդ է: Սուրմալուեցի: Նախկին խանութպան: Փախստական է: Հիմի ձեռքը մէջքին, տէր ողորմիան յետոյքից կախ բոլթայ է տալիս բակում, դիմացի այգու պատի տակ: Անգործ է: Տղան երկաթուղու վրայ կոնդուկտոր է: Աշխատում է եւ հօրը պահում:

Խաղաղ ապրում են հայր ու որդի: Ընտանիքը ոչնչացած է ճամբին: Տնտեսը հայրն է: Առաւօտը վաղ գնում է ճամբին նըստում, որ հէնց միւս գիւղերից մթերք բերող գիւղացիները մօտենան գիւղին՝ առաջի գնողը ինքը լինի: Վարպետ է էժան ապրանք առնելու: Բերում լցնում է տունը իւղ, պանիր, ձու, բանջարեղէն: Կատարեալ տան պատրանք ստեղծելու համար սուրմալուեցին պատի տակին օջախ է սարքել ու ամէն օր ծխի մէջ խեղդում է բակը, չնայած որ տղան առատ նաւթ է ստանում, եւ կարելի է պրիմուս բանեցնել:

Ժամերով անշարժ նստում է սուրմալուեցին պատշգամում եւ աչքերը խփում: Քնած կը կարծես, եթէ տէր ողորմիայի հա-

տիկները չըխկոց չհանեն։ Մտածում է, մտածում ու յանկարծ վեր է կենում ու քչուածի պէս գնում է դէպի դիմացի այգու պատը, այնտեղ է նստում մի երկու ժամ, յետոյ գալիս մտնում է թոնրատուն, բիձայենց մօտ։ Յաճախ կարելի է տեսնել նրան բահը ձեռին, որով հաւաքում է կենդանիների թրիքը եւ տանում ծեփում պատերին։ Հին կենող է, 21 թուից։ Արդէն ընտելացած է բակին ու բիձայի ընտանիքին։ «Խորհրդային» կենող է, ուստի եւ փողի սենեակ է բռնել։

Նրա կեանքը մի անվերջ ձանձրալի կրկնութիւն է միեւնոյն բանի, ինչպէս իր տէր ողորմեայի հատիկները։

Ժամերը, օրերը, իրերը, մարդիկ — ամէն ինչ հատիկ-հատիկ գալիս-գնում են, գնում-գալիս են, բայց ամէն բան մնում է միեւնոյնը։ Նոր բան չկայ, ելք չկայ...

Ու քնում է մարդը։

Տղան շաբաթը մի անգամ լապտերը ձեռին տուն է գալիս։ Շատ անգամ հետը նաւթ է բերում։

Այդ ժամանակ «բանուորի հայրը» պատի տակ աւելի մեծ օջախ է անում, պղինձը դնում վրան։

Ու ծուխը բռնում է բակը։ Մի երկու անգամ նկատել եմ, թէ ինչու պրիմուս չի առնում. հեշտ է եւ մաքուր։ Տղան էլ է շատ անգամ ասել, բայց հայրը յամառում է.

— Օջախս մարել է «էնտեղ», էստեղ պիտի վառե՞մ։ Օջախը տան բարաքաթն ա։ Առանց դրան տունն ի՞նչ։

Տղան չի պնդում։ Նա շատ էլ այս տանեցի չէ։ Նրա տունը շարունակ գնում-գալիս է Թիֆլիս-Լենինական։ Այնտեղ են նրա ընտանիքի անդամները — իր ընկերները։

Ինչո՞ւ է գալիս տուն... Կարծես օտարական լինի։ Չի էլ խօսում այստեղ։

Ու հայր եւ որդի լուռ նստում են պատշգամում՝ ամէն մինը իր մտքով տարուած։

Անուշը օրուան որոշ ժամերի գնում էր պարապմունքի։ Պաուաը շատ էր փնթփնթում։

— Այ ո՛տդ կոտրի, ա՛ղջի, էլի՞ ա կորել։

Բայց նա պատրաստութիւն է տեսնում գնալու հարեւան քա-

ղաքը շրջագայելու։ Պիոներական կոլեկտիվի հե՛տ... Պառաւը չի ուզում թողնել․

— Հօրդ կ'ասեմ։

— Ասա, ես գնում եմ, էնտեղ կարմիր կնունք ունենք եւ հակակրօնական կամպանիա կայ։

— Աղջի, էլի բերանդ պատռեցի՞ր։

Մայրը մէջ է ընկնում։ Շատ է սիրում իր աղջկան եւ ամէն բանում պաշտպանում․

— Ձեռը վեր կալ, գնում ա՝ թող գնա։

Պառաւը, սակայն, յամառում է․

— Աղջի, հէրդ գայ ի՞նչ կ'ասի։

— Ինչ ուզում ա ասի, ես գնում եմ։

— Չի թողալ։

— Ո՞նց չի թողալ․ իրան հօ կպած չե՛մ։ Պիոները որ էդ տեսակ բաներ լսի՝ ո՞ւր կը գնայ։

Անուշի ընկերուհիները եւ մի պատանի՝ նեգրի նման սեւամարմին եւ համարեա մերկանդամ — պիոներներ եկան կանգնեցին այգու պատի տակ։ Անուշը վազեց նրանց մօտ, խօսեց ինչ որ ու ետ դառաւ․

— Ֆուրգոնով ենք գնում։

— Ճամբին կը մրսես, կը սատկես։

— Ո՞վ, ես սատկողը չեմ։

Մայրն առաջ եկաւ․

— Դէ, լա՛ւ, լա՛ւ, գնա՛։

Պառաւն էլ համաձայնեց․

— Գնա՛, գնա՛։ Սոսնանց Վասիլին, Նիկոլին, Գիքորին շատ բարեւ կ'անես, կ'ասես՝ նանին ասաւ՝ Աստուածածնայ սուրբ կիրակի օրը իրենց սպասում ենք, թող գաա՛ա՛ն։ Իմացա՞ր։

— Իմացայ, նանի ջան, իմացայ,— գնգում է Անուշի արծաթի ձայնը թոնրատնից եւ պատռած վերարկուն, հացի պաշարը ու երկար ձեռնափայտը խլած, Անուշը դուրս է վազում, գնում դէպի իր ընկերուհիները։

Իրիկնապահին Վասիլը փոշեթաթախ եկաւ տուն։

Թոնրատան չէմքին նստած, ինչ որ ջրալի կերակուր էր խըպըշտում, ու յանկարծ գոռաց (նա միշտ գոռում է․

— Բա Անո՞ւշն ուր ա։

Բացատրեցին։ Բերանը մնաց բաց, ու բեղերից կերակուրը կաթկթեց։

— Ո՞նց թողիք որ գնայ։

Պառաւն արդարացաւ.

— Ինչ քու աղջիկն ա ու իր մէրը — կարա՞ մարդ խօսք հասկացնի։

— Լաւ, լաւ, բան չկայ, Սոնանց տանն ա վեր գալու։

Բայց Վասիլը շատ է սիրում իր աղջկան։ Թէեւ ժամանակ էլ չունի զբաղուելու այդ հարցով։ Այդքանով փակեց հարցը եւ շտապեց շուկայ։

Վասիլին ամէն օր պատահում եմ անտառի ճամբին։ Խօսում ենք մէկ-մէկ։

— Աթա՞ր ես կրում, Վասիլ։

— Բա ի՞նչ, մերն էլ էդ ա։

— Ինչո՞ւ։ Փեյինը աթար չինելու տեղ՝ լաւ չէ՞ արտը պարարտացնես։

— Շատ դրուստ ես ասում,— լայնօրէն համաձայնում է Վասիլը,— փեյինն արտի հողին ա։

Ես պատմում եմ ինտենսիվ մշակութեան, ռացիոնալ տնտեսութեան մասին։ Տրակտորն եմ բացատրում, անտառների ու խոտհարքների մասին։

— Դրուստ ա, բա՞,— ասում է Վասիլը լուրջ կերպարանքով,— ինչքան մի բան լաւ անես՝ էնքան լաւ։

Յանկարծ ձայնը մեղմացնում է.

— Հըմի հրամանքդ էլ էս կոմունիստական մարդկանցից ե՞ս, թէ՞ հին մարդ ես։

— «Հին մարդ եմ»,— ասացի իր տերմինով։

Չորս կողմը նայեց մտերմաբար.

— Էս ի՞նչ բաներ են, էս անկարգ բաները, որ ասում են՝ ժամ չկայ, տէրտէր չկայ։

— Դէ ով հաւատում է թէ տէրտէր կայ, թող հաւատայ,— խուսափում եմ ես։

— Հա, էդ մէկը դրուստ ասիր։ Մեր պապական օրէնքը ոնց որ դրուած ա, էն էլ կը պահենք։

Մշուշապատ դուրս եկաւ։ Բայց Վասիլը «վերնաշէնքից» սկսելով առանց էվոլուցիայի թաւալգլոր ընկաւ «հիմնաշէնքը»։

— Նալոգը շատ ա, նա՛լոգը։ Էս նալոգը թողում չի թէ աչք բաց անենք։ Սաղ նալոգի ենք տալի։

— Դու ի՞նչքան ես տալիս։

— Ո՞վ ա իմանում... կա՛յ, էլի՞։

— Չէ, այսինքն՝ ի՞նչքան,— սխմում եմ ես։

— Երեսուն, քառասուն, իցցուն. հաշիւը կա՞յ։ Էն ա՝ ինչ ուզում են՝ գրում են։

Գլուխներս կախ՝ գնում ենք։

— Եղն արի՛,— ասում է ինքն իրեն Վասիլը, այնպէս, մեքենաբար։

— Վասի՛լ, ուզո՞ւմ ես պատերազմ լինի։

— Պատերա՞զմ,— ժպտում է ներողմտաբար,— տնաշէն, հօ մէջքներս կը կոտրուի։ Մինն ելաւ, հլա տակից դուրս չենք գալի։

— Բա որ մեզ զոռո՞վ կռուել տան։

— Դէ էն ա, լաւ կը քանդուենք, աշխարք կը վերջանայ։

— Ո՞վ պիտի կռուի։

— Ի՞նչ իմանամ։ Իմը ռանչպարութիւնն ա։

— Հա՛, ռանչպարութիւնը... Բայց այդ էլ մենակ ես անում մի կտոր հողի ու մի քանի կովի, եզան յոյսով։ Ջորային կայ, տաւարի ցաւ կայ, հազար ու մի փորձանք։

— Հալա կը գնանք, մինչեւ բարակելը։

— Որ բարակե՞ց։

— Դէ էն ա՝ կը կտրուի,— ասում է Վասիլը եւ հանգստանում։

— Ինչո՞ւ տնտեսութիւնդ չես միացնում ուրիշների հետ։

— Ո՞ւմ հետ։

— Քեզպէսների հետ։

— Հա՛, էդ էլ կ՚ըլլի. ամա ո՞վ առաջ ընկնի։

— Դո՛ւ։

— Ե՞ս... ի՛հ, մերը ըսենք պտի գնա՝ ոնց որ եկել ա։ Մեզանից բան չի դուրս գայ... Եղն ա՛րի։

Վասիլը տանջուած երեւոյթ ունի։ Ցախ-ցախ մօրուքի, դարմանի, ցեխի մէջ կորած դէմքը կնճռոտ կաշու պէս է։ Նրա աչ-

քերը պղտոր են, թախծալի: Նա յիմարական հայեացքով, բերանաբաց ինձ է նայում մի պահ, եւ նրա ճղրիկ աչքերի միջից դուրս է լողում մի նուրբ կասկածանք եւ մի չողչողուն արհամարհանք դէպի ինձ: Հողի միջից դուրս եկած այս մրրկած, տանջուած հանելուկը կողքանց գնալով, հայեացքը դցում է գետին եւ երբեմն միայն աչքի ծայրով մտիկ է տալիս ինձ: Նա իր հողի մէջ թաղնուած մտքեր ունի, բաներ է մտածում իմ մասին եւ սառը, իւրովի ժպտում...

Ո՞վ իմանայ՝ ի՛նչ, ինչո՛ւ...

Երեկոյեան բակը խաղաղւում է: Ամառաւորների մի մասը գնում է ակումբի կողմը, միւսը՝ քնում:

Բիձան մի երկու հայհոյանք թափթփելով դէս ու դէն՝ մըտնում է թոնրատուն, ուր նուաղում է թոյլ ճրագը:

Մի երկու ժամոց եւս, եւ ահա ճրագը ուշաթափւում է, ու բոլորը քնում են:

Ոչինչ չի վրդովում լռութիւնը:

Բայց բակը միշտ էլ քնած չէ:

Շատ անգամ է պատահում, որ պատերի տակով մի սեւինք է երերում, մլուլ տալիս դէս ու դէն:

Դա բիձան է. քունը առել է, հիմի վեր է կացել, բահը վերցրել, գնում է բոստանի կողմը ջուր գողանալու:

Առուի գլուխը անտառի մօտն է: Այնտեղից ներքեւ երակներով ճիւղաւորւում է դէպի բոստանները: Հերթով է ջրելը: Գիշեր-ցերեկ գիւղացիք հերթի վրայ են: Խարդախում են կարգը, խլում իրար ձեռից:

Մի առաւօտ զարթնեցի մի բարձր գոռոցից: Բակն էր եկել մի երիտասարդ եւ կատաղած հարցապնդում.

— Ջուրը խի՞ էք կտրել:

Բիձան ձեռը կոխել էր կռնատակը եւ քորում էր միայն:

— Քեզ հետ եմ, ջուրը խի՞ էք կտրել:

— Ի՞նչ ջուր,— հարցրեց բիձան ձայնը իջեցրած:

— Բոստանի ջուրը, «ի՞նչ ջուր»... խի՞ էք կտրել:

— Այ տղայ, էդ ընչե՞ր ես ասում, ո՞վ ա ջուրը կտրել:

Երիտասարդը աւելի կատաղեց.

— Այ քեզ ասում եմ, իմ ջուրը կտրել էք տարել ձեր բոստանը։

— Այ տղայ, չա՞ռ ես, ի՞նչ ես. ո՞վ ա քու ջրին ձեռ տուել, մենք մեզ համար միամիտ քնած։

— Լա՛ւ միամիտ քնած էք։

Բիձան դեռ անվրդով քորում է կռնատակն ու ներս մտնում։

— Այ տղայ, ա՛ստաս մեր գիժը ձեռ տուած ըլի։ Հէնց ա իմացել, թէ հերթը մերն ա։ Տնաչէն, դու էլ տեսար՝ կտրի, էլետ տար ձեր բոստանը։

— Գժի արած բան չի։ Թէ գիժ ա, բա ո՞նց ա մեր ջուրը ձեր բոստանը տանում։ Սա քու արած բանն ա։ Գանգատ կանեմ վրադ։

Բիձան դիմում է բեմադրութեան։ Հին օրերի սեւ սարսափն է ուզում տարածել իր չուրջը. ու գլուխը դուրս հանելով պատուհանից՝ գազանի կերպեր է ընդունում.

— Տօ դու ո՞ւմ վրայ ես գանգատ տալի։ Ինձ Հանեսանց Մացաք կ՚ասեն։ Հալա իմ վրայ գանգատ տուողը մօրը փորից չի դուրս եկել։ Գնա թէ չէ՝ ես ա դուրս եմ գալի մէյիդդ փռում, հաաա՛...

Ու ղռմռում է ծեր գամփռի պէս։

Քէօխվայական մանեօվրը, սակայն, չի օգնում։ Հին բեմադրութիւն է։ Եւ երիտասարդը սպառնում է.

— Շան սատակ կ՚անեմ. դուրս արի ու տես։

Դիոլոգը փոխւում է դուէտի։ Էլ իրար չեն լսում, միասին են հայհոյում, մինչեւ որ երիտասարդը հարցը համարելով ըսպառուած՝ մռմռալով հեռանում է։

Բիձան էլ զօրացրման է ենթարկւում ու բոլորովին հանգիստ դիմում է թոռանը.

— Գէորգ, գնա էն մեծ քրեղանը բեր։

Երկու չաբաթ կայ, որ գիժ-բիձան չի երեւում ոչ առուի մօտերքը, ոչ էլ բակում։

Ոչ ոք չէր նկատել այդ։ Ասենք՝ նրա խօսքը երբեք չէր լինում բակում։

Բայց մի անգամ նրա մասին ինչ որ լսուեց.

— Ասում ա՝ լաւը է՛ս էր, հազիր էն ա՝ կը մեռնեմ կը պըրծ-

նեմ,— բացատրում էր պառաւը մի խումբ կանանց, որ հաւաքուել էին թոնրատանը: Ասում ա՝ պտի հիւանդանայի, երկար քաշէի: Ըսենց լաւ ա:

— Երեւում ա, որ ուզում ա մեռնի,— նկատեց մինը:

— Էհ,— հառաչեց պառաւը,— լաւը էդ ա: Ընչի՞ հմար ա ապրում:

Ուրեմն գիժ–բիձան ինչ որ մեռնում է:

Սակայն բակում դրանով չեն զբաղւում: Ուրիշ իրարանցում կայ: Նաւթի կրիզիս: Կոոպերատիվը նաւթ չունի կամ քիչ է. խանութների առջեւ ադմկալի պոչեր են:

«Բանուորի հայրը» սպասում է իր նաւթին, որ որդին պիտի ուղարկի: Առանձին կենդանութեան մէջ է: Կայարան է գնում–գալիս:

Հարեւանները խօսեցին հետը: Խոստանում է ամէնքին էլ բաժին հանել նաւթից:

Եւ ահա, իրիկնադէմին, երբ նա ստացաւ նաւթը՝ բոլոր սպասողներս ուրախացանք: Ոմանք էլ ասացին, որ վաղը կոոպերատիվը նաւթ է ստանում: Դրանք չեն ուզում «բանուորի հօրից» ստանալ:

Բայց ես եւ մի քանի հարեւան վերցրինք տաս–տաս ֆունտ: Լա՛ւ տեղը սխմեց մարդը. ֆունտը 40 կոպէկ հաշուեց: Դու բանին մտիկ՝ եթէ կոոպերատիվը վաղը նաւթ ստանայ:

«Բանուորի հայրը» ինչ որ սուս ու փուս բաների հետ է: Սարից եկող թուրքերից մթերք է առնում, նաւթ է ծախում, չորեղէն փոխում, մանր–բունր բաներ է սաղացնում: Ինչ որ գործեր ունի, պտիկ, բայց բաւական մութ:

Բայց, ի հարկէ, երբ հետեւեալ օրը իջայ բակը եւ գերանի վրայ նստած զրոյց էինք անում նրա հետ՝ խաղաղ, նահապետական բնոյթ էր կրում մեր զրոյցը:

Ես էի, բիձան, մի հաշուապահ հարեւան, որ երբեմն գալիս էր մեր բակը:

«Բանուորի հայրը» պատմում էր պատերազմի անցքերից:

«Անցանք Ալաշկերտ զօրքի հետ: Մի վախտ էստեղ առուտուր արինք, վերջը թուրքը որ զօռեց՝ խանութը փախցրինք Դիադին, էնտեղ էլ որ զօռեց՝ փախցրինք Իգդիր: Քիւրպը խերով ժողովուրդ ա: Լաւ առուտուր ունէի, տուն–տեղ, ընտանիք:

փճացաւ գնաց, եկանք դառանք գաղթական: Հինգ տարի է էս սանն ենք: Դառել ենք տնեցի: Աշխատողը տղէս ա, ես պարապ: Առաջուանը ո՞վ ունի:

— Առաջուան ի՞նչը ասես որ լաւը չէր: Հա՛յ գիտի Աղբաբա,— հառաչում է բիձան:

— Լա՛ւ կաշառք կար, հը՞,— ծիծաղում է «բանուորի հայրը», հրահրելով բիձային, գիտենալով նրա սիրած նիւթը:

Բիձան սրտաշարժւում է.

— «Կաշառք կա՛ր»: Տօ՛, աղքատն ո՞վ էր հարցնում, մշակն ո՞վ — ուտող ուտողի էր, տանող տանողի: Հիմի ի՞նչ. ահա երեք տուն ունեմ — մէջը փուճ, օխտը հատիկ: Չորս տարի առաջ այ էս մարդը (դառնում է ինձ ու ցոյց տալիս «բանուորի հօրը») ամիսը մի փունտ հաց էր քրեհ տալիս: Վերջը չինեց ամիսը տաս չահի: Հըմի տալիս ա մի մանէթ: Գնա ապրի:

— Արա՞,— հաստատեց «բանուորի հայրը»,— հիմի աւելացըրել ենք:

Բայց ապաւորութիւնը դըրսեւելու համար տէր ողորմեան չխչխկացնում է եւ աչքերը մի կողմ դարձրած՝ վեր կենում տեղից: Ամաչում է:

— Է՛,— հառաչում է բիձան,— թէ կ'աւելացնի՝ ինքն ու խիղճը, թէ չէ՝ ինքը գիտի:

Ու խէթ նայում է «բանուորի հօրը», որը խոցւում է: Նա էլ հառաչում է եւ մշուշներ է բաց թողնում:

— Բանը փողը չի,— շեշտում է հատ-հատ, աչքը շարունակ հեռուն,— բանը ճշմարտութիւնն ա, դրուստութիւնը: Թէ չէ՝ փողը, տունը, կայքը, հարստութիւնը անցաւոր, փուճ բաներ են աշխարքիս երեսին:

Ու աչքը հեռուն՝ շուացնում է՝ համրիչը ցուցամատին փաթաթելով եւ օդի մէջ պտտացնելով:

Մինչեւ մութն ընկնելը խօսում են:

Եւ դեռ երկար ժամանակ մթան հետ մէրուող նրանց սիլուէտների կողմից լսւում է նրանց զրոյցը:

— Ասըմ են՝ կոմինեն*) որ ըլի՝ լաւ կ'ըլի,— յօրանջում է բիձան քնկոտ ձայնով: Ա՛յ տղայ, ո՞նց լաւ կ'ըլի: Որ բաժան

*) Կոմունա:

եմ, իմ հացին, իմ ջրին՝ միսս ուտում են. բա որ մի տեղ ըլենք՝ ի՞նչ կ'անեն:

— Կոմինեն լաւ բան ա՝ թէ ամէնքն էլ աշխատեն,— պատասխանում է «բանուորի հայրը»,— բայց աւազա՛կ են, չե՛ն աշխատի: Մինը կ'աշխատի՝ միւսը կ'ուտի: Աւազա՛կ են:

Եւ աւազակ արտասանում է փափուկ ք-ով, «աւազայք»...

— Հըմի ինքը հանգստացել ա՞:

— Ո՞րտեղից, հըլա հոգու հետ ա:

Հարեւանի կնիկն է. խօսում է պառաւի հետ: Մեծաքանակ, արմատական մի կնիկ, զարհուրելի առողջ: Խօսքը գիժ-բիձայի մասին է: Հարեւանի կնիկը գող կատուի պէս աչքերը չռած՝ հետաքրքրւում է.

— Ոչխա՞ր էք մորթելու:

— Ի՞նչ իմանամ, այ բալամ, ի՞նչ փողը տամ գլխիս: Զմորթած ըլիլ չի, մորթե՛նք... ո՞նց ենք մորթում:

— Ընչի՞ց ա մեռնում:

— Ի՞նչ իմանամ, թէ ասեմ աղիքը հլորուեց: Աստծու բան ա, ո՞նց իմանաս:

Դեռ մինչեւ ճաշ դըրացի կանայք ղուվռում էին թոնրատանը:

Բիձան սաստիկ կենտրոնացած էր եւ մտահոգ՝ ներս ու դուրս էր անում:

Գիժը ծախսի դուռ էր բաց անում:

Վասիլն էլ տուն եկաւ: Նա բերանը բաց կանգնեց թոնրատան դըրանը, քիթը խպշտեց, թեւքով սրբեց երես-մերեսը: Քըրտնած էր եւ գործով սաստիկ զբաղուած:

Ներս գնաց թոնրատուն: Ղուվռոցը կտրեց: Ինչ որ խօսեցին այնտեղ:

— Տէրտէրի հօր մեռելն էլ ու նրա օխտը պորտի էլ, ինչ անում էք արէք,— շպրտեց Վասիլը դուրս գալով ու չտապեց դաշտ:

Երեւում էր, որ ներսը խօսք կար ոչխար մորթելու գժի հոգեհացին:

Վասիլը հակառակ էր:

Ուրեմն բիձան մեռե՞լ էր: Դուրս եկայ ստուգելու:

— Բիձան մեռե՞լ է,— հարցրի տանտիրոջս:

— Հալա չէ,— մռայլուեց նա։

— Ցեստո՞յ։

— Ցեստոյ էլ ի՞նչ։ Էն ա մեռնում ա։ Մի չարաթ պառկեց։

— Բա, ճար չարի՞ք

— Ի՞նչ ճար։ Թէ մեռնում ա՝ էն ա կը մեռնի։ Մարդ պըտի մեռնի՞ թէ չէ։

Բանից դուրս է գալիս, որ իրենց սայլը անկիւնում ճամբան ծռել էր եւ պատին սեղմելով գժին՝ փորը ուժով տրորել էր՝ վնասելով երեւի աղիքները։

— Մարդ որ փտած ըլի, էն ա՝ նրան մի սէլ ա պակաս,— եզրափակեց բիձան։

Ու հանգիստ հեռացաւ իր բանին։ Հիւանդով զբաղուող չկայ. նա իր համար այնտեղ պիտի մեռնի։ Այդքանը միայն։

Գնացի բոստանը։ Գիժ–բիձան ապրում է մի քողտիկում, որ շինուած է ուրիշի տան պատի տակ։ Դա մի պստիկ տուփ է, որ գիժ–բիձան է շինել։ Ճարտար սարքել է, յարմարեցրել։ Դուռ, պատուհան, տախտ, դարակ։ Միայն փոքր է դագաղի պէս։

Դուռը բաց էր։ Եւ գիժը աչքերը առաստաղին՝ հեւում էր։

— Բիձա, ո՞նց ես։

Չի պատասխանում։ Կամ ուշքը վրան չէ, կամ անօգուտ բան է համարում խօսելը։

Դէմքը սրուած է, աչքերը ապակի։

Երեւում է՝ կը մեռնի։

Կանչե՞լ բժշկին թէ ոչ։

Անօգուտ է, բայց որոշում եմ կանչել։

Եկայ տուն։ Բիձային ասացի, որ բժիշկ եմ կանչել տալիս։

— Օրը հասել ա, ի՞նչ բժիշկ։ Պըտի մեռնի։

Տոմս գրեցի, տուի հարեւաններից աղջկան, ուղարկեցի բժըշկին։

Բիձան զուարճանում է «ուսումնական» մարդու «հավէսի» վրայ։ Քմծիծաղ է տալիս։

Երեկոյեան բժիշկը եկաւ.

— Չի ապրի, ուշ է։

Տէրտէրը քուցին–քուցին անելով ներս ընկաւ բակը, աջը տուեց պառաւին ու հարսներին, նստեց եւ բարձր չունչ առաւ:

Տրամադրութիւնը բարձր էր: Թաղումից յետոյ, իբրեւ մի մեծ չահատակութիւնից յետոյ, որ նա կատարել էր, հիմի եկել էր հանգստանալու:

Նրա հետ էր եւ տիրացուն. հնոտի, բայց առողջ մի տղամարդ: Տէրտէրի ծալած չուրջառը դրեց պատին եւ հոտոտելով, սկսեց աչքերով խուզարկել չորս կողմը:

Գիւղացիները իրար ետեւից չարան–չարան հաւերի պէս թրըփալով իջան բակը եւ մէկ–մէկու քամակ բոթելով՝ առաջ գնացին, պառաւին «Աստուածածնից մխիթարուես» ասացին ու ձեռները լուալով նստեցին սուփրի չուրջը:

Սկսեցին ուտել: Այնպէս լուրջ ու հիմնաւոր, կարծես ցեմենտի պատ էին չարում: Առաջ ցած էին խօսում, քիչ յետոյ ձայները բարձրացրին:

Բակը կենդանացաւ: Հարեւան երեխաները կիտուեցին կըտուրներին եւ սկսեցին ղժվժալ:

Մինչեւ անգամ ինչ որ չներ յայտնուեցին եւ ահռելի սեւ դնչերը տնկած սկսեցին աչքերը սեւեռել դէպի սուփրան:

Հազիւ մի ոսկոր թռչում էր նրանց կողմը՝ եասավուլների պէս հասնում էին ու հափռում:

Սեղանը աշխուժացաւ:

Վատորակ գինին ազդեց: Դէմքերը կաս–կարմիր ձմերուկի պէս լցուեցին արիւնով: Ու մի ստամոքսային մոլուցքով տարուած խժռելով ամէն ինչ՝ սկսեցին կատակել, խօսել առօրեայ դէպքերից ու իրենց գործից: Վասիլը, սակայն, մռայլ էր եւ լուռ ուտում էր:

«Բանուորի հայրը» խօսում էր Զակտպոյի մասին եւ համեմատելով բանկոտպի հետ՝ գտնում էր ,որ Զակտպոն «զոռում է»:

— Աղը չկայ, աղը՛, դու աղն ասա,— բերանը բացեց Վասիլը,— առանց աղ հրեեե՛ն տաւարը սարում կոտորւում ա:

— Տաւարը դրանից չի կոտորւում, է՛, դրանի՛ց,— ձայն է տալիս մի ճենճոտ գիւղացի,— ես ասում եմ՝ էն չան որդի համզաչիմանցին իր տաւարի ցաւը գցեց մեր մէջ:

— Բա, դոխտո՞ւրն ինչ ա ասում:

— Այ, էդ դոխտուրի հոտը կտրի հա՛, դոխտուրին ո՞վ ա

տեսնում,— ձայն տուեց Վասիլը:

Մինը միւս կողմից.

— Ա՛ տնածակ տէրտէր, խանութդ ե՞րբ ես սարքում, խանութդ:

— Էս ա սարքում եմ, կաց մի տղէս գայ Թիֆլիսից, որ կաղնացնեմ խանութում:

Վերջապէս մէկ-մէկ սկսեցին նկատել, որ կշտացել են, եւ այլեւս ոչ մի հնար չկայ ուտելու: Ականջները տնկուեց:

Ետ նստեցին, որ չունչ քաշեն:

Այդ ժամանակ տէրտէրը վեր կացաւ բաժակը ձեռին: Միւսները հետեւեցին նրան: Նա սկսեց մրթմրթալ մի աղօթք:

Ցետոյ — «Աստուած լուսաւորեսցէ Սարգսի հոգուն»: Նոր յայտնուեց, որ գիժը անուն էլ է ունեցել — Սարգիս:

Ապա բոլորը խմեցին Սարգսի ողորմաթան ու բխկալով հեռացան իրենց տները: Վասիլը Թոկն առաւ ու չտապեց անտառ:

Բակում նոր հիւրեր են եկել: Բիձայի որբեւայրի հարսն է եւ մի անծանօթ գիւղացի: Սարից իւղ ու պանիր են բերել ձիով:

Կոճղի պէս պնդակազմ կնիկ է, քամուց ու արեւից մրկած դէմքով: Պիրկ ձեռքերով քանդեց Թոկը, բեռները արագ դրկեց, վազեցրեց, տարաւ տեղաւորեց, ձին տարաւ ախոռը: Բոպիկ է ու ման գալիս գետինը դմբդմբացնում է: Չի խօսում, այլ հրամաններ է արձակում իր հետ բերած գիւղացուն, որը ուզում է օգնել նրան, բայց չի կարողանում ետից հասնել: Դա չոբադեալցի է, սարում մշակ է մտել նրանց մօտ:

Մի քիչ դէս ու դէն արաւ ու մօտեցաւ ինձ.

— Հրամանքդ կաղզուանցի՞ ես:

(Ինչո՞ւ պիտի կաղզուանցի լինեմ):

Ասացի որտեղացի լինելս եւ ապա հարցրի.

— Ի՞նչ կայ:

— Հէչ, գիտես Թը ճանանչ ես:

Ոտների վրայ տրորւում է: Ցետոյ նստեց պատշգամի սանդուխին:

— Ներողութիւն, եղբայր, քեզի մէ բանըմ պիտի հարցնեմ: Կաթի մաշինան, մէկ էլ մէ տրախտորըմ որ ուզենանք բերել

տալ, ի՞նչըղ պիտի էնենք։

— Ո՞վ է ուզում բերել տալ։

— Ուզող կայ սարը։ Ես էլ մէջն եմ։ Գ՚ուզենք կաթի արտէլ բանանք։ Մենակ մաշինան չիտենք թա՞նգ է, աժա՞ն է։

— Ուզում էք տնտեսութի՞ւն սկսել ։

— Հա։ Մաշինի պանիր ու կարագ գ՚ուզենք հանէ։ Հրամանքդ տեսե՞լ ես կաթի մաշինա։

Բացատրում եմ։ Տորադեալցին ըստ երեւոյթին մի քիչ ծանօթ է կաթնատնտեսութեան եւ հիմի աւելի մանրամասն է ուզում ծանօթանալ սեպարատորին եւ տրակտորին։ Նա ինձ ուշադրութեամբ լսում էր։ Հարցրեց, թէ ո՛րտեղից կարելի է ձեռք բերել եւ ի՛նչ արժէ։ Ասացի՝ գները չգիտեմ, բայց եթէ դիմէք գիւղկոոպին՝ նա ձեզ կ՚օգնի այդ հարցում։ Հասցէն տուի։

— Էդ տրախտորը որ բերել տանք՝ մենք կընա՞նք բանեցնէ։

— Հազիւ թէ․ պէտք է սովորէք։

Եւ բացատրեցի, որ լաւ է շատուոր լինեն։

Շատ հետաքրքիր եւ աչքաբաց մէկն էր երեւում։ Ուստի եւ սկսեցի գիւղատնտեսութիւնից խօսել։ Բերի օրինակներ Շուէյցարիայից, Դանիայից։

Նա սկսեց հարցեր տալ։ Նրան շատ զարմացրեց դանիական կովերի քաշը, մեծութիւնը։

— Եա, էդպէս էլ կով եղնի՞։ Ծը, ծը՛, ծը՛, ծը՛, ծը — ծըվծըուացրեց լեզուով եւ գլուխը թափ տուեց։

Հետզհետէ անցաւ նորանոր հարցերի։ Իմ բացատրութիւնները լսում էր, բայց ինչ որ միտքը զբաղուած էր նաեւ ուրիշ բաներով եւ առիթներ էր որոնում կարծես՝ հարցնելու։

Ցանկարծ խօսքը շուռ տուեց․

— Վարժապե՛տ, մէ բանըմ հարցնեմ։ Քափանակի դեղ գիտե՞ս։

— Քափանակի՞ — փորի ճիճվի՞։

— Հա։ Տափակ ճիճվի։

— Դո՞ւ ես հիւանդը։

— Չէ, էնտեղ սարը մէ սրտակից ընկեր մ՚ունիմ՝ էնիկ ունի․ պիտի թափեմ։

— Դրա դեղը սանտոնինն է։

— Հա՛, ըշտը ատ ըսած դեղը։ Ըսեմ՝ քովդ կ՚ունենաս։

Ասացի կայ — իսկապէս էլ կար — բայց հին էր նախ եւ ապա ի՞նչպէս տայի։ Բացատրեցի, որ դեղատնից կարելի է ձեռք բերել։ Դժուարացաւ։ Դէմքը կնճռոտեց։ Յետոյ լռեց.

— Ես որ երթամ, կուտա՞ն։

— Չէ, պիտի դիմես բժշկին։

— Է՞, ո՞վ գլուխ ունի բժշկին երթալու, գիշերս պիտի սարն երթամ։ Քովդ ունիս՝ տուր։

— Շատ լաւ, կը տամ։

Շատ ուրախացաւ.

— Իսկ մայասուլի եա թէ չէ՝ սուսանակի դեղ չունի՞ս։

— Չէ։ Ինչի՞դ է պէտք։

— Ինձի պէտք չէ։ Փառք Աստծու, խստակ եմ ու դերդսատան ունիմ։ Մենակ թէ մեր սարը Թուրքեր շատ դուքան քովս՝ կը խնդրուին։ Չե՞ս կրնայ բժիշկէն ատ դեղերը առնէ։

— Չէ, չեմ կարող։ Հիւանդը ինքը պիտի գնայ բժշկի մօտ։

— Լաւ. քափանակի դեղը տուր։

Տուի փոշին, հինգ թէ վեց հատ։

Երկնուց դետին շնորհակալ եմ,— ասաւ ու ծոցը դրեց։

— Այդ սեպարատորի ու տրակտորի մասին այս կ՚ասեմ,— ասացի ես,— որ եթէ կոլեկտիվ դիմում լինի՝ բան դուրս կը գայ։

— Հա՛, կը մտածենք,— պատասխանեց անտարբեր՝ ուշքը ուրիշ տեղ։

Նա փչում էր «իրենց» մտայնութեան մասին. ես զգացի, բայց լռեցի։ Ինձ զուարճացրեց այդ շորագեալցի հեքիմի տրեուկը։

Իրիկնադէմին, երբ ճամբայ էր ընկնում դէպի սար, միամիտ եղանակով յիշեցրի կրկին կոլեկտիվ տնտեսութիւնը։

Շորագեալցին բաց արեց կարտերը.

— Ջա՛նըմ, ի՞նչ տրախտոր, ի՞նչ բան, ես քոստ ոչխարըմ չա՞տ ունիմ՝ կաթի մաշինա առնեմ։ Տեսնինք, վրէս գրէ,— ու խորամանկ ժպտալով՝ աչքով արեց։

Լուր եկաւ, թէ պիոներները ֆուրգոնով վերադառնալիս՝ մի ֆուրգոնի հետ երեսուն հոգի թափուել են ձորը։

Գիւղում իրարանցում է։ Գործկոմից ձիաւոր գնաց։

Շօսէյի երկարութեամբ մայրերի ու եղբայրների մի շարան ձգուեց դէպի այն ձորը։

Վասիլը թողեց գործն ու վազեց։ Բայց Անուշի մայրը հանգիստ ժպտում է․

— Սուտ կ՚ըլլի։ Միշտ, հէնց որ պիոներները ոտը դուրս են դնում գեղից, էդպէս բաներ են խօսում։

Ճաշից յետոյ երկար փողոցի կողմից լսուեց դալար ձայներից հիւսուած մի «ուռա»։ Պիոներները շարքով–կարգով քաղաք էին մտնում։ Ոտով էին գալիս, իսկ ետեւից ֆուրգոնները ծաղիկներով ու ճղներով զարդարած։ Նրանց մէջ փոքրեր էին նըստած եւ մի քանի ծնողներ, որ դէմ էին վազել «աղէտի վայրը»։

Փողոցը լցուեց ուրախացած ծնողների ու հանդիսատեսների բազմութեամբ։

Պիոներները շիկնած էին ու սեւացած եւ աջ ու ձախ պատ կազմած բազմութեան միջից լուրջ անցնում էին ու միայն գոչում․ «ուռա՜ա՜ա՜»…

Լուրը սուտ էր դուրս եկել։ Պիոներներն իմացել էին «պրովոկացիան», ուստի եւ բարկացած էին մտնում քաղաք եւ իբրեւ հերքումն եւ ապացոյց գոչում․

— Ուռա՜ա՜ա՜…

Դեռ չեն ցրւում․ գնում են ակումբ, որ այնտեղից ցրուեն տները։

Մի քան րոպէից յետոյ Անուշը կարմիր խնձորի պէս ներս գլորուեց բակը, ուրախ–ուրախ գրկեց մօրն ու յետոյ կապոցը քանդելով սկսեց բացատրել, որ գիւղի մութ ուժերը պրովոկացիա են սարքել իրենց մասին։

— Մենք ցոյց կը տանք այդ մութ ուժերին։

— Աղջի՛, գլխամեռ, էդպէս կը վախացնե՞ն,— խօսեց պառաւը։

— Ո՞վ ա մեղաւոր․ ընչի՞ էք լսում հակայեղափոխականներին։

Անուշին յայտնեցին գիժ–բիձայի մահը։ Նա վախեցած աչքերը չռեց, եւ արցունքները ցայտեցին․

— Վա՜յ, բիձե՜ն… Իմ խեղճ բիձե՜ն…

Ու գնաց դէպի բոստանը։ Ի՞նչ էր ուզում գտնել այնտեղ։

Երկու օր յետոյ մի թոքախտաւոր պիոների թաղում կար: Ամբողջ կոլեկտիվը գնում էր դագաղի ետեւից:

Ցուղարկների մէջ էին նաեւ տանտիրոջս ամուսնացած աղջիկը եւ նրա ամուսինը:

— Ազգակա՞ն են,— հարցրի մի պիոների:

— Ոչ, համակրող են,— պատասխանեց կարճ ու լուրջ, կարծես դա մի քաղաքական ցոյց լինէր:

Փողոցի ծայրին կանգ առան: Բազմութիւնը շրջապատեց դագաղը:

Անսպասելի կերպով Անուշը բարձրացաւ մի քարի: Ի՞նչ, պիտի խօսի՞: Այո՛: Խօսում է. «Ընկերնե՛ր: Մեր ընկեր Սոսին, պիոներական մեր կոլեկտիվի ակտիվ ընկեր Սոսին, այսօր հեռանում է մեզանից: Բայց մենք չենք յուսահատւում: Նա մեր մէջը դեռ կենդանի է: Մենք նոր կեանքի զաւակներն ենք: Մեզ պէտք չեն տէրտէրները, տիրացուները: Մենք մեր ընկեր պիոներին այսօր թաղում ենք նոր թաղումով: Այստեղ չկան տէրտէրներ, այստեղ չկան սգաւորներ, այստեղ ներկայ են պիոներական ոգին եւ կարմիր դրօշակը: Ուրիշ ոչինչ»:

Անուշի դէմքը վառւում էր եւ ձայնը պայթում կոկորդի մէջ: Հէնց որ վերջացրեց՝ արագ ու լուրջ իջաւ քարից:

Չգնացի առաջ: Օրկեստրը նուագեց մահուան քայլերգը, եւ յուղարկաւոր պիոներները հեռացան:

Վերադարձայ շուկայ, որ այնտեղից տուն գնամ:

«Ամերիկեան» բազարում ինչ որ ղովոց կար: Մի մարդու էին քաշքշում: Վերարկուի կռիւ էր:

Օրերը քանի գնում՝ կատաղում են: Շոգը կծում է: Սարերի ատամնաւոր բերդերի աշտարակներին ամպեր են ճմկոտում, յօրանջում, յետոյ սեւակնած, հսկայական գորտերի պէս կորալող տալով սուրում երկնքի ջրերի մէջ:

Վախ կայ, թէ կարկուտ կը գայ:

— Հը՞, բիձա՛, հունձի ժամանակը չի՞ հասել:

Բիձան տարակուսած մտիկ է տալիս ամպերին եւ կիսաձայն, կարծես վախելով, թէ նրանք կը լսեն.

— Հասել ա, բա հասել չի՞։ Մշակի բանը դժուար ա — թանգ ա, ճարւում չի։

Նստել է քարի չեղջի վրայ, բահը գցել առուի շրթին եւ ցորենի հասկ է փշրում։ Բաց-դեղին հատիկներ են։ Բիձան կենտրոնացած զննում է ու յետոյ ծեղերը փչում։ Ահա մի հատիկ ընկաւ գետին։ Բիձան ուզում է վերցնել, եւ հաստ մատները հազիւ են բռնում հատիկը։ Նստում եմ ծառի շուաքին, խոտի վրայ եւ թինկը տալիս։ Նայում եմ բիձային։ Նա գունդ ու կծիկ դառած՝ կռացել է իր բռան վրայ, եւ միրուքը ջրվէժի պէս թափւում է այդ կոշտ ու կնճռոտ բռան վրայ, որ կաշեպարկի է նման։ Հաստ։ Ի՞նչ է որոնում այդ հատիկների մէջ, որ այնպէս զննում է — չգիտեմ։

— Բիձա, ասում ես՝ մշակը թանգ է. բա, ինչի՞ տղաներիդ հետ չես հնձում։

— Տղաներիս մինը տաւարին ա մտիկ տալիս, մինն էլ, տեսնում ես, անջախ ա հասցնում։

— Այս երկու տղադ ե՞ն։

— Չորսն էին։ Երկուսը էս կռուին սպաննուեցին։

— Ո՞ր կռւում։

— Ի՞նչ իմանամ, էնքան կռիւներ ելաւ։

— Էդպէ՛ս։ Ուրիշ տղաներ է՞լ ես ունեցել։

— Բա ի՞նչ... (հառաչում է) նրանք որ տեղն ըլէյին՝ էն ա մշակին տուածը տանը կը մնար։ Հիմի արի՛ մշակի օրականը — տուր, հացը — տուր։ Ո՞րտեղից։

— Է՛, հունձ է, պիտի արուի։

— Պիտի արուի, բա՞։

— Շատ ես աշխատում, բիձա։

— Շատ եմ աշխատո՛ւմ։ Տնա՛չէն, ասա դարուն-ձմեռ ա՞չք ենք բաց անում։ Բա որ չաշխատեմ, էս հողը ինձ հա՞ց կը տայ։ Խեղդւում ենք ու զոռով հացը միջից հանում։

— Մենակ ես, էնդուր է էդպէս։

— Մենակ եմ, բա՞։ Մենակ եմ ու ո՛նց մենակ։ Քիչւոր եմ։ Որ մին ընկայ՝ էլ վեր կենալ չեմ։ Մին էլ էն կայ, որ ուտողս շատ ա, ուտո՛ղը... Դա ա տունս քանդում։ Մենակ եմ... — կրկնում է ու կրկնում հատիկները խառնում։

— Լաւ,— դիմում է նա կտրուկ,— որ չաշխատեմ, հասնո՞ղս

ով ա։

— Ո՛վ։ Նոր կարգը։

Բիձան մշուշոտ հայեացքը գցում է հեռուն ու մտածում․

— Չեմ իմանում։ Էդ նոր բան ա։ Ամա ինչ էլ որ ա՝ էդ բանը ո՞վ պտի բերի իմ դուռը։

— Ո՞վ։ Անուշը։ Նա հօ քեզանից է։

— Հա, ինձանից ա։

— Հաւատո՞ւմ ես, որ քեզանից եղածը քեզ համար նոր կեանք բերի։

— Ո՞վ ա իմանում։ Ժամանակը ամէն բան կ՚անի։ Ասում ա՝ «հար զադ զամանա բախար, զաման հէ՛չ բիր զադա բախմիյօր»․ ուզում ա ասի՝ «ամէն բան ժամանակին ա մտիկ տալի, ժամանակը իսկի մի բանի մտիկ չի տալի»։

— Էդպէս է, բիձա, էդպէս է։ Այ իմ բռի միջի հողը։ Ամէն բան սրա միջին է․ հացը, խոտը, երկաթը, ես, դու, ամէնքը։ Սրա միջին ամէն բան փոխւում է։ Մինը փտում է, մինը ծլում։ Ժամանակն էր, որ հիմի էսպէս բերեց։

Բիձան իր սահանքաւոր միրուքը դէպի ինձ դարձրած, կասկածամիտ աչքերը սեւեռած՝ ականջ էր դնում։

Դիմացս արտերը դեղնին են տալիս եւ ոսկու հեղեղի պէս լցուել են չորս կողմ ու կանգ առել։ Ճպուռները նրանց մէջ «ճը՛ռ–ճը՛ռ»՝ լարում են իրենց ժամացոյցները։ Երկնքում հըսկայական ոսկէ սարդը խաղում է իր լուսեղէն թելերի հետ։

Հազարաւոր մեղուներ, այլանդակ բզէզներ ծաղիկների եւ ցօղունների մէջ ինչ որ տնտեսութեան հոգսի ետեւից են ընկած։ Խուզարկում են, չտապում։ Հողը հարբել է, խանդոտում եւ մոլուցքի մէջ բերում է բարիքը։ Նրա ուժեղ հոտը քաշում է իրան։ Բռնում եմ, փշրում, զննում։ Ոչինչ չի երեւում — մանր թելեր, աւազի հատիկներ եւ սեւ զանգուած, միապաղաղ, կո՛յր, մո՛ւթ։ Որի մէջ փտում–ծլում, փտում–ծլում են հազարաւոր էակների դիակներ։

Ինչպէս այս բիձան, նոյն այդ հողից շինած բիձան։ Ինքը՝ հողը։ Նայում եմ նրա ջլուտ դէմքին, ձեռքերին։ Այո՛, սա հողից է զանգուած․ սա հիմի փտում է, որպէսզի ծաղկի Անուշը…

Սարի կողմից անտառն է․ ու թէեւ մի հարիւր քայլ է հեռու, բայց լսում եմ նրա տարերային խօսուածքը — միլիոն տե–

րեւների ու բղէշների լեզուն։ Թմբիր է գալիս վրաս, հաճելի՝ ինչպէս գինու առաջին ումպից յետոյ։ Աչքերս կիսափակ նայում եմ բիձային, որ ճենճերւում է արեւի քուրայի մէջ։

Ինչ որ խորհուրդ կայ նրա եւ ցորենի առաջին հատիկների հանդիպման մէջ։ Նախամա՛րդը, որ հանդիպել է իր ձեռքով ցանած առաջին հատիկներին։ Անողոք կռիւը վերջացել է յաղթութեամբ։ Հացը, տաժանելի հացը եկել է։

Ներքեւից մի երիտասարդ բահն ուսին գալիս էր դէպի մեզ։ Չնայած շոգին՝ նա արագ էր քայլում։ Բիձան ձեռքը ճակատին դրեց, նրան նայեց ու բահը ձեռքն առաւ։ Երիտասարդը մօտեցաւ մեզ ու փնթփնթալով, արագ-արագ սկսեց ճումբերը քանդել առուի գլխից։

Բիձան, որ մինչ այդ շատ հանդիստ երեւոյթ ունէր, վեր թռաւ ու բահով անխօս յարձակուեց քանդուած ճումբերի վրայ, որ նորից տեղը դնի։

Սկսուեց մի խուլ կռիւ երիտասարդի եւ բիձայի միջեւ։

— Ա, քու շուն շան որդի հէրն անիծած,— ղմղաց բիձան, հրելով երիտասարդին։

Բայց սա, որ աւելի ուժեղ էր, ետ հրեց բիձային։

— Թո՛ղ, ասում եմ քեզ։ Հիմի՛ շանսատակ կ'անեմ, գաղթական շա՛ն որդի, ո՞ւմ ջուրն ես կտրում։

— Վի՞ր ջուր կը գողնաս, հարամզադա քոփակ շուն։

Բիձան բահը բարձրացրեց, որ իջեցնի նրա գլխին։ Երիտասարդը փաթաթուեց նրան։ Բռնեցին իրար։

— Բա՛ց թող,— հեւաց բիձան։

— Կանի՛,— գոռաց հակառակորդը,— կանի՛ քու դատաստան կտրեմ,— հեւում է բարկութիւնից։

Ես վրայ հասայ եւ քաշեցի երիտասարդի միջքից։ Որտեղից որ էր՝ վրայ հասաւ մի կաղ մարդ եւս եւ օգնեց որ բաժանենք կռուողներին։

Երիտասարդը նորից պոկուեց ու ընկաւ բիձայի վրայ։

Ես սպառնացի․

— Դու սրան ուզում ես սպանե՞լ, իսկոյն միլիցիա կը բերեմ։

Երիտասարդը բաց թողեց, բայց սկսեց գոռգոռալ աւելի բարձր․

— Ձիմ տուն կ՚աւրի՞ս․ իդա բահ կը մլիմ գիտա բուկտի։ Մկա գիմ թարս տամարի՞ս ռասթ եկար։

Սկսուեց երկուստեք հայհոյանքը, որ նշան էր «գործողու-թիւնների» վերջանալուն։ Հիմա բանակռիւ էր, ուստի եւ անվնաս։

Հայհոյելով իջան ներքեւ։ Կարծեմ այնտեղ հաշտուեցին էլ։

Մի քանի օր է, որ բիձան չի երեւում բակում։ Դաշտումն էր։ Այնտեղ տեղի է ունենում կատաղի ճակատամարտ, որ աչք չի թողնում բանալու։ Հնձի եռ ժամանակն է։ Աչք չի թողնում բանալու։ Հացը անձնատուր է լինում։

Բակում մնացել են ճանճերն ու ամառաւորներից նրանք, որոնք լուացք ունեն։ Սրանք էլ վերջացրին, անտառ են գնում։

Հիմի «բանուորի հայրն» է միակ կենդանութեան հերթապահը։

Ինչ որ թուրքեր են գալիս մօտը, որոնց մանր-մունր ապրանք է ծախում կամ փոխանակում մթերքի հետ։

Կատարեա՛լ շոկոլադ՝ ջրի մէջ բացած։ Վասիլը շալվարը հանել, մտել է կալատեղի ցեխը եւ քշում է եզներին, որ քաշում են մի մեծ փոցխ։ Կալն են պատրաստում։ Ցեխը պիտի հարթուի, չորանայ եւ կալատեղ դառնայ։ Վասիլը խափշիկի կերպարանք ունի։ Երես-մերեսը ցեխի մէջ կորած է։

— Վասի՛լ, կալին հասար, հա՛։

— Հասանք, հա՛։ Էս ա կալը դզում ենք։

Երկար փողոցը թնդում է օրկեստրներից։ Դիվիզիան գնում է մանեովրի։ Ահագին բազմութիւն է կիտուել մայթերին․ դի-տում են հեռացող զօրքին։

Բիձան նստել է խանութի առջեւ ու բերանը լամլամորելով դիտում է կարմիր-բանակայիններին։

Նրանք՝ քը՛ութ, քը՛ութ, քը՛ութ, քը՛ութ, միաչափ քայլում են՝ տոպրակները ճօճացնելով։

Ահա մեկը իր վաշտից ուշացած՝ հեւալով վազում է, որ հասնի։

Ահա եւ հեծելազորը։ Կարկտեց ամպի պես ձիերի սմբակներով։

Գալիս են, գալիս, գալիս, վերջ չկայ։

— Օուքը կտրե՞ց,— հարցնում է բիձան կողքանց նայելով։ Աչքը չի կտրում։

— Ո՞րտեղից։ Հլա գալիս են։

— Ասել ա շատ կայ։

— Բա՞։ Հայաստան ա, շատ կ'ըլլի,— սրախօսում է մրոտ գարբինը։

Ջահէլ, քէթեղ, կարմիր տղերք... հոսում են գարնան ջրերի պէս։

Ու փոշին ծառանում է վեր, դէպի կապոյտ երկինքը։

Մի քանի օր անց՝ արդէն անտառի բերանից երեւում է բիձայենց կալը։ Երեք հոգի են — բիձան, Վասիլը եւ մի վարձուոր մշակ։ Երեխաները ճանճերի պէս ղժվժում են չուրջը։

Մինչեւ անտառ գալիս է Վասիլի ծղրտոցը եզների վրայ.

— Եզն ա'րի, եզն ա'րի։ Հայհոյում է ու ճիպոտում։ Բայց դրա հետ միասին արդէն լսում է նրա հորովէլը.

«Հօ՛ արա, եզը՛–ը՛–ը՛»... — ու յանկարծ ճիպոտում է.

— Եզն ա'րիիիի՛...

Երկու օրը մի կալ է։ Ապա թեղում են։ Օրուան մէջ ինչքան որ քամում են՝ ջվալներով բերում են տուն։

Այդպէս մի տասն օր, եւ կալը վերջացաւ։ Գնացի այնտեղ։ Վերջին ժամն էր։ Պառաւը գետնի վրայ կռացած՝ մաղում էր կալում մնացած հողախառն ցորենը։

Մի հատիկ անգամ չի ուզում թողնել հողի մէջ։ Հանում է։ Հողը տանջուել, փշրուել է ու տալիս է վերջին հատիկը՝ օձիքն ազատելու համար։

Վերջապէս բոլոր ցորենը լցրին ջվալները, բեռցրին սայլին։

Մնաց դարմանը։ Դա հեշտ է, դա յետոյ։ Կալը աւլած է, մաքուր։ Միայն մի տեղ կխտած եւ քամուած, մաղած հողը։

Ձայները լռել են։ Բոլորը յոգնած են, լուռ։ Եզները լծուած

սպասում են հեռանալու: Որոճում են միայն:

— Է՛հ, Աստուած բարի վայելում տայ,— մրմնջաց բիձան:

Պառաւը դէմքը դարձրեց դէպի կալը եւ ասաց նրան.

— Կա՛լ ջան, մնա՛ս բարով: Շնորհակալ ենք: Ծեծեցիր, քամեցիր, մեր հացը տուիր: Աստուած, տո՛ւր, որ էլի ուրախութիւնով, սաղ սալամաթ կալ անենք: Բարով հասնենք միւս կալին:

Շարժուեցին, գնում են տուն: Հացը մեղմացած ու ժպտալով անձնատուր եղած, օրօրւում է սայլի տատանումներից:

Նա գնում է այնտեղ, որտեղից եկել էր դաշտ:

Ճամբին չեն խօսում: Լիացած են:

Առուի ափին Վասիլը մի լաւ ճոփ տուեց երեսին սառը ջուրը, թեւքով սրբեց թեթեւ ու գնաց, որ սայլին հասնի:

Երեխաները վժվժալով քշում են սայլը:

Երեկոյ: Ահա հեռաձիգ հնչեց փողը: Պիոներների ազդանշանն է — կարծեմ՝ նշանակում է հանգի՛ստ, չշրջել դուրսը: Մութն է: Բակը թւում է անդունդ: Հազիւ նշմարւում են սայլի եւ եզների սիլուէտները:

Սայլը գլուխը դրել է գետնին եւ ականջ է դնում երկրի ձայներին: Եզամեքենաները ծանր տնքում են, փնչում: Երբեմն էլ կարծես ծովն է ճղփում ափին: Ջաղացքարի ձայներ են գալիս: Որոճում են եզները: Կարծես եզներ չեն այնտեղ, այլ երկիրը, հողը, այդ վաստակած, հանելուկային հողը, որ հեւում է եւ ուզում է քնել:

Լա՛յն հանգիստ կայ ողջ բնութեան մէջ: Քնել են խրճիթները, լեռները: Միայն չի քնել, թէ՞ զառանցում է ճպուռը: Երկնքից դողդողալով չիթում են աստղերը՝ ինչպէս մեղր:

Ահա մեծ արջը արեւմուտքում երկու նիզակաչափ հորիզոնից վեր:

Մեծ տնտեսութիւն կայ նաեւ այնտեղ, երկնքի կապոյտ դաշտերում, աստղացորենի, յարդի այդ մարագներում:

Խորդուն է բիձան: Քնած է նա իր ցորենի ջվալների մէջ, նրանցից մինը գրկած: Այնտեղ է քնել, որ չգողանան: Ամուր ճանկերում պահում է նա իր սեփականութիւնը, եւ քնի մէջ անդամ հսկում է նրան:

Ինչպէ՜ս ճանկերի մէջ ամուր սեղմել է նա իր փոքրիկ սեփականութիւնը:

Ես մտածում եմ հողի մասին, եւ կամաց-կամաց քունս տանում է:

Օրերը հասել են նաեւ այն ամառուան ծղրիդների համար, որ հիւր էին եկել այստեղ: Ամառուորները գնում են: Արդէ՜ն առաջին մեծ անախորժութիւնը — պառաւը պատշգամբիս տակին կոցահարում է իր ամուսնացած աղջկան.

— Ընչի՞, ընչի՞ հմար: Դաչնիկը մերը չի՞: Մեր Վասիլը չի՞ կարա տանի, որ մարդուդ տամ տանի՜ նրա վեչչը: Ասա մարդիդ՝ ուրիշ դաչնիկ գտնի՝ վեչչը տանի վակզալ:

Աղջիկը լաց էր լինում եւ փէշով սրբում աչքերը:

— Ընչի՞ ես լաց ըլում. ո՞վ ա մեղաւոր, որ մարդդ գործ անել չի իմանում:

— Ես դրա հմար չեմ լաց ըլում,— ատամները կրճտացնում է աղջիկը,— մին ա, հէր ըլի, մէր ըլի, աղքատին ոչ ով թողալ չի, թէ չունչ քաշի: Իբ հերսը իմ մարդու վրէն ա գալի, որ ինձ ձեր մուննաթին ա գցել:

— Ո՞վ ա մեղաւոր,— կոցահարում էր պառաւը:

— Գիտամ ո՛վ ա մեղաւոր:

— Ի՞նչ ես չինում ըստի,— խէթով առաջ եկաւ աղջկան ամուսինը մի ջլուտ, խստադէմ երիտասարդ եւ աչքերը լուռ ոլորեց:

Կինը ձայն չհանեց:

— Դէ, տուն գնա,— գոռաց երիտասարդը եւ սպասեց, մինչեւ կինը շարժուի:

Սա աչքերը սրբեց ու գնաց: Ամուսինը լուռ հետեւեց նրան: Պառաւը անխօս նայեց նրանց ետեւից, ինչ որ փնթփնթաց եւ մտաւ թոնրատուն:

Վասիլը կամաց-կամաց է յարդը տուն բերում: Ինչ որ ծուլացել է:

Իրիկնադէմին լուր եկաւ, որ կովերը սարում հիւանդացել են:

— Դարաղ ա՞։

— Դարաղ ա։

Եւ ուրիշ ոչինչ։ Բիձան Թուքը կուլ տուեց ու դողդոջուն բերանը բաց նայեց լուր բերողին, որ մռայլ չտապով եկաւ, յայտնեց ու քայլերն ուղղեց դէպի իրենց տունը։

Վասիլը հեւաց միայն, լուռ գնաց Թոնրատուն եւ մահակը հանելով՝ դուրս եկաւ բակից դէպի սարը։ Երեխաները ձայները կտրեցին ու սքլած ճուտերի նման հաւաքուեցին պառաւի չուրջը։

Սա անխօս սկսեց ծնկները տրորել։

Անուշը վախեցած մէկ բիձային էր նայում, մէկ պառաւին։ Նրանք յիրաւի ազդու էին այդ րոպէին։

Ամբողջ ընտանիքը պապանձուեց ու քաշուեց Թոնրատունը։ Բիձան փնչացնելով ներս ու դուրս արաւ մի քանի անգամ, վերջը գնաց նստեց ջրհորի գլխին ու աչքերը դցեց գետնին։

Ներսից գալիս էր Անուշի ձայնը։

— Չէ՛, նանի, չէ՛, չենք մեռնի։

— Կոտո՛րուեցինք, գնա՛ցինք, կորա՛նք,— վո՛ւշ էր անում պառաւը։

— Էլի կ՚աշխատենք, էլի կ՚ըլլի,— ասում էր Անուշը։

— Իիի՞հ, որդի, քանդուեցինք, պրծանք։

Ամառուորները անհոգ իրենց պատրաստութեան հետ էին եւ չէին նկատում բիձայենց փորձանքը։ Մի ընտանիք իրերը կապում էր, որ գիշերը պիտի գնար։ Նրանք երգում էին, քրքջում։

Ուշ գիշերով Վասիլը եկաւ ու անխօս նստեց Թոնրատան չէմքին։

— Երկուսը կը սատկի։

— Երկո՞ւսը,— հեւաց բիձան,— ո՞րն ա։

— Սոնեն ու Միշկեն։

— Դոխտուրն ի՞նչ ա անում։

— Դեղ ա անում, ի՞նչ ա անում։ Ի՞նչ իմանամ։

Երկար մնացին այդպէս։ Երեխաները քնեցին։ Մի քիչ անց՝ Վասիլը հաց կերաւ ու գնաց մարագի կողմը եզները բերելու, որ ամառուորների իրերը տանի կայարան։

Տանողչէքն էլ կտրեցին այսպէս.

— Վերջնական՝ մի՛ մանէթ։

— Լա՛ւ, լա՛ւ, ձեզ ու ինձ վրայ կորած չի։ Թող ըլլի մի մանէթ։

Ու չես իմանում ի՛նչ յոյսով, ի՛նչ հաշուով — սեւահողը ինքը իր մէջ լաւ գիտէ այդ — Վասիլը ներս գցեց իր վիշտը եւ անցաւ աշխատանքի։

Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆ

1924



ՄՂՁԱԽԱՆՋ

(ԴԷՊԻ ԳՈՂԳՈԹԱՆ)

Ինչո՞ւ եմ գնում։

Մի անդիմադրելի ուժ մղում է ինձ դէպի այն վայրերը, ուր մանկութիւնս է անցել եւ որի հետ այնքան շատ յիշողութիւններ են կապուած։

Դու ասում ես ամէն ինչ այրուած է, ե՛ւ ձեր, ե՛ւ մեր, ե՛ւ նրանց բոլորի տները։

Մեռան ե՛ւ քո, ե՛ւ իմ, ե՛ւ նրա, բոլորի մայրն ու քոյրը, հայրն ու եղբայրը, հօրաքոյրն ու մօրաքոյրը։

Այն սիրուն ձորակը, այն այգեստանների մէջ թաղուած գիւղից այլեւս ոչինչ, ոչ ոք չմնաց…

Արեւը մտնելուց՝ Նախիր չի վերադառնում անուշ բառաչով։ Պառաւ կանայք սպիտակ սաւանների մէջ փաթաթուած՝ ժամ չեն գնում։ Ջիերը չեն խրխնջում, չի լսւում աքաղաղի ծուղրուղուն, շուն էլ չի ոռնում իմ հայրենի տան փլատակների վրայ։

Այն աղբիւրները, առուակները, այգիները, հարազատներս, մանկութեան ընկերներս, որոնք ինձ պէս մեծ մարդիկ էին դարձել, ուրեմն բոլորը յիշողութի՜ւն դարձան… Թանգագին գերեզմա՜ններ։

Իմ հայրենի գիւղ, հրդեհի ծխից սեւացած, բոցերից խանձուած, իմ յիշողութիւն դարձած հայրենի գիւղ…

Ինչպէ՞ս… ուրեմն էլ երբեք չպիտի՞ տեսնեմ, երբեք չխմե՞մ քո սառնորակ աղբիւրներից… երբեք չլսե՞մ այն միլիոնաւոր ճռիկների ձայները… երբեք պառկած կանաչ մարգագետնի վրայ, ականջ չդնե՞մ հասուն դեղձերի կաթոցին, որ մերթ այստեղ՝ մօտ, մերթ այնտեղ՝ քիչ հեռու, ապա աջ, ձախ, պոկւում ընկնում էին հասուն պտուղներն անուշ կլտոցով։

Ո՞վ է խաղող քաղում...

Ընկոյզ չե՞ն թափում...

Ցուկայի հաստ դերանը, որի վրայ նստում էին գիւղի մեծերը, այժմ թափո՞ւր է...

Լռե՞լ է ամէն ինչ:

Մօրաքոյրս, հօրեղբայրս՝ ծեր ու կռացած՝ չե՞ն վազելու կառքիս ընդառաջ, երբ գիւղի փոքրիկ համբաւաբերը, մի քանի կոպէկ ստանալու համար, կառքից առաջ վազելով՝ լուրը տանի:

Իմ յիշողութիւն դարձած հայրենի գիւղ...

Ես գալիս եմ աչքով տեսնելու եւ ողբալու քո որբ մնացած գերեզմանների վրայ:

Երեքից անց էր, որ գնացքը շարժուեց: Անցնում ենք աւերուած կայարանների ,աւերակ դարձած գիւղերի մօտով:

Կայարաններից մէկում ես տեսայ անտուն մնացած, քաղցից ոսկրացած մանուկների ու կանանց մի խումբ. մի հատիկ տղամարդ կար դրանց մէջ: Նա վաղուց է, որ մոռացել է հինայել միրուքը, ծնօտի մազերն սպիտակել են: Նա անշարժ նստել է արեւի տակ եւ ո՞վ գիտէ՝ ինչ է մտածում...

Ցնցոտիների մէջ փաթաթուած, նրանք թափուել են կայարանից քիչ հեռու, իրենք էլ չգիտեն՝ ինչի՞ են սպասում:

Քաղցից, տենդից՝ նրանց աչքերը փայլում են հիւանդագին:

Երբ ես անցայ նրանց մօտից, ոչ ոք տեղից չշարժուեց, միայն չռուած աչքերով ուղեկցեցին ինձ՝ լուռ, ողորմութիւն ըսպասելով:

Զարմանում ես նայելով այդ ողորմելի արարածներին, որոնք այնպէս անտրտունջ գիտեն տոկալ մի կտոր՝ ճակատի քըրտինքով ձեռք բերած գարու հացի համար. քաղցած գայլերի պէս յօշոտել են իրար:

Ինչո՞ւ են այդպէս անխնայ մորթոտում, այդքան վայրագօրէն այրում արտ ու դէզ, քանդում, աւերում տուն ու տեղ:

Ի՞նչ պատահեց, որ այդ դարաւոր հարեւան ժողովուրդներն այլեւս անկարող եղան ապրել կողք-կողքի եւ մոլեգնած քանդեցին իրար տները, մորթոտեցին եւ մնացին անտուն ու քաղցած:

Նրանք այդ չգիտէին:

Գնացքն անցնում է Արաքսի ափերով։ Հին Ջուղայի գերեզմանատունն է։

Շոգեմեքենան մնչալով վեր է բարձրանում։

Ահա ճակատագրից անիծուած Ջուղան։ Նա կանգնած է բարձրութեան վրայ դուրս թափուած աչքերով, ջարդուած ծընօտներով, գորշ ու մռայլ, կիսաւեր հողի բարձր պարիսպներով։

Շոգեմեքենայի սուլոցից արձագանգում են չորս կողմից չուրջ-պար բռնած լեռները, լալկան, բեկբեկուող ձայներով։

Շոգեմեքենան կարծես յոգնած, վերջին ճիգերն է թափում յաղթահարելու այդ վերելքը։

Հասանք Ջուլֆա կայարանը․ Նա էլ աւերուած է, գիւղը նըմանապէս։

Անհամբոյր է Ջուլֆան․ փոշոտ, գրեթէ առանց բուսականութեան։

Արաքսից փչող քամիները փոշու ամպեր են բարձրացնում եւ աւազախառն հողը խփում պատերին, լցնում աչք ու բերան։

Մութ էր, երբ ձիերով դուրս եկանք Ջուլֆայից։

Սարի ետեւից լուսինը դանդաղ բարձրանում է եւ աստիճանաբար լուսաւորում այդ ամայի, բուսականութիւնից զուրկ տարածութիւնը։

Լուսնի լոյսով հեռու ստուերագծուած է Թաւրիզի կամուրջի կմախքը։

Արաքսը թաւալւում է օձապտոյտ եւ արծաթ ժապաւէնի պէս փայլում՝ լուսնի լոյսով արծաթուած։

Ձիերն ընթանում են դանդաղ, ծուլօրէն փոխելով իւրաքանչիւր քայլը։

Մենք լուռ ենք։

Տարօրինակ, գրեթէ անհաւատալի է թւում, որ մի քանի հայ ձիաւորներ մի թուրքի առաջնորդութեամբ գիշերով անցնում են այդ վայրերով, որտեղից մի երկու տարի առաջ ամենախիզախ, յանդուգն հայը սիրտ չէր անի անցնել, համոզուած, որ հարիւր քայլ չանցած գետին կը փռուէր։

Արաքսը թագնուեց։

Մենք շրջապատուած ենք ապառաժ ժայռերի ստուերների

մէջ, որոնք կարծես մեծանում են, փոքրանում եւ զանազան ձեւեր ընդունում:

Ամբողջ ճանապարհն ընկած է լեռներով: Բացի փշերից, ուրիշ բան չի բուսնում այդ անջուր ապառաժոտ քարքարոտում, ուր օձեր ու կարիճներ են վխտում, մէկ էլ երկարապոչ մողէսը աշխոյժ ու կայտառ, երկար պոչը շարժելով մի վայրկեան կանգ է առնում, վախեցած ու զարմացած կլոր աչքերը յառում վրադ ու արագ թագնւում քարերի տակ:

Ոչ մի շունչ:

Օձերն ու մողէսներն էլ թագնուել են իրենց բներում:

Մահուան սարսուռ է ազդում:

Իսկ աշունն աւելի մռայլ ու անհրապոյր է դարձրել այդ վայրերը:

Հեռու չէ այն գիւղը, ուր պիտի գիշերենք: Բայց գնում ենք, գնում, կարծես վերջ չկայ:

Մթութեան միջից մեր ականջին երբեմն շան հաչոցներ են հասնում... Թւում է, թէ դա պատրանք է, որովհետեւ ո՞ւմ մտքից կ՚անցնի, ո՞վ սիրտ կ՚անի գալ, բնակութիւն հաստատել այս օձերի եւ կարիճների բների վրայ, այս չոր անապատում:

Մեր առաջնորդը տալիս է գիւղի անունը, որի մօտից անցնում ենք ու լուռ շարունակում մեր ճանապարհը:

Բոլոր հանդիպած գիւղերն էլ հողաշէն են, աղքատիկ: Ճըրագներ չկան:

Արաքսի միւս ափին, սահմանի այն կողմը ճրագներ են երեւում:

Տարօրինակ կերպով շողում են այդ փոքրիկ պլպլացող լոյսերը: Այդ ամայութեան մէջ նրանք կարծես յուսոյ կայծեր են, որոնք չեն թողնում, որ յուսահատութիւնից ճչաս:

Այդ լռութիւնը, այդ ժայռերը, այս աւեր գիւղերը լուսնի լոյսով ստուերագծուած, ինչ որ դժոխային սարսուռներ ունեն իրենց ծոցում, որոնք վարակում, վախ են ազդում:

Ամէն մի ժայռ, ցցուած քար, թւում է, թէ շարժւում է, ըսպառնում եւ ահա չորս կողմից պիտի պաշարեն եւ իրենց մութ թեւերով խեղդեն քեզ:

Կէս գիշերն անց էր, որ հասանք Ցայջես Թրքական գիւղը, ուր պիտի գիշերէինք, միւս օրն առաւօտ շուտ դուրս գայինք,

որ դեռ մութը չընկած Օրդուբաթ հասնէինք:

Մեր հիւրընկալ Թուրք ուղտապանը հիւրասիրեց մեզ ընթրիքով: Ընթրիքի ժամանակ պատմեց, թէ ինչպէս Անդրանիկի խումբը իրենց գիւղի ազգաբնակութիւնն առաջն արած քշեց ու Արաքսը թափեց: Կանանցից ու երեխաներից քչերին յաջողուեց միւս ափը ելնել:

Ընթրիքից յետոյ պառկեցինք գետնին խսիրների վրայ փռած մաքուր անկողիններում:

Առաւօտեան վաղ մի-մի բաժակ թէյ ենք խմում, շնորհակալութիւն ենք յայտնում մեր հիւրընկալին ու հեծնում ձիերը:

Գիւղից դուրս ենք գալիս, վերջանում են գիւղի այգիները, եւ նորից ընկնում ենք լեռների գիրկը:

Արեւի տակ, արեւի լոյսով տեսարանը բոլորովին փոխուել է:

Երեւում են կարմիր, կարծես հնոցի մէջ այրուած գագաթները ու ցնցոտի դարձած լեռները՝ դեղին, դորչ: Քիչ հեռու բարձրանում են ահագին հողաթմբեր: Աւազն ու հողը դարեր շարունակ դիզուել են իրար վրայ եւ ծնել այդ փխրուն սարերը, անձրեւներից խոր վէրքերի պէս ակօսուած:

Գրեթէ անհաւատալի են այս, կարծես խնամքով, իրար վրայ դարսուած սալքարերը, այս հոյակապ, հսկայ սիւները, խիզախօրէն գլուխները վեր ցցած, հինցած իրենց կրծքերով սարի ճաքճքած գրանիտեայ կողերին: Կարծես բնութիւնը պարապ ժամերին խաղեր է արել, եւ այդ խաղերի արդիւնքն են այս յղկուած սիւները: Թւում է, թէ հազարաւոր մարդկանց արիւն քրտինքով են բարձրացել, մի բռնակալ քմահաճ միապետի կամքով են յղկուել ու կերտուել, այնպէս, աննպատակ, միմիայն հպատակներին տանջելու համար:

Արեւի կիզիչ ճառագայթներից խարկուած տարածութիւնը շարունակւում է: Երբեմն փոքրիկ ովասիսների նման դէս ու դէն երեւում է կանաչի մի փունջ: Դա նշան է, որ մօտերքում ջուր կայ:

Ձիերը ծուլօրէն, քայլ քայլի ետեւից հազիւ են շարժւում:

Մտրակի հարուածից սթափուելով, մի քանի քայլ աւելի արագ գնալուց յետոյ, էլի շարունակում են սովորական ընթացքը: Ծարաւը նեղում է մեզ: Աշխատում ենք շուտ հասնել երեւացող ծառերին, բայց մեր առաջնորդի կարգադրութեամբ, ճանապարհը թեքում ենք, աղբիւրը ծառերով մնում է աջ, իսկ մենք բըլրակի փէշերով առաջ ենք շարժւում:

Հազիւ բլուրն անցանք, բարձրաւանդակի վրայ բոլորովին յանկարծ ցցուեց ամփիթատրոնի պէս աստիճանաբար բարձրացող մի գիւղ, գորշ ու մռայլ: Ազա գիւղի կմախքն է:

Նա դարհուրած չռել է աչքերը, եւ բերանը բաց մնացել է քարացած իր բարձրութեան վրայ:

Պատուհանների եւ դռների բաց սեւ խոռոչները կարծես յուսակտուր օգնութիւն են կանչում:

Ազայի հայկական մասն անմարդաբնակ է: Ծռւում ենք ճանապարհը, կամուրջը թողնում ենք ձախ եւ Ազա գետն անցնելով՝ մտնում ենք թրքական մասը:

Ազայից մինչեւ Դաստակ նոյն լեռնոտ քարքարոտ ճանապարհն է:

Դաստակը փոքրիկ թրքական գիւղ է, նշանաւոր իր թէյարանով:

Ամէն մի գողթնցի հայրենիք գալիս եւ գնալիս պէտք է կառքը պահել տար այդ թէյարանի մօտ: Հաստաբուն չինարու տակ աղբիւր, աղբիւրի գլխին մի քանի պարզ սեղաններ եւ նըստարաններ: Ոչինչ չի փոխուել:

Բայց վաղուց է, որ այդ թէյարանի առջեւ այլեւս կառքեր չեն կանգնում: Թէ՛ թէյարանը եւ թէ՛ միրուքը հինայած թուրք տէրը կարծես կուչ են եկել:

Այդ թէյարանի առջեւ ամառը ո՞րքան կառքեր էին կանգնում:

Ուղեկիցներիս ոչինչ չի ասում այդ խղճուկ թէյարանը: Անցանք:

Եօթը վերստ է մնում մինչեւ Օրդուբաթ:

Չորս կողմից կրկին շրջապատուած ենք գոյնզգոյն լեռներով: Քիչ անց՝ նորից երեւաց Արաքսը:

Ահա մեր ձորը։

Արդէն երեւում են այգիները։

Դէպի աջ երեւում է Օրդուբաթը՝ կանաչի մէջ կորած։

Ուղեկիցներս առաջ են անցել։

Ես չեմ ուզում հաւատալ, որ այլեւս չկայ այդ գիւղը, որ կտրուել է թոնիրների ծուխը։ Ես մէկ մտածեցի իջնել այդ դանդաղաշարժ ձիուց եւ վազելով հասնել, համոզուել, որ բոլորը սուտ է... այնտեղ մարդիկ շարունակում են առաջուան պէս ապրել... ինձ թւում է՝ բաւական է թափ տամ գլուխս, կը զարթնեմ այդ ծանր մղձաւանջից եւ կը ժպտամ, հանգստացած, որ երազ էր։ Ես դիտմամբ եմ ետ մնացել, որ ծածկեմ նրանցից իմ սանտիմենտալ բնաւորութիւնը։

Ես մտրակեցի ձիս, որ հասնեմ նրանց, մենակ չլինեմ։

Եւ գնացի այնտեղ, ուր մարդիկ են ապրում... իմ հայրենի գիւղում շուն էլ չի ոռնում։

Ճաշից անմիջապէս յետոյ երեք հոգի ոտով ճանապարհուեցինք դէպի Դաշտ...

Անցնելով կամուրջը, մենք սկսեցինք դէպի վեր բարձրանալ. վերեւքի գլխին բացուեց մի հրապարակ. դարաւոր մի չինար իր հովանու տակն է առել ամբողջ հրապարակը, իսկ փչակի մէջ մի խեղճ կօշկակար իր արհեստանոցն է բացել։

Այնտեղից ճանապարհն այգիների միջով ձգուած՝ սկսում է իջնել մինչեւ բլուրի ստորոտը, որտեղից նեղ լեռնային կածանը տանում է մինչեւ բլուրի գագաթը, որտեղից սկսւում է մի վերէջք մինչեւ ամառն անջուր գետակը։

Այդ բարձունքից պարզ երեւում է Դաշտ գիւղը։

Արեւն արդէն թեքւում է դէպի մայրամուտ։ Մենք շտապում ենք բոպէ առաջ գիւղ հասնել։

Քանի մօտենում ենք, այնքան անհամբեր ու նեարդային եմ դառնում։ Ինչո՞ւ խօսք ու ծիծաղ չի լսւում... Ո՞ւր են գիւղի երեխաները՝ ընկոյզի կեղեւից սեւացած մատներով... Ինչո՞ւ ոչ մի խաղող բարձած էշ չի հանդիպում... Խաղողաքաղի ժամանակ է, ինչո՞ւ են լռել... Ինչո՞ւ ընկոյզ չեն թափում...

Մի փլուած պատից ներս նայեցի։ Առաջ այստեղ խաղողի

այգի էր, իսկ այժմ հնձուած ցորենի թէ գարու սուր-սուր դեղնած ցօղուններ են ցցուած։

Հարեւան այգին նոյնպէս։

Ինչո՞ւ են կտրատել այն հրաշալի պտղատու ծառերը։ Բացի վիթխարի ընկուզենիներից, ուրիշ ծառ չի ազատուել։

Ամէն մի այգում սեւացած լայնաբերան գերեզմանի պէս փոսեր կան, որտեղ ածխացել են դալար ծառերը։

Դեռ սեւ են այն փոսերը, ժամանակը դեռ չի կարողացել ջնջել այդ հետքերը։ Ահա եւ մեծ դարպասը։

Վայրենի ցեղերի յարձակումներից պաշտպանուելու համար գիւղ մտնող երեք ճանապարհները կտրւում են այդ հսկայ դարպասներով, որոնք միմիայն վտանգի ժամանակ էին փակւում։

Ինչպէս երեւում է, այդ դարպասներն այն ժամանակուան յարձակումների համար բերդի նշանակութիւն են ունեցել։ Դարպասի գլխին մի մարդաբոյ պատի մէջ ծակոտիներ կային դիտելու համար։

Արագ անցնում եմ դարպասը, այլեւս չեմ նայում ընկերներիս։

Իրար խառնուած տների փլատակների վրայից ցատկոտելով վազում եմ դէպի վեր…

Այստեղ պէտք է լինի մեր տունը… Ո՞ւր է աւազանը, որի մէջ փոքրիկ ձկներ էին լողում, չկան ծաղիկների մարգերը։ Աղբիւրը լռել է. խաղողի որթերը, որոնք ոլորապտոյտ հասնում էին երկրորդ յարկի պատշգամին, պատշգամի հետ միասին թաղուել են բակում դիզուած հողակոյտի տակ։ Մի պատ է մնում՝ մէջը երեք ծակ. ողջ է մնացել սատիճանների մի մասը։

Ինչո՞ւ եմ կանգնել այս հողակոյտի մէջ քարացած. ի՞նչ անենք որ հայրենական օջախ է, այժմ նա չկայ…

Ես դարձայ, որ հեռանամ, երբ աչքիս ընկաւ հողի տակ կռացած, մէջքը կոտրուած վարդենին, որը ճիգ էր անում դուրս գալ իր գերեզմանից եւ չի ուզում կենդանի-կենդանի թաղուել։ Ես ակամայ ժպտացի։

Դուրս եմ գալիս բակից։ Նեղ փողոցի երկու կողմերից բարձրացող կիսաւեր պատերի արանքից երեւում են տների անդուռ եւ առանց պատուհանների սեւ խոռոչները։

Վազում եմ դէպի եկեղեցու բակը, ուր թանգագին գերեզմաններ ունեմ:

Մօտենում եմ այդ գերեզմաններին. այլեւս անկարող եմ զսպել ինձ... մենակ եմ: Երկար ես նստած էի այդտեղ. ընկել էի մի անորոշ դրութեան մէջ, երբ կարծես գլխումդ այլեւս մտքեր չկան:

— Ուշանում ենք... — կանչում են. լսում եմ մի ձայն. ըսթափւում եմ... բարձրացնում գլուխս. ո՞վ է, չգիտեմ: Լուռ բարձրանում եմ: Եկեղեցու անդուռ դռներից ներս եմ մտնում: Աղաւնիների մի երամ. վախեցած թափահարում են թեւերը եւ դուրս նետւում. եկեղեցու դատարկ պատերը արձագանգում են թեւահարումին ու կրկին տիրում է ճնշող լռութիւն:

Եկեղեցու յատակը տեղ-տեղ փորփրած է, երեւի թագցրած բաներ են փնտռել:

Սեղանի վրայ ինչ որ բաներ են թափթփուած: Կիսաքանդ աստիճաններով բարձրանում ենք. ես զարհուրած կանգ եմ առնում: Խառնիխուռն իրար վրայ թափթփուած են մարդկային ոտի, ձեռքի, գլխի ոսկորներ: Ահա մի փոքրիկ գանկ, ամուր սպիտակ ատամներով... Իսկ այս մէկի ներքին ծնօտի մէջ երկու դեղնած որդակեր սեւ ատամ... Ինչ փայլուն, մաքուր են այս ոսկորները. նման չեն գերեզմանից հանած դեղնած, ծակծկուած ոսկորների. թարմ են, կարծր՝ փղոսկրի պէս:

— Փողոցներից հաւաքեցինք: Նրանք են, որոնք չկարողացան փախչել: Հիւանդներ... երեխաներ... իրենց մահով մեռան, սովից...

Յանկարծ մի ուժեղ մղումով ես ինձ դուրս նետեցի եւ վազեցի դէպի այն միակ տունը, որտեղ կենդանի մարդիկ կան:

Ներս ենք մտնում մի ընդարձակ սենեակ: Ինչ որ մարդիկ են մօտենում ինձ, սեղմում ձեռքս. ովքե՞ր են, չգիտեմ. Նրանք երեւի ինձ ճանաչում են, որովհետեւ անունս գիտեն:

Ոլորապտոյտ աստիճաններով բարձրանում ենք կտուրը:

Ամբողջ գիւղն աչքիս առաջն է: Տուն չկայ, որ աւերուած չլինի:

Հեռւում փայլում է Արաքսը. կապտին են տալիս Պարսկաստանի եւ Ջուլֆայի կողմ գտնուող լեռները:

Այդ փլատակների մէջ առաջուան պէս բարձրանում է վիթ-

խարի մի չինարի ծառ: Նա գլուխը վեր ցցած, տարածել է իր հուժկու թեւերը եւ անտարբեր նայում է հեռուն, իսկ թէ ինչ է կատարուել իր բնի մօտ, ճիւղերի հովանու տակ, նա այդ չգիտէ:

Մեզ հրաւիրում են թէյ խմելու: Կրկին մտնում ենք նոյն սենեակը, 15–20 հոգի կին, երեխայ:

Գիւղ վերադարձած մի քանի ընտանիքներ պատսպարուել են այդ յարկի տակ: Ամբողջ ունեցածները՝ մի մեչոկ ցորեն կամ դարի, մի քիչ թուղթ եւ ընկոյզ:

Սկսւում են գանգատներ, որ մերկ են, որ ունեցածները երկու ամիս էլ չի բաւականացնի եւայլն, եւայլն…

Գնում ենք դէպի Վերին Ագուլիս:

Ճանապարհն ընկած է այգիների միջով, որը չարունակ աննկատելի բարձրանում է: Շուտով վերջանում են ձախ կողմի այգիները: Բլուրի փէշերով վեր ենք գնում: Հասանք ամենաբարձր կէտին: Արդէն սկսել էր մթնել: Այդտեղից ամբողջ Վերին Ագուլիսն աչքիդ առջեւն է: Նորից սկսում ենք իջնել, չեղուելով ձիու ճանապարհից, դարձեալ այգիների միջով դիմում ենք գիւղ, գետափով: Բարձր պարիսպների ետեւում թաղնուած են տները: Վրայ հասնող մութն աւելի ճնշող է դարձնում այդ մեռելային լռութիւնը:

Անցանք կամուրջը, որի տակից ջուր չէր վազում: Կամուրջի գլխին մեզ դիմաւորեցին եւ տարան գետափին՝ մի տուն:

Պարտիզում թէյի սեղան էր պատրաստուած: Ինչպէս երեւում է, նախօրօք գիտէին եւ սպասում էին մեզ:

Ես շուտ պառկեցի: Նոր զգացի, որ մարմնիս ամէն մի կէտը նււում է, տնքում… ամբողջ երկու օր ձիով եւ յետոյ էլ նեարդային ուժեղ ցնցումից քնել չէի կարողանում: Աչքերիս առջեւից անցնում էին կոշմարային պատկերներ: Պատերազմի ստեղծած արհաւիրքներն անվերջ շարքերով անցնում են՝ մահ, աւեր, հիւանդութիւն, սով… Գիշատիչների կամքով ստեղծուած այն դժոխքը՝ արեան ծովը, որի մէջ խեղդւում, արնաքամ էր լինում աշխարհի ամբողջ աշխատաւոր մարդկութիւնը:

Ես քնած չեմ, բայց մղձաւանջն ինձ տանջում է, իմ խեղճ ուղեղը գալարւում է գանկիս մէջ, փոթորկւում տենդոտ ու չըփոթ…

Առաւօտեան վեր կացայ, չգիտեմ ինչքան էի քնել, քնել էի, թէ չէ, բայց յոգնածութիւն չէի զգում, այլ ցաւ մարմնիս բոլոր մասերում:

Բոլորը դեռ քնած էին:

Ես դուրս եկայ տնից:

Բացի աղբիւրներից, որոնք առաջուան պէս չարունակում էին գիշեր ցերեկ իրենց միալար կարկաչիւն երգով վրդովել այդ գերեզմանային լռութիւնը, ուրիշ ոչ մի ձայն չէր լսւում:

Ոչ մի դռնից գլուխ չերեւաց... ոչ մի պատուհանից խօսք չլսուեց:

Ճանապարհին ես շատ տեսայ աւերուած հայ ու թուրք գիւղեր, տեսել եմ Անիի հոյակապ փլատակները, էլ ուրիշ շատ աւերուած շէնքեր, որտեղ չգիտեմ ովքեր եւ ինչպէս են ապրել, նրանց մօտով անվրդով անցել եմ, իսկ այս աւերակների մէջ, թոյլ տուէք, ես պէտք է լամ:

Այստեղ ամէն մի քայլ ծանօթ է, ամէն մի անկիւն մի բան է ասում... Այս շատ ծանօթ տեղերում շատ մօտ մարդիկ այլեւս չեն խօսում, չեն ծիծաղում... ընդմիշտ չքացել են...

Ես տուն դարձայ, որոշելով այլեւս դուրս չգալ տնից:

Ամբողջ օրը ես անցկացրի պարտիզում ծառերի տակ: Խիտ ծառերի միջից ոչինչ չէր երեւում եւ թւում էր, թէ ոչինչ էլ չի փոխուել:

Արեւը մտնելուց յետոյ ես ուզեցի պառկել· թէեւ քնել չէի ուզում, բայց ուզում էի մենակ մնալ ինքս ինձ հետ:

Պատրուակ բռնելով գլխիս ցաւը՝ ուզեցի գնալ, բայց ինձ ասացին, որ հրաւիրուած ենք թուրք ուսուցչի մօտ ընթրիքի:

Շատ աշխատեցի չգնալ, բայց ինձ համոզեցին, որ կը վիրաւորուի եւ բացի այդ՝ ուրիշ բացատրութիւն կարող է տալ:

Ես զիջեցի եւ արդէն մութն էր, երբ տնից դուրս եկանք:

Լուսնի հմայիչ լոյսի տակ այդ մեռած գիւղը ինչ որ կախարդական հրապոյր ունէր, թւում էր, թէ ահա ամէն կողմից երաժշտութեան ձայներ են լսուելու: Բարձր պարիսպների ետեւից միմիայն ծառերի վերի մասերն են երեւում:

Մեծ դարպասների վրայ կախուած են ծանր ու սառը չախ-

չախները՝ դատապարտուած լռութեան։ Էլ ոչ մի ձեռք չի բարձրանալու եւ չի բախելու… էլ ոչ մի ձայն չի հարցնելու ներսից․

— Ո՞վ է։

Լուսինը խորհրդաւոր ստուերներ է ձգել։ Վերելքը վերջացաւ։ Այստեղից սկսւում է թրքական մասը։

Վաղուց չէ, որ այս երկու իրար կպած տներում, ինչպէս երկու բարի հարեւաններ ապրում էին նրանք, մինչեւ այն զարհուրելի սարսափներով լի օրը։

Գլխներիս վրայ նեղ ժապաւէնի պէս ձգուած է աստղազարդ երկինքը։ Փողոցը շատ նեղ է․ երկու կողմից բարձրացող բարձր պատերն աւելի են ճնշում եւ թւում է, որ կամաց-կամաց մօտենում են իրար եւ ահա կը միանան եւ իրենց հողաչէն մագիլներում կը ճզմեն։

Սկսում ենք իջնել։

— Սա այն փողոցն է, ուր հաւաքեցին երկու գիւղի ազգաբնակութիւնը եւ սրի քաշեցին…

Ես ցնցուեցի եւ կանգ առայ․ արիւնը սառչում է երակներումս։

Այդ մթութեան միջից, սարսափից չռուած հարիւրաւոր խելագար աչքեր են չռուած վրաս… Հարիւրաւոր ձեռներ պարզուեցին դէպի ինձ կաթուածահար դողոցով։ Օդը լցուած է մահասարսուռ նուոցով։ Օդի մէջ կարծես դեռ կախուած են այն յուսակտուր հարիւրաւոր մարդկանց աղեխարշ ճիչերը, որոնք անյոյս մահուան են սպասում։ Կին, երեխայ, մեծ, փոքր…

Ինձ թուաց, թէ ես լսում եմ այդ իրար խառնուած ոռնոցը… Տեսնում եմ նրանց մերկ, վախից մեռելի պէս տժգոյն, իրար սղմուած։

Ցուրտ է… դողում եմ…

Յանկարծ ամէն ինչ լռեց։ Հիմա էլ լռութիւնն է զարզանդ ազդում…

Այդ մղձաւանջից ինձ սթափեցնում է դրան վրայ կախուած մուրճի հարուածների ձայնը։

Փողոցի դուռը բացւում է եւ մի երիտասարդ, ճրագը ձեռքին՝ մեզ դիմաւորում է մեր հիւրընկալը։

— Համեցէք, համեցէք… Ինչո՞ւ այսքան ուշացաք։

Աստիճաններով բարձրացանք մի լայն սպիտակ հաստ սիւնե-

րով կամարապատ պատշգամ: Խաղողի որթերի միջից, որոնք փաթաթուած հաստ սիւներին, ծածկել էին պատշգամը արեւի լոյսից, ականջիս հասաւ աղբիւրի միօրինակ նանի ասող կարկաչը:

Մենք մտանք մի ընդարձակ եւրոպական ճաշակով զարդարուած սենեակ: Սենեակի մէջտեղում սեղան էր պատրաստուած: Հազիւ էինք նստել, երբ ներս մտաւ երեխան գրկին մի երիտասարդ կին: Ուսուցչի կինն էր:

Նա մեզ ծանօթացրեց: Ես զարմացայ, որ երեսը բաց է, համարձակ հայեացքով: Բայց զարմանքս աւելի մեծացաւ, երբ սկսեց զոկերէն խօսել: Իմ զարմանքս փարատեց ամուսինը, պատմելով, որ Ներքին Ագուլիսում գտել է նրան քաղցած, հիւանդ, ընկած աւերակների մէջ: Նա վերցնում է նրան, խնամում եւ վերջն ամուսնանում հետը: Եւ դա նրա միակ կինն է: Բարի գալուստ ցանկանալով մեզ, նա հրաւիրեց սեղանի նստել:

Երկար բոլորս էլ լուռ էինք: Ես խօսք էի փնտռում դուրս գալու այդ անախորժ դրութիւնից, բայց չէի գտնում:

— Երեւի շատ ճնշող տպաւորութեան տակ էք: Այո... այո... չպէտք է լինէր այն, ինչ եղաւ...

— Մի՞թէ հնար չկար կասեցնել... չէ՞ որ դուք այստեղ էիք: Այնպէս հաշտ, լաւ ապրում էին. ի՞նչ պատահեց, որ յանկարծ ամէն ինչ տակն ու վրայ եղաւ... չէ՞ որ անզէն էին... չէին էլ մտածում կռուել: Մի՞թէ հնար չկար ետ պահելու:

— Հարցրէք Անդրանիկից, Նժդեհից, ինչո՞ւ այնքան թուրք գիւղեր աւերակ դարձրին... Ինչո՞ւ Անդրանիկն այնքան մարդ քշեց թափեց Արաքսը: Չէ՞ որ դուք էլ չկարողացաք ձերոնց ետ պահել: Տեսաք ճանապարհին այնքան աւերուած գիւղեր, տեսաք մերկ ու սովալլուկ խմբեր, անտուն, անապաստան դաշտերում թափուած արածելիս: Չմեղադրենք իրար: Մենք չհասկացանք, որ մեր թշնամին ընդհանուր է եւ փոխանակ զէնքը նրա կրծքին ուղղելու՝ իրար կոտորեցինք: Բուրժուազիայի զազիր, կոյր գործիքը դառանք... Զգոյշ լինենք եւ էլ ծուղակ չընկնենք:

— Վաղն էլ կարող էք խօսել, իսկ այսօր համեցէք նստեցէք եւ մի քիչ աւելի ուրախ բաներից խօսենք...

Եւ ոչ մի օր այլեւս անկարող եմ մնալ: Այս աւերակների մէջ սիրտս կը պայթի: Ցղնա էլ չեմ գնայ:

Ինչ դանդաղ է անցնում գիշերը:

Լոյսը թող բացուի․․ ․ պէտք է փախչել․․․ փախչել․․․

Առաւօտեան շատ զարմացան, երբ իմացան, որ պատրաստւում եմ գնալու․ շատ համոզեցին, որ մենակ չգնամ, բայց իմ որոշումն անդառնալի էր:

Շնորհակալ եղայ հիւրասիրութեան համար․ ոտով դուրս եկայ եւ որպէսզի ոչ Վերին եւ ոչ Ներքին Ագուլիսով չանցնեմ, ընկայ բաղերը եւ գետափով հասայ Օրդուբաթ:

Այցելեցի բժշկին, որի տանն իջել էինք Օրդուբաթ գալուց․ երբ իմացաւ մտադրութիւնս, խորհուրդ չտուեց մենակ գնալ, մանաւանդ այսօր, երբ ճանապարհին սպանութիւն էր պատահել եւ միլիցիան գնացել էր աւազակների ետեւից:

Այդ բանն ինձ փոքր ինչ մտածել տուեց, բայց վճիռս փոխել չկարողացաւ:

Շուկայ դուրս եկայ, մի ջորի վարձեցի մինչեւ Ջուլֆա եւ մի 13 տարեկան թուրք տղայի առաջնորդութեամբ դուրս եկայ Օրդուբաթից՝ վախը սրտումս: Բայց մութը դեռ չընկած՝ հասայ Ջուլֆա:

Մ․ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

1922 թ․

ԿԱՐՄԻՐ ՀԱՐՍՆՑՈՒՆ

190… թուի ամառը ուսանող Փանեանը աքսորուել էր Մոսկուայից, որպէս յեղափոխական եւ ապրում էր ոստիկանութեան հսկողութեան տակ:

Երկու շաբաթ անգործ ու անփող թափառելուց յետոյ, գտել էր մի մասնաւոր դաս եւ նրա յոյսով վարձել սենեակ՝ քաղաքի յետ ընկած թաղում: Սենեակի միակ պատուհանը նայում էր նեղ ու ծուռ փողոցին, իսկ հորիզոնը ծածկում էր դիմացի հին տունը, որի պատը — ծծուած երկար տարիների խոնաւութեամբ, վաղուց էր կորցրել իր երբեմնի սուաղը, բացելով հին ձեւի աղիւսների շարքերը: Սենեակն այնքան փոքր էր, որ նրա մէջ զգալի տեղ էին գրաւում ուսանողի գրքերը:

Տանտիրուհին — հին սովորութիւններով մեծացած մի կին, երկիւղ էր զգում այդ հաստ գրքերից, ու մէկ էլ պատերին կպցրած երկար մազերով պատկերներից: Բայց ամենից շատ նրան անհանգստացնում էր ուսանողի «անգործութիւնը»․ նա ամբողջ օրը նստած գրքեր էր կարդում: Երեք օր դիտելուց յետոյ՝ նա ասաց իր ամուսնուն, որը ճոթեղէնի վաճառական էր․

— Գիտե՞ս, էս մեր նոր կենողը ուրիշ տեսակի մարդ ա երեւում, մի գլուխ գրքեր ա կարդում ու պատերին էլ կպցրել է երկար մազերով «ֆարմասոնների» պատկերներ:

— Հիմի ասելդ ի՞նչ ա․ վախում ես՝ ես էլ ֆարմասոն դառնա՞մ:

— Չէ, էն էի ուզում ասել, որ անգործ ա երեւում․ ինչո՞վ պէտք ա սենեակի քրեհը տայ:

— Հէր օրհնած, եքա տղայ ա, մի հինգ մանէթ չի՞ ճարի որ տայ:

Տանտիրուհին հանգստացաւ, նկատելով որ ամուսինը չի չարանում իր արած սխալի համար: Բայց նրա հետաքրքրութիւնը գրգռում էր ուսանողի տարօրինակ կեանքը, ուստի եւ շարունակ խուզարկու հայեացքով հետեւում էր նրան:

Ամէն անգամ, երբ ծառան աշխոյժ շարժումներով մաքրում էր ուսանողի սենեակը, տանտիրուհին ներս էր մտնում, իբր թէ օգնելու համար, բայց իսկապէս նրան տանողը կանացի հետաքրքրութիւնն էր, նա ուշի ուշով զննում էր ուսանողի սեփականութիւնը:

Սեղանի վրայ մի հաստ գիրք կար․ ո՞վ գիտէ, «զակո՞ն» էր, աւետարա՞ն, թէ մի ուրիշ, աւելի խորհրդաւոր բան... Մի օր էլ չհամբերեց, կանչեց հարեւանի փոքր տղային ու ցոյց տալով գիրքը հարցրեց.

— Երուանդ, էս ի՞նչ գիրք ա:

— Վրէն կապիտալ ա գրած:

— Կապիտալը ի՞նչ ա:

— Ռուսերէն ա, չգիտեմ:

Ամբողջ օրը տանտիրուհին կրկնում էր մտքում «կապիտալ»ը խառնելով «կլապիտոնի» հետ: Երբ երեկոյեան վերադարձաւ ամուսինը՝ նա հարցրեց.

— Սէրգօ, կապիտալը ի՞նչ բան ա:

— Բա, վաճառականի կնիկ ես ու կապիտալը չես իմանում — կապիտալը փողն ա էլի...

Փո՞ղը... ինչ խելօք տղայ ա եղել մեր նոր կենողը, մի գիրք ունի վրէն կապիտալ ա գրած, միշտ էն ա կարդում:

— Երեւի ուզում ա հարստանայ. ի՞նչ կայ որ հիմի ամէնքը գիշեր ցերեկ հարստանալու մասին են մտածում:

«Խելօք տղէն» այդ օրուանից նստեց տանտիրուհու մտքում: Շուտով նա աւելի ամրացաւ այդ համոզմունքի մէջ, երբ իմացաւ, որ Փանեանը մասնաւոր դաս ունի: Այժմ աչակերտը ինքն էր գալիս պարապելու ուսանողի մօտ:

Եւ քանի որ տանտիրուհին մի անբժշկելի հիւանդութիւն ունէր՝ իր բարեկամներին ու ծանօթներին ամուսնացնելու հիւանդութիւնը, ուստի այդ տեսակէտից էլ սկսեց մօտենալ եւ Փանեանին:

«Խելօք տղայ ա, ուշք ու միտքը փողի վրայ... Ինչպէս տղին կը սազի մեր Նատալիէն... Մեղք ա քուրս, աղջիկը հասել ա, չի իմանում ո՞նց ճամբու դնի»...

Եւ ահա այդ մեծ հարցը սկսուեց քննութեան առնուել երկու քոյրերի միջեւ: Տանտիրուհին յայտնում էր քրոջը իր դիտողու-

թիւնները ուսանողի մասին, մասամբ, ծածկելով թերի կողմերը:

Ծրագիրն իրագործելու համար տանտիրուհին երբեմն հրաւիրում էր ուսանողին թէյի կամ սուրճի, հիւրասիրում քաղցրաւենիներով, թխուածքներով ու զգուշութեամբ հարցեր տալիս, նոր «հանգամանքներ» իմանալու համար:

— Որ ուսումն աւարտէք, ի՞նչ պէտք է դառնաք:

— Ադվոկատ եմ լինելու:

— Լաւ գործ ա, Ասլանովի պէս սեփական տուն, սեփական կառք կ'ունենաք:

— Հա, ի հարկէ, համաձայնւում էր Փանեանը, ժպտալով:

— Բայց մենակութիւնը լաւ չի... Ինչի՞ չէք պսակւում:

— Ես ոչ թէ ադվոկատ, այլ վարդապետ պէտք է դառնամ, — կատակելով պատասխանում էր Փանեանը:

— Չէ, հանաքը դէնը, եթէ մի լաւ նամուսով աղջիկ ըլի, — օրինաւոր ընտանիքից, բաժինքով, չէք ուզի՞լ...

Ուսանողն զգաց, որ «ցանց» է պատրաստւում, բայց իրեն չհասկանալու տուեց:

— Հա, եթէ մի էնպէս աղջիկ պատահի, — հարուստ, գեղեցիկ, սեւաչեայ, կամար յօնքերով, էն ժամանակ կը մտածեմ...

Տանտիրուհին ժպտում էր, հիւրասիրում բազմատեսակ մուրաբաներով ու մտքում ասում.

— Կամաց-կամաց կը կակղես... Մի օր էլ ոտդ թել կը կապենք...

Ամառուան արեւը մայր մտնելու մօտ էր: Քաղաքի փողոցները, տները, կարծես մեծ հրդեհից յետոյ անդրադարձնում էին կուտակած տաքութիւնը, ջերմ ալիքներով ողողում անցորդներին:

Ուսանող Փանեանը վերջացրել էր իր դասը, մի ժամ էլ կարդացել Բելտովի գրքերից — պատմական մատերիալիզմի մասին ու դուրս եկել փողոց:

Վերջերս նրան տանից դուրս վանողը իր ողբալի ֆինանսական վիճակն էր. երկու օր է, չէր ճաշել, իսկ այսօր հաւաքել էր թամբաքուի վերջին փշրանքները ու հազիւ մի անգամ ծխել: Սենեակի վարձն էլ պայմանաւորուել էր սկզբից վճարել, սակայն բացի խոստումներից, դեռ ոչինչ չէր տուել: Լաւ է, տանտի-

բուհին, նկատի առնելով, որ ուսանողը փեսացու է, շատ քաղաքավարի եւ փափուկ ձեւով էր յիշեցնում, թէ չէ այս կողմից էլ դրութիւնը ողբերգական կը լինէր։

Միակ յոյսը մասնաւոր դասն էր, բայց սա էլ թարսուել էր. ամէն օր մտադրւում էր փողն ուզել, բայց հէնց որ մօտենում էր ասելու րոպէն, յետաձգում էր միւս օրուան։ Ուրեմն մնում էր պարտք անելը, բայց ո՞ւմից... Բոլոր աղբիւրները արդէն ըսպառուած էին։ Այնուամենայնիւ նա դուրս էր գալիս փողոց, յուսալով, որ կը հանդիպի որեւէ ընկերոջ կամ ծանօթի եւ կը փրկուի այս դրութիւնից։

Նրա արտաքինի վրայ աղքատ ուսանողի դրոշմ կար. հագած էր ռուսական ձեւի կապոյտ բլուզ, ու վրան կապել փնջաւոր, բարակ քամար։ Շալվարը մաշուած էր, սուաղուած ու «հայելի» դարձած. ուսանողական գլխարկը խունացել էր, կապոյտից կանաչի փոխուել, իսկ կօշիկները բաւականաչափ կարկատաններ ունէին։

Փանեանի դէմքը իր խոժոռուած, խիտ յօնքերով, ակնոցների տակից նայող քննական յարձակողական հայեացքով «ժխտողական» արտայայտութիւն ունէր։ Մէջը վխտացող նոր գաղափարներից թեւաւորուած, նա պահանջ էր զգում վիճելու, նոր հաւատի բերելու ամէնքին, տապալելու բուրժուական ամրութիւնները։

Փողոցի անկիւնում նա կանգ առաւ, որոշելու համար, թէ ո՞ւր պիտի գնայ, ո՞ւմ պիտի դիմի պարտք անելու համար, բայց դրա փոխարէն յիշեց նոր կարդացած գիրքը։

— «Թեզիս, անտիթեզիս, սինթեզիս» կրկնում էր նա մըտքում նոր կարդացած գրքի ազդեցութեան տակ, ձեռնափայտով խփելով գետին։ «Ամէն ինչ, որ գոյութիւն ունի, խելացի է... իմ անփողութիւնն էլ գոյութիւն ունի,— ուրեմն,— խելացի է...

Անասելի շոգից ամէն քայլի հետ քրտինքը վրայ էր տալիս։ Նեղ փողոցների ծանր, գարշահոտ օդը ճնշում էր շնչառութիւնը։ Հասնելով փոքր հրապարակին, Փանեանը յանկարծ ցընցուեց. «Էլլի էս կողմովն անցայ... գրողը տանի, չէ՞ որ վճռել էի դէսը չգալ»...

Նրա շփոթութեան պատճառը պատուհանից նայող օրիորդն էր, իր տանտիրուհու քրոջ աղջիկը։ Օրուան որ ժամին էլ անց-

նէիք, կը տեսնէիք նրան հրապարակի կողմի պատուհանից դիտելիս: Նայում էր աչքի տակով, բայց նկատում ամէն ինչ, կարծես լուսանկարում էր անցորդներին:

Ամէն անգամ, երբ Փանեանը անցնում էր այս տան առաջից, նա ընկնում էր շփոթութեան մէջ: Այնպէս էր թւում, թէ օրիորդը նկատում է նրա արտաքինի վրայ ինչ որ ծիծաղելի բան,— թւում էր, թէ շորն է պատռուած (մանաւանդ շալվարը, որն արդէն հոգեվարքի մէջ էր), կամ մի բան թարս է հագել, բլուզի տակից շապիկն է երեւում, եւայլն եւայլն. երեւակայութիւնը պատկերացնում էր մի շարք այսպիսի պատահարներ:

Հէնց որ օրիորդը նկատում էր ուսանողին, նա մի առանձին հետաքրքրութեամբ սեւեռում էր նրա վրայ իր դալուկ դէմքը եւ աչքերը չռում ագահութեամբ, ասես վախենալով, որ կարող է մի բան բաց թողնել առանց նկատելու:

Ու ամէն անգամ իրար տեսնելիս, նրանց մէջ սկսւում էր մի տարօրինակ լուռ խօսակցութիւն, որն այս անգամ կարելի էր թարգմանել այսպէս.

Օրիորդը.— Ի՞նչ ես ավարա ման գալիս — սոցիալիստութիւն անում... պսակուիր հետս... փող, բաժինք կը բերեմ, տուն կը գնես — կը հարստանաս...

Ուսանողը.— Քո բաժինքի հետ դու կը բերես եւ քո սահմանափակ, քաղքենի ուղեղը...

Օրիորդը.— Ի՞նչ ես շատ երեւակայում — տես կօշիկդ պատռուել է, սպիտակ գուլպան երեւում է... (աչքերը չռած դիտում է ուսանողի կօշիկները):

Ուսանողը (Շփոթւում է, կարմրում մինչեւ վիզը).— Փո՛ւհ, մոռացայ, որ կօշիկս պատռուած է... գոնէ թանաքով սեւացնէի սպիտակը...

... «Պէտք է վերջ տալ այս կոմեդիային», ասաց ինքն Փանեանը, անցնելով օրիորդի «քաւարանից»: Սակայն նա միշտ այսպէս վճռում էր ու յետոյ մոռանում, իսկ տանտիրուհին շարունակում էր հարսնախօսութիւնը, չնկատելով ուսանողի զաւեշտական վերաբերմունքը:

Օրիորդը արդէն գիտէր հարսնախօսութեան մասին: Ամէն օր մայր ու աղջիկ կշռադատում էին ուսանողին, մէկ ոգեւորուելով նրա ապագայ դիրքով, մէկ կասկածելով: Սակայն դրականը

մինչդ յաղթում էր բացասականին, եւ Փանեանն օր օրի վրայ ամ-րանում էր փեսայի դիրքում։

Նեղ փողոցից դուրս գալով, Փանեանն ընկաւ խանութների շարքը։ Վաճառականները նոր զարթած յետ-ճաշեայ քնից, նըստել էին խանութների առաջ ու թմրած աչքերով նայում էին դիմացը, թոյլ ծոյլ հովհարելով թաշկինակներով բաց կրծքերը։ Պիղժակները հանած, ժիլէտների կոճակներն արձակած, նրանք գերազանցում էին իրար փքուած փորերով, կախ ընկած թշերով ու հաստ, արիւնակալած վզերով։ Երբեմն նրանցից մէկն ու մէկը կոպիտ ձայնով կանչում էր գործակատարին, ապսպրում զովարար խմիչքներ, ու բերելուն պէս խմում ուղղակի շիշերից։

Փանեանն անցնում էր, թունոտ հայեացքներ ձգելով ճարպակալած դէմքերին, ու խորհրդածում էր — «ա՛խ, յեղափոխութիւնը, ո՞ւր ես մի դուրս չպրտես այս գիշատիչներին իրենց որջերից»...

Մինչդեռ նա անցնում էր այսպէս խորհրդածելով, յանկարծ նկատեց, որ իր շուրջը իրարանցում է ընկել։ Վաճառականները շտապ-շտապ, վեր էին թռչում, հագնում պիղժակները ու կանգնում խանութների առաջ։

Ուսանողը ետ նայեց։ Յայտնի հարուստ Թարխանեանն էր գալիս։ Այսօր նա բաւական ուշ էր վերադառնում իր գրասենեակից, երեւի մի անակնկալ լուր էր ստացել։

Նրան ուղեկցում էին մի խումբ աչքի ընկնող վաճառականներ, որոնք սովորաբար միանում էին չքախմբին իրենց խանութներից — Համբարձում Գերասիմիչին մեծարելու, նրա աչքը քաղցրացնելու համար։

Թարխանեանը գալիս էր ծանր, նշանակալից քայլերով, ու քայլերի հետ զուգընթաց կանոնաւոր շեշտով խփում էր գետնին իր արծաթագլուխ ձեռնափայտը։ Միահեծան իշխանի նման նա ծանրացնում էր իր ամէն մի շարժումը եւ թունոտ հաճոյքով ընդունում էր իր վրայ դարձրած հպատակուող հայեացքները։ Նրա գոռոզ դէմքը — իր խոժոռած յօնքերով ջղուտ կնճիռներով ու պաղպաղ աչքերով մի ձգտում էր ցուցադրում — ընկճելու, ստորացնելու մարդկանց։ Խանութների առաջ շարուած վաճա-

ռականները խորը գլուխ էին տալիս, բայց Թարխանեանը ձեւացընում էր, իբր չէր նկատում: Իր շուրջը պատած վաճառականները, մէկ մէկու առաջ կտրելով, խօսում էին հետը, ամէն կերպ աշխատելով իրենց վրայ դարձնել ուշադրութիւնը, բայց նա չլսելու էր տալիս ու աջ ու ձախ դարձնելով դէմքը, մեքենաբար հարցնում էր·

— Հը՞:

Խօսողը նորից էր կրկնում իր ասածը, բայց Թարխանեանը իր արհամարհող բարձրութիւնից ողորմութեան պէս ուշադրութեան մի փշրանք էր ձգում ու համարեա մեքենաբար կրկնում·

— Հա՛...

Ու այս «հը՛» եւ «հա՛»ի մէջ նա դիրիժեօրի նման ղեկավարում էր շրջապատի քծնող երաժշտութիւնը:

Մի րոպէ Թարխանեանի եւ ուսանողի հայեացքներն իրար հանդիպեցին: Թարխանեանի մէջ մի անախորժ զգացում անցաւ Փանեանի չխոնարհուող դէմքից, որը նրա աչքի համար անսովոր ու խորթ էր:

— Էս վարժապետի սիաթին մտիկ արա,— ասաց նա իր կողքի վաճառականին,— հէնց իմանաս վեկսիլը «պրոտեստ» է գնացել...

— Քաղցած ստուդենտ է երեւում, ժպտալով ուղղեց վաճառականը:

— Հաշիւը մէկ ա, մազերը երկար, ջեբը՝ դատարկ...

Ուսանողը կանգնել էր հպարտ ու ձիգ եւ հեգնող ժպիտը դէմքին, շեշտակի նայում էր Թարխանեանին ու ասում մտքում.

— Պատմութեան դիալեկտիկան քո գերեզմանն է փորում օր ու գիշեր...

Թարխանեանի շքախումբն արդէն անցել էր, բայց Փանեանը մի քանի րոպէ դեռ նայում էր ետեւից: Ապա սթափուելով, նա ամուր խփեց գետնին ձեռնափայտով, ու շարունակեց իր ճամբէն:

Մեծ հրապարակի անկիւնում նորից Փանեանի աչքին ընկաւ «Պարիկմախեր Ժորժ»ի ցուցանակը: Բացի ճակատի մեծ ցուցանակից, կար եւ մի փոքրը վարսավիրանոցի անկիւնի ուղղութեամբ: Քամին ծռել էր ցուցանակը եւ «պարիկ–մախերի» տեղ

թողել միայն «մախերը», բայց ինչպէս երեւում էր, Ժորժը (կամ Ղազախեցի Մուքէլը) դրա մասին իսկի չէր էլ մտածում:

Ուսանողը ներս մտաւ վարսավիրանոց: Նրա առաջ բացուեց մի հոյակապ տեսարան — մեծ հայելու առաջ, գլուխը մարմարեայ սեղանին յենած, քնել էր Ժորժը ու խռմփացնում էր իր մեծ քթով այնպէս ուժգին, որ հայելիները դողդողում էին: Մի առանձնայատուկ վարսավիրային անուշահոտութիւն էր տիրում ներսը, որից այդ շոգ պահին կարելի էր ուշաթափուել:

Ուսանողը մտադիր էր հիմնովին սարքելու մօրուքն ու բեխերը, դէմքը փոխելու նպատակով, որովհետեւ երեկոյեան պիտի գնար բանուորական ժողովի: Բայց Ժորժի քունը այնքան համոզիչ էր, որ նա սիրտ չարաւ զարթեցնելու, մանաւանդ որ ապառիկ պիտի սափրուէր:

— Ո՞վ սուրբ անդորրութիւն... — Ահա մի մարդ, որին յեղափոխութիւն չի հարկաւոր, ասաց Փանեանը ինքն իրեն ու ժպտալով դուրս եկաւ վարսավիրանոցից:

Անցնելով բուլվարը, նա ըստ սովորութեան կանգ առաւ գրախանութի առաջ, նոր լոյս տեսած գրքերին աչք ածելու համար: Երբ ուզում էր անցնել վիտրինայի երրորդ մասը, յանկարծ նկատեց աջ կողմից մի մարդ, որը կասկածելի թուաց· Թէպէտ հագել էր բանուորի հասարակ շորեր, բայց երեւում էր, ինտելիգենտ էր, բայց իրեն բանուորի էր ձեւացնում:

Նրան մատնում էին իր գաղտնի հայեացքները, որ նա մէկ-մէկ աչքի տակով դարձնում էր ուսանողի վրայ ու չինծու անտարբերութիւնը,— իբր թէ իսկի էլ չէր հետաքրքրւում Փանեանի գոյութեամբ եւ միայն գրքերն էր նայում:

«Գաղտնի ոստիկան է», անցաւ Փանեանի մտքով· Նա մի քանի րոպէ դիտմամբ կանգնեց վիտրինի առաջ, իբր թէ չէր նկատում ոչինչ, ապա հեռացաւ դանդաղ քայլերով, որպէսզի կասկած չը յարուցի, մինչեւ որ հասաւ դէպի աջ թեքուող փողոցին:

Այստեղ նա մատնեց իր անփորձութիւնը — թէպէտ գիտէր, որ չպէտք է ետ նայել, բայց չհամբերեց , ետ նայեց: Գաղտնի ոստիկանը դարձեալ կանգնած էր վիտրինի առաջ եւ աչքի տակով հետեւում էր ուսանողին:

Ծռելով ճամբէն դէպի աջ, Փանեանն արագացրեց քայլերը· շատ չանցած, նա ընկաւ նեղ փողոցների ցանցը ու պտոյտ տալով

Նորից դուրս եկաւ քաղաքի կենտրոնը։

«Սա էլ մի բան չէր, մտածեց նա.— փոխանակ հեռանալու կենտրոնից, նորից եկայ այստեղ»։

Նա ներս մտաւ Ժորժի վարսավիրանոցը եւ սափրուելուց յետոյ՝ շտապեց դէպի քաղաքային փոքրիկ այգին, որտեղ պիտի հանդիպէր բանուոր Մարգարին։

II

Մի փոքրիկ այգի էր, այնքան փոքր, որ միայն անճարացած քաղաքացին կարող էր նրան այգի համարել։ Մի քանի չփթթուած ծառեր, մի քանի մարգեր, նստարաններ։ Շրջապատի փողոցների փոշին ու աղմուկը ազատ մուտք ունէին այնտեղ, այնպէս որ կարելի էր նոյնիսկ հարց տալ, ինչո՞վ է զանազանւում այգին փողոցից։ Կարճ ասած,— փոքրիկ այգին այն Ֆիքցիաներից էր, որոնց մարդիկ հաւատում են, ուստի եւ նա լաւ էր կատարում իր դերը։

Ամառուան երեկոներն այստեղ էին հաւաքւում համեստ կարողութեան եւ համեստ երեւակայութեան տէր մարդիկ — մանր ռանտէրեր, երեսուն–քառասուն ստացող ծառայողներ, կոտր ընկած վաճառականներ, հանգստացող ծերունիներ։

Կար մի խումբ, որը համարեա ամէն երեկոյ գալիս էր, գրաւում միեւնոյն նստարանն ու զրուցում, սկսելով եղանակից, ապա անցնում արտաքին քաղաքականութեան, կրկնելով քաղաքի փոքրիկ լրագրի փոքրիկ դատողութիւնները Անգլիայի, Ֆրանսայի ու Գերմանիայի մասին։

Այնուհետեւ պատմում էին պատերազմներից, հին–հին բաներից ու վերջը գալիս, կանգ առնում հարուստների վրայ, խօսում նրանց նիստ ու կացի, բնաւորութիւնների, թողած կտակների մասին։

Զրուցում էին հանգիստ տոնով, առանց շտապելու ու մէջ-մէջ բարձր ձայնով յօրանջում։ Այնպիսի անդորրութիւն էր տիրում, ասես վաղուց սահմանուած կարգով մի հին սրբագործուած պատմութիւն էին կարդում։

Ու ամէն երեկոյ, նոյնպէս որոշ կարգով գալիս կանգնում էր

այգու դիմաց, ու ժպտալով նայում էր ներքեւ իր եօթն աչքերով, կարծես ուրախանալով, որ երկրի վրայ էլ կան համաստեղութիւններ, նոյնպէս հաստատուն եւ կանոնաւոր ընթացքով:

Ներս մտնելով այգին, Փանեանը երկու անգամ պտոյտ արաւ, բայց չհանդիպեց բանուոր Մարգարին: Ծառուղիով անցնելիս՝ նա յանկարծ դիպաւ իր ընկերոջ — Միքայէլեանին:

— Բարեւ, Աշոտ:

Միքայէլեանը կարծես վեր թռաւ:

— Փանեան, դու ե՞ս, հարցրեց խանձուած ձայնով:

— Հը՞, ո՞նց ես... բեր մի ծխեմ. էսօր երջանիկ դրութեան մէջ եմ — ոչ ճաշել եմ, ոչ կարգին ծխել:

Միքայէլեանը հանելով գրպանից ծխախոտի տուփը — ապա մի թղթադրամ ու դրեց Փանեանի ձեռքին:

— Ուրի՞չ ինչ կայ, հարցրեց Փանեանը մեծ բաւականութեամբ ներս քաշելով թամբաքուի ծուխը:

— Նոյն դրութիւնը շարունակւում է, տխուր պատասխանեց Միքայէլեանը:

— Երեւի այնքան ես տարուած, որ էլ ուրիշ բաների մասին չես մտածում. կարդացի՞ր էն... հարցրեց նա ցած ձայնով:

— Կարդացի, բայց ուշքս վրէս չէր. գիտե՞ս, Լեւոն, պարզ կ'ասեմ — ինձանից սոցիալիստ չի դուրս գալ. թէկուզ գլուխս սոցիալիստ դառնայ, մարմինս կը մնայ բուրժուա...

— Ուրեմն դեռ էլի ոտով-գլխով տարուած ես:

— Էհ, ի՞նչ ասեմ,— հառաչանքի տոնով պատասխանեց Միքայէլեանը, ձեռքը յուսահատօրէն շարժելով վերեւից ներքեւ:

— Դէհ, ցտեսութիւն,— ասաց Փանեանը, չուզենալով խանգարել նրա միայնութիւնը:

Միքայէլեանը հազիւ լսելի ձայնով հրաժեշտ տուեց ու շարունակեց ետ ու առաջ քայլել:

Արդէն մի շաբաթից աւելի էր, Միքայէլեանը այնքան յաճախ էր գալիս այստեղ, որ համարեա իր տունն էր դարձրել այս փոքրիկ այգին:

Նրա գաղտնիքն այն էր, որ սիրահարուել էր դիմացի տանն ապրող օրիորդի վրայ, բայց նրա ծնողները, իրենց «լայեղ» չտես-

նելով Միքայէլեանին, խատիւ արգելել էին օրիորդին տեսնուել նրա հետ, նոյնիսկ վերջերս տնից դուրս չէին թողնում։

Ամէն երեկոյ մի քանի անգամ օրիորդը երեւում էր այգու դիմացի պատշգամում, կանգնում էր լապտերի մօտ, որպէսզի «Նա» տեսնի ու իր լուսնի նման սպիտակ, թախծոտ դէմքը դարձնում էր դէպի այգին։

Նոյն րոպէին ուսանողն էլ դուրս էր գալիս այգուց ու կանգնում փողոցի լապտերի տակ, որպէսզի «Նա»ն տեսնի, ու սիրաբորբոք հայեացք էր նետում դէպի պատշգամը, մրմնջալով սիրային խօսքեր։

Այսպէս նայում էին իրար, մինչեւ որ օրիորդը յիշում էր մօր խստութիւնը ու ներս մտնում սենեակը։

«Լուսինը» մայր էր մտնում եւ Միքայէլեանը սրտակոտոր վերադառնում էր այգին ու շարունակում էր քայլերը մինչեւ ուշ գիշեր, լցնելով ծառուղին իր ախ ու վիշտով ու թամբաքուի քուլա քուլա ծխով։

Բաժանուելով Միքայէլեանից՝ Փանեանը տխուր մտածմունքների մէջ ընկաւ.— «Ահա կ՚անցնեն օրեր, ասում էր ինքն իրեն, օրիորդի ծնողները կը հաշտուեն, Միքայէլեանն էլ կ՚աւարտի, կ՚ամուսնանայ ու կը դառնայ մի զոնտիկաւոր քաղքենի ... Այո, նա էլ այնտեղ նստած «համասատեղութեանն» է պատկանում, զուր եմ տալիս այն գրքերը...

Իսկ «համաստեղութիւնն» արդէն հաւաքուել էր, բազմել Նստարանի վրայ։ Բայց այսօրուան խօսակցութեան մէջ ինչ որ անհանդստութիւն էր նկատւում ու ձայներն էլ սովորականից բարձր էին հնչում։

Խօսում էր տնատէր Բուդաղեանը։

— Ախպեր, ես ասել եմ, եւ կ՚ասեմ,— օրէնքը պէտք ա էնպէս պինդ ըլի, որ էս ճամբից դուրս եկած մարդկանց հախից գայ։ Հմի խօսքս ի՞նչի վրայ ա,— իմ տունը, կարելի ա տեսած ըլէք,— լաւ տուն ա, է՛հ, լաւ կենողներ էլ շատ եմ ունեցել։ Բայց հիմի մի բանուոր ա ապրում ներքեւի սենեակում,— ի՞նչ ասեմ, Թամամ Աստծու կրակ ա... Առաջուան ժամանակը ո՞վ կը լսէր բանուորի կամ արհեստաւորի ձէնը։ Սա մի ուրիշ բան ա.

էլ դադար չի տալիս։

— Ի՞նչ ա ուզում,— հարցրեց կողքին նստող «նախկին» վաճառականը։

— Ինչ ա ուզո՞ւմ. ղալմաղալ ա ուզում. մէկ ասում ա. տունդ խոնաւ ա, ի՞նչի առաջուց իմաց չարիր, մթամ ես խաբել եմ... էն օրն էլ կանգնել է թէ տունդ ճեղքուած ա, պէտք ա կամիսիա կանչել տամ, որ քննեն, տեսնեն։ Մէկն ասի — առաջինը՝ իմ տունը քանդուելու ի՞նչ ունի, դրանից էլ լաւ տո՞ւն... վրայ նրկուսն էլ ապրանքը իմը չի՞, հաւանում չե՞ս,— գնա ուրիշ տեղ, թող իմ խոնաւ սենեակը ինձ մնայ...

Յանկարծ նստարանի առաջ պայթեց մի անսովոր, ուժեղ ձայն, որը բոլորովին խորթ էր համաստեղութեան կարգերին։

— Ստի հէրն անիծած, թէ քո տունը չի քանդւում։

Բուղաղեանը վեր թռաւ տեղից.

— Էստեղ էլ դադար չես տալի՞ս. գրգռուած պատասխանեց նա, ի՞նչ քո գործն ա թէ ում տունն ինչպէս ա, չես ուզում, գնա էնտեղ, որտեղից եկել ես։

— Ջեմ գնայ, մինչեւ գլխիդ կամիսա չբերեմ. ինձ որ խաբեցիր, խոնաւ տունդ «սաղացրիր», բա քեզ կը մարսեցնե՞մ։

— Ապրանքը իմը չի՞... Գնա էլի, թէ չես ուզում։

— Ի՞նչ ապրանք, էդ որտեղի՞ց ա, ապրանքը քո ձեռքով ա շինուա՞ծ, թէ՞ ինձ պէսների։

— Էդ խաբարները գնա քու համփսոններին ասա. էստեղ քու ուզած մարդը չկայ։

— Գնա էլի, «էն թաւուրների» ականջներին փսփսայ, կարելի ա փող էլ տան, լաւ փեշակ ա...

— Խաթա ես գլխիս. ի՞նչ ես կուպրի նման կպել. ես գիտամ, դու ուզում ես իմ տան գլխին խաթա բերես, համա ներողութիւն կ'անես,— հէնց դուրս անել տամ քեզ, որ իմանաս թէ օրէնքը որտեղ ա։

— Ո՞ւմ դուրս անես, մի փորձի տեսնեմ...

— Ախպեր, գնանք, էստեղ էլ չեն թողնում մարդ հանգստանայ...

Ու արագ քայլերով դուրս գնաց այգուց։ Նրան հետեւեցին համաստեղութեան միւս անդամները, վախենալով որեւէ անկարգութիւնից։

Փանեանը հէնց սկզբից նկատեց, որ խօսողը բանուոր Մարգարն էր: Երբ Բուղաղեանը դուրս գնաց այգուց, նա մօտեցաւ Մարգարին ու թեւքից քաշեց:

— Էս ո՞ւր ես, չերեւացիր ժամանակին:

— Դո՞ւ ես Լեւոն... չճանաչեցի: Գնանք խօսելով:

Նրանք դուրս եկան այգուց եւ կանգ առան մօտակայ ոչ բանուկ մի փողոցում: Խօսում էին ցած ձայնով:

— Ժողովը յետաձգեցինք վաղուան, նոյն ժամին: Էսօր չյաջողուեց:

— Էս ի՞նչ կռուի մէջ էիր:

— Որ իմանաս, թէ ինչ աւազակ մարդ ա իմ տան տէրը, չես զարմանալ, էդ լիրբը գնացել ա մատնել, թէ մեր տանը ժողովներ ենք անում: Լաւ է առաջուց իմացայ (թէ ինչպէս, յետոյ կ'ասեմ) թէ չէ կարող էինք խաթի մէջ ընկնել: Եկան խուզարկեցին, բան մը չգտան, դէ, ի հարկէ, առաջուց մաքրել էի:

— Հա, մի քիչ անզգոյշ էիր խօսում:

— Բայց ասեմ — էնպէս կատաղած էի էդ անիծածի վրայ, որ հէնց նրա ագռաւի ձէնը լսեցի թէ չէ, էլ չկարողացայ համբերեմ, որ կախաղան էլ տանէին, էլի կ'ասէի: Ա՛խ, մի դրա դատաստանն ինձ տան, ես գիտամ, թէ ի՞նչ կ'անեմ:

— Բայց էս երեկոյ նրանց «դաստէն» խանգարեցիր:

— Հա, լաւ են իրար գտել, սրանք որ կան — էն մեծ բուրժուաների մանր մունր տականքներն են, բայց նրանցից աւելի են հարահրոց անում: Սոցիալիստների գործադուլի մասին, որ լըսում են, էնպէս են խելքները կորցնում, հէնց իմանաս ահեղ դատաստանն ա գալիս: Սրանք հէչ, աւելի մեծերը, ուժեղները կան — նրանք են մեր գլխաւոր թշնամիները...

— Ուրիշ, ընկերները ո՞նց են:

— Լաւ են. հետզհետէ գործադուլի տրամադրութիւն է ըստեղծում: Է՛հ, պէտք է ուժեղացնենք կռիւը, միշտ պատրաստ պահենք մեր զէնքերը... Ընկ. Լեւոն, ճիշդ է, մենք տանջւում ենք, բանտարկւում, աքսորւում, բայց վերջը կը յաղթենք, էս ձեռքը վկայ, կը յաղթենք... Ասաց ու բռունցքը ուժեղ թափահարեց:

Տիրեց րոպէական լռութիւն: Մարգարը ուշադրութեամբ նայում էր փողոցի ուղղութեամբ:

— Տեսնո՞ւմ ես Լեւոն, ասաց նա իրեն, մէկը էն անկիւնից մեզ հետեւում ա կամ ինձանից ա կպել կամ քեզանից. ասենք դու «նորընծայ» ես, դժուար թէ շուտ նկատես:

«Նորընծայ» խօսքից ուսանողը կարմրեց, ինչպէս երբեմն կարմրում էր, երբ ասում էին — «բեխերդ նոր են դուրս եկել»: Չնայած, որ նա նոր էր յեղափոխութեան ասպարէզ իջել, բայց իրեն փորձուած յեղափոխական էր հաշւում:

— Էսօր մէկն էլ ինձ էր հետեւում:

— Դէ, ցրուենք, թէ չէ կը կպչի: Ցը, ուրեմն վաղը, էլի նոյն տեղը ժամը 9-ին: Դու աջ գնա, ես՝ ձախ:

Մարգարը հեռացաւ արագ քայլերով, իսկ ուսանողը մի քանի փողոց անցնելով, մտաւ առաջին պատահած կաթնատունը, շտապ շտապ կերաւ մի բաժակ մածուն, գնեց ծխախոտ ու քայլերն ուղղեց դէպի տունը:

Լուսինը դուրս եկաւ, մի առանձին խորհրդաւորութիւն եւ քնքշութիւն սփռելով ամէն ինչի վրայ: Ուսանողը գնում էր տունը ամայի փողոցներով, ծխում էր ու խորհրդածում: Այսուհետեւ իր կեանքի նպատակը թւում էր որոշ — նա պիտի արթնացնէր ժամանակիս հսկային — պրոլետարին, ու ցոյց տար նրան իր պատմական ուղին: Նա իրեն կոչուած էր համարում մի մեծ, բայց չարքաշ գործի համար, եւ զգում էր, որ այդ գործը նախ եւ առաջ պահանջում է անձնազոհութիւն: Ու երբ մտածում էր անձնազոհութեան մասին՝ թեթեւ ամպի նման մի տխրութիւն էր իջնում. թւում էր թէ կասկածում է իր ուժերի վրայ ու հարց էր տալիս ինքն իրեն, արդեօք պատրա՞ստ ես զոհուելու...

Տխուր ամպը գալիս է, անցնում... Ի հարկէ, նա պատրաստ է զոհուելու այդ մեծ, նոյնիսկ մեծագոյն գործի համար... Ինքնասիրութիւնը շոյլում էր, որ վաղուանից պիտի ուժեղացնի իր գործունէութիւնը:

Լուսինը նայում էր վերեւից ու թւում էր, աւելի էր վեհացնում, յաւերժացնում նրա մտքերը: Երեւակայութիւնը թռչում էր հեռու, ու մէկը միւսից աւելի գրաւիչ պատկերներ ստեղծում...

Ահա ընդհանուր գործադուլ է.— Ընկեր Լեւոնի ղեկավարութեամբ խմբուել է քաղաքի հսկայական բանուորութիւնը... Յանկարծ նա նկատում է, որ զօրքը շրջապատել է իրենց... Այն

վճռական մոմենտն է, երբ զորքը պիտի համազարկ տայ, ու նա, ընկեր Լեւոնը, մի բարձր տեղից դիմում է զինուորներին.

— Ընկեր զինուորներ. եթէ ձեր մէջ չի ցամաքել պրոլետարական արիւնը, դարձրէք ձեր զէնքը մեր ընդհանուր թշնամու դէմ...

Եւ յանկարծ... զինուորները ձգում են զէնքերը ու գրկախառնւում բանուորների հետ... Յեղափոխութիւնը յաղթանակում է ու ընկեր Լեւոնը յայտարարում է բանուորական դիկտատուրա...

Տարուած երեւակայութեամբ՝ Փանեանը չէր նկատել, որ իր բնակարանից առաջ է անցել: Նա կանգ առաւ մի փակուղու առաջ ու ետ դարձաւ:

Նորից մտաւ իր փոքր սենեակը ու նորից ողջունեցին նրան Մարքսը, Պլեխանովն ու Լենինը:

Կարդում էր ու երբեմն կանգ առնում. թւում էր, թէ մի ձայն կանչում է հեռուից — մենք կը յաղթենք... էս ձեռքը վկայ, մենք կը յաղթենք...

III

Ժողովը քօղարկելու նպատակով բանուոր Արամը սեղան էր սարքել, դրել էր մի քանի շիշ գինի, երշիկ, պանիր, կանաչի, սեղանի մէջտեղն էլ բազմեցրել էր մեծ հեչտաեռը:

Դրսում նա կանգնեցրել էր իր տասներկու տարեկան տղային, որպէսզի ոստիկան կամ ուրիշ կասկածելի մարդ տեսնելուն պէս՝ իմաց անի:

Ժողովականներից արդէն վեց հոգի եկել էին: Վերջապէս եկաւ եւ եօթերորդը — Պետրոսը, գունատ դէմքով բեխերը ցած թողած ու մի աչքը շիլ արած:

— Բոլորդ հաւաքուե՞լ էք:

— Քեզ ենք սպասում, ասաց Մարգարը:

— Հը, դուրսը կասկածելի մարդ հօ չտեսա՞ր:

— Չկար: Եւ հէնց դիտմամբ ուշ եկայ, որ մի լաւ աչքածեմ:

— Էդ շները, ինչպէս երեւում է, գործադուլի հոտն առել են, էլ գիշեր ցերեկ դադար չեն տալիս:

— Էդ նրանից ա, Մարգար, որ մենք պառաւ նանի նման մի գլուխ գրից ենք անում ու յետաձգում գործադուլը,— ասաց բանուոր Ստեփանը, որն ամենից ջահէլն էր նրանց մէջ. խփենք գնայ, գործադուլ ենք անում — անենք. էլ ի՞նչ ենք մի ամիս փիլիսոփայութիւն անում:

Նա վեր կացաւ ու ձեռքերը գրպանում սկսեց քայլել սենեակում. լիքը թմբլիկ մարմինը դղրդում էր քայլերից:

— Դու էլ հէնց քո ձին ես քշում,— պատասխանեց Արամը, քառասունի մօտ բանուոր, մօրուքի ու բեխերի մէջ կորած դէմքով. մի չորս կողմդ էլ նայի, տես ինչքան անգիտակից ընկերներ ունենք. առանց պատրաստելու, չի կարելի սկսել գործի:

— Է՜հ, դուք էլ միշտ հին երգն էք երգում,— ասաց Ստեփանը կանգնելով Արամի դիմաց,— պատրաստ չեն... Էդ վաղուց ենք լսել. իսկ ես ասում եմ, պատրաստ չեն լինիլ. դու պէտք է քո յետեւից քաշես նրանց:

— Քաշելուն կտրուելն էլ կայ. պիտի ամուր կապենք հետներս:

— Զարմանալի ա, ինչո՞ւ ամուսնացած բանուորներդ էդպէս կամաց էք շարժւում:

Բանուոր Մարգարը մօտեցաւ Ստեփանի ետեւից ու նրա ականջից քաշեց.

— Դէ, դէ քաջ Ստեփան, շատ մի բռբռթալ. դու դեռ ժանդարմի ու բանտի երես չես տեսել եւ լաւ կ'անես քո փորձուած ընկերներին հետեւես. շտապողին տղայ չի ըլիլ.

— Իսկ կամաց գնացողին, իսկի աղջիկ էլ չի լինիլ:

— Դէ, Ստեփան, բաղար մի չաղացնի, ասաց բանուոր Արամը, ընկերներ սկսենք, առաջարկում են նախագահ՝ ընկեր Մարգարին:

Միւսները համաձայնուեցին եւ Մարգարը նստեց սեղանի մօտ:

Ուսանող Փանեանը նստել էր թախտի վրայ ու յենուած մութաքին, մտքում կրկնում էր զեկուցման սկիզբը զանազան վարիանտներով:

— Խօսքը ձերն է, ընկեր Լեւոն, ասաց Մարգարը:

Փանեան երկու անգամ հազաց, զսպելով իր շփոթութիւնն ու սկսեց, բայց ոչ այնպէս ինչպէս ինքը ենթադրում էր: Մի քանի

րոպէից յետոյ՝ չփոթութիւնն անցաւ եւ զեկուցումն ընկաւ իր բնական հունը ։ Նրա ոգեւորութիւնը հետզհետէ աճում էր, բերած օրինակները մէկը միւսից պերճախօս ապացուցում էին Նրա տեսակէտը։

Ունկնդիրները հետաքրքրութիւնը լարած լսում էին ու վարակւում Նրա ոգեւորութեամբ։ Պրոլետարիատի անցած գործադուլները, անցած արիւնոտ կռիւները մշուշապատ հեռուից յանձնարարում էին շարունակել պայքարը, մինչեւ վերջնական յաղթանակը։ Մէջները կուտակուած դժգոհութիւնը բռնկւում էր ու պահանջում — «Պէտք է կռուել, պէտք է գործադուլ յայտարարել — այս է մեր ճամբէն»...

Փանեանը վերջացրեց իր զեկուցումը կոմունիստական մանիֆեստի խօսքերով — «Պրոլետարները ոչինչ չեն կորցնի, բացի իրենց շղթաներից»։ Ու քրտինքի մէջ կորած՝ կանգ առաւ։

Վերջացնելուն պէս, բանուոր Ստեփանը վեր կացաւ տեղից ու Փանեանի ձեռքը պինդ սեղմելով, սկսեց թափահարել։

— Ընկեր Լեւոն, շնորհաւորում եմ. տղամարդի պէս խօսեցիր...

Բանուոր Պետրոսը ձայն խնդրեց Մարգարից։

— Ընկերներ, ես կարծում եմ, որ մենք այսպիսի մանրամասն զեկուցում լսելուց յետոյ՝ էլ հարցերով չզբաղեցնենք ընկեր Լեւոնին, այլ անցնենք գործնական խնդիրներին։

— Ուղղակի խօսենք գործադուլի մասին, միջամտեց Ստեփանը։

Այդ ժամանակ յանկարծ ներս մտաւ Արամի տղան ու շնչասպառ ասաց.

— Մեր կողմը պոլիցա ա գալիս...

Բոլորը վեր թռան։

— Լաւ տեսա՞ր,— հարցրեց Արամը։

— Հա. երեք հոգի էին։

— Ընկերներ, պէտք է ցրուել,— ասաց Մարգարը։

— Գուցէ աւելի լաւ է, նստենք իբր թէ քէֆ ենք անում, առաջարկեց Արամը.— միեւնոյնն է, արդէն ուշ է, փողոցում առաջներս կը կտրեն ու կը բռնոտեն։

— Չէ, էդպէս կարող ենք բոլորս թակարդն ընկնել,— ասաց Մարգարը. Թող երկուսը մեզանից դուրս գան, տեսնեն պոլիցիան

որտեղ է, յետոյ էլ գնան մնացածները։

Ուսանողը եւ բանուոր Պետրոսը Արամի տղայի — Սուրէնի հետ դուրս եկան գաւիթ։ Սուրէնին ուղարկեցին հետախուզելու։ Նա լուր բերեց, թէ պոլիցիականները հարեւան տան մօտ կանգնած դռնապանին են կանչում։

— Դէ, Սուրէն, գնա սաս, որ բոլորը դուրս գան չուտով, ապսպրեց Պետրոսը, իսկ ինքը ուսանողի հետ դուրս եկաւ փողոց։

— Դու առաջ գնա, պատուիրեց նա Փանեանին։

Մի քանի րոպէ առաջ գնալով, Փանեանը առանց երկար մըտածելու, ճամբէն ծռեց դէպի կողքի փողոցը, բայց չուտով նըկատեց, որ առաջը փակուղի է։ Ետ դառնալը վտանգաւոր համարելով, նա ուղղակի ներս մտաւ դիմացի տան գաւիթը։ Նրա բախտից տունը մուտք ունէր եւ միւս փողոցի կողմից։ Արագ քայլերով Փանեանը դուրս ընկաւ փողոց, ուշադրութիւն չդարձնելով չան հաջոցի վրայ։

Լուսինը դեռ չէր ծագել։ Փողոցը մութն էր ու խորտուբորտ։ Շտապելուց նրա ոտքը փոսն ընկաւ, եւ հաւասարակշռութիւնը կորցնելով, փռուեց փողոցի խիտ փոշու մէջ։ Իսկոյն վեր կացաւ, չտապ-չտապ թափ տուեց շորերը ու շարունակեց ճամբան։

Վերջապէս յոգնած ու քրտինքի մէջ կորած նա հասաւ իր բնակարանը։

Տուն վերադառնալով, Փանեանը նկատեց սանդուխների եւ պատշգամի վրայ արտակարգ լուսաւորութիւն։ Տանտիրուհու բնակարանից անսովոր ձայներ էին լսւում. ըստ երեւոյթին հիւրեր կային։

Մտնելով սենեակը, ուսանողը մեկնուեց մահճակալի վրայ ու մտածում էր իր ընկերների մասին — թէ արդեօք կարողացա՞ն ազատուել։ Մտածում էր նոյնպէս թէ որտեղ անցկացնի այս գիշեր, թէ գուցէ կարելի է մի աւելի ապահով տեղ գտնել։

Դուռը ծեծեցին։ Նա վեր թռաւ, կարծելով, թէ ոստիկանութիւնն է իր ետեւից եկել, բայց դուռը բացելով, տեսաւ տանտիրուհուն։

— Էս ո՞ւր ես, ինչքան ժամանակ սպասում եմ. համեցէք մեզ մօտ, հիւրեր ունեմ։

— Շնորհակալ եմ. գլուխս ցաւում է, չեմ կարող:

— Էհ, ջահէլ տղէն կ՚ասի՞, թէ գլուխս ցաւում է... ա՛րի, ա՛րի, գնանք օրիորդների հետ ծանօթացնեմ:

— Շնորհակալ եմ,— նորից կրկնեց Փանեանը:

— Չէ, չէ, անպատճառ պէտք է գաս. էս ի՞նչ է վէր ես ընկե՞լ, ինչո՞ւ են չորերդ կեղտոտուել:

— Չէ, փողոցով կառք էր անցնում, նեղ տեղն ընկայ, պատին քսուեցի:

— Դէ, արի՛ գնանք:

— Լաւ, մի քիչ կարգի բերեմ չորերս ու կը գամ:

«Սա լաւ առիթ է», մտածեց Փանեանը, տանտիրուհու դուրս գնալուց յետոյ. «պէտք է բուրժուական կեանքով ապրել, յեղափոխական գործունէութիւնը քօղարկելու համար, թէ չէ՝ ոստիկանութեան տեսակէտից, ես կասկածելի կեանք եմ վարում»:

Շորերն ու կօշիկները մաքրելուց յետոյ՝ նա զննեց ամէն ինչ լամպի մօտ, որպէսզի «չխայտառակուի» որեւէ պատռուածից:

Երբ նա ներս մտաւ, դահլիճում արդէն հաւաքուել էին մօտ տասնհինգ հոգի: Բոլորը յանկարծ լռեցին, հետաքրքիր հայեացքները դարձնելով Փանեանի վրայ:

Ուսանողի բնական չփոթութիւնը կրկնապատկուեց, երբ հիւրերի մէջ նկատեց տանտիրուհու քրոջ աղջկան:

— Խնդրեմ, ծանօթանաք,— ասաց տանտիրուհին,— քրոջս աղջիկն է, օրիորդ Նատալիան:

Փանեանը կարմրած մօտեցաւ օրիորդին ու առանց նայելու նրա դէմքին, ձեռքը մեկնեց: Ապա տանտիրուհին մօտ տարաւ նրան բոլոր հիւրերին ու ծանօթացրեց:

Երկու օրիորդ էին հրաւիրել, սեւուկ ու տգեղ,— օրիորդ Նատալիային «ֆոն» տալու համար, որպէսզի նա աւելի գեղեցիկ երեւար: Կային տիկիններ, գիմնազիստներ, մի զինուորական դպրոցի ուսանող ու տանտիրոջ խանութի գործակատարը:

Օրիորդ Նատալիան նստած էր մի առանձին լարուած, ձըգուած պոզայով, կարծես մի դեր էին յանձնել նրան եւ չարունակ կասկածում էր — կարո՞ղ է արդեօք կատարել այդ դերը: Կարճ մարմինը կորսետի մէջ ճնշւում էր, շնչառութիւնն արգելում: Շփոթութիւնից կարմրում էր ու քօղարկում իր բնական դալկութիւնը:

Փանեանը նստեց ազատ աթոռներից մէկի վրայ: Դիմացի երկու տիկինները սկսեցին քչփչալ, մէկ-մէկ հայեացքը դարձնելով ուսանողի վրայ:

«Երեւի արտաքինս են բամբասում, մտածում էր Փանեանը. ի՛նչ յիմարութիւն արի, որ եկայ. պարզ է, բերել են այս Նատալիայի հետ ծանօթացնելու եւ «գործը» սարքելու համար»...

— Ինչի՞ էք սուս կացել, ջահէլներ չէ՞ք. ի՞նչ եղաւ ձեր խաղը,— ասաց տանտիրուհին:

Գիմնազիստները վեր կացան ու շարունակեցին ընդհատուած խաղը: Նորից սկսուեցին շարժումն ու աշխոյժ ծիծաղը: Ուսանողը ինքն իրեն ստիպելով մի կերպ մասնակցում էր, միօրինակ ժպիտը պահելով դէմքին:

Խաղերից յետոյ մի տիկին նստեց խանգարուած պիանոյի մօտ ու սկսեց տընկտընկացնել վալսի եղանակ:

Զոյգերը սկսեցին պտտուել: Օրիորդ Նատալիան սպասում էր, որ Փանեանը իրեն կ՚առաջարկի պարել, բայց ուսանողը չմասնակցեց պարերին:

Երբ օրիորդ Նատալիան սկսեց պարել, գիմնազիստներից մէկի հետ, Փանեանը դիտելով նրա կարճ, ճնշուած հասակը, ներս ընկաւ վիզը, խղճահարուեց ու տխրեց. «Աղջկան ուզում են մի կերպ սաղացնել եւ չեն կասկածում, թէ որքա՛ն հեռու եմ ես փեսայի դերից»...

Ընթրիքի ժամանակ առաջուց ծրագրուած «զուգադիպութեամբ» օրիորդ Նատալիան եւ Փանեանը իրար կողքի ընկան: Թամադա ընտրուեց տանտիրուհու առաջարկութեամբ իրենց գործակատարը, որին առանձին հրահանգներ էին տուած կենացների վերաբերմամբ:

Խօսակցութիւնը օրիորդի եւ ուսանողի մէջ չէր կպչում, որովհետեւ օրիորդը վախենալով տգէտ երեւալուց, շարունակ «այո» կամ «ոչ» էր պատասխանում, իսկ ուսանողը մտազբաղ էր եւ դժուարութեամբ էր նիւթ գտնում խօսելու համար: Յաճախ նրա երեւակայութիւնն անցնում էր նոր խափանուած ժողովին, պատկերացնում էր, թէ ի՛նչպէս ընկերները դուրս են գալիս փողոց, դիտում են չորս կողմը... իսկ յետոյ, ո՞վ գիտէ, ինչ...

Կենացները զոյգ զոյգ էին առաջարկում եւ ամէն անգամ երգում էին ազգային ու սիրային երգեր: Մի առանձին ոգեւորու-

թեամբ եւ աղմուկով խմեցին օրիորդ Նատալիայի եւ Փանեանի «Թանկագին» կենացները. բոլորը ցանկանում էին, որ «նրանք հասնեն իրենց մուրազին», ծաղկեն ու առաջադիմեն: Մէկը նոյնիսկ այնքան ոգեւորուեց, որ ասաց. «Թող երկուսով գնան դէպի ապագան ձեռք ձեռքի տուած»:

Ուսանողը ընկել էր տրագիկոմիքական դրութեան մէջ:

«Պէտք է վերջ տալ այս յիմար դրութեան»... «Վաղուանից բոլոր թելերը կը կտրեմ»...

«Թանկագին կենացի» վրայ օրիորդ Նատալիան խեղդուող կատուի ձայնով երգեց «Ձայն տուր ով ծովակ»: Վիզը ձգելով, ճիգ թափելով նա երգում էր.—

«Արդեօք գալո՞ւ է մի օր, ժամանակ, տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ»...

Իսկ ուսանողը մտածում էր. «Հիանալի պատկեր... Նատալիան կինս կը լինի, Մասիսի գլխին էլ մի դրօշակ»...

Վերջապէս հիւրերը վեր կացան: Տիկինները հրաժեշտի ժամանակ հրաւիրում էին ուսանողին իրենց տուն՝ օրիորդ Նատալիայի հետ միասին պատճառաբանելով, թէ նա պիտի իրենց տունը գայ:

Երբ բոլորը գնացին, տանտիրուհին մօտեցաւ ու ասաց Փանեանի ականջին.

— Հաւանեցի՞ր:

— Ո՞ւմ:

— Օրիորդ Նատալիային. որ գիտենաս ի՜նչ ոսկի աղջիկ է. սաղ քաղաքում սրա հատը չի գտնուի:

Ուսանողը ծիծաղեց եւ շնորհակալութիւն յայտնելով, գնաց իր սենեակը:

— Ուհ, վերջապէս ազատուեցի էս կոմեդիայից,— ասաց ինքնիրեն ձգուելով մահճակալի վրայ: Մտածում էր, թէ ինչ ձեւով վերջ տայ այս հարսնախօսութեանը, որը հանաքից դանակի էր անցնում: Սակայն յոգնածութիւնից նա չէր կարողանում մտածութեան թելը առաջ տանել եւ ասում էր. «Վաղը կը մտածեմ»...

Աննկատելի կերպով նրա քունը եկաւ, բայց մի քանի րոպէից յետոյ յանկարծ զարթեց։

Մուտքի դրան զանգը պինդ քաշեցին։

«Գալիս են խուզարկելու», անցաւ նրա մտքով, բայց տեղից չշարժուեց։

Մի քանի րոպէից յետոյ դրսի դուռը ծեծեցին։ Լսուեցին ոտնաձայներ։ Ծանր կօշիկներ էին, բայց զգոյշ էին քայլում։

Ականջները լարած՝ Փանեանը հետեւում էր քայլերին։ Սիրտը անասելի ուժով բաբախում էր։

Ահա բարձրանում են պատշգամը, մօտենում են իր սենեակին...

Յանկարծ կոպիտ ձեռքով դուռը թխթխկացնում են։

— Ո՞վ է, հարցրեց Փանեանը։

— Ոստիկանութիւնն է, բացէք։

— Օրդեր ունէ՞ք։

— Ունենք. շուտ արէք։

Դուռը բացուելուն պէս ներս խուժեցին ժանդարմական ըսպան, եւ ոստիկանները շրջապատեցին ուսանողին ու սկսեցին խուզարկել, նախ իրեն, յետոյ էլ սենեակը։ Քրքրեցին գրքերը, անկողինը, սպիտակեղէնը։

Փանեանն իրեն համարում էր փորձուած եւ զգոյշ յեղափոխական, բայց որքան մեծ եղաւ զարմանքը, երբ յանկարծ գրքերից մէկի մէջ գտնուեց մի նամակ... այն էլ շատ վտանգաւոր։

Ինչպէս եմ մոռացել այդ նամակը... գործը կը բարդանայ... նամակով կը կապեն կենտրոնի հետ...

Խուզարկութիւնից, երբ արձանագրութիւն էին կազմում, ներս կանչեցին տանտիրուհուն։ Երեւում էր, նա չէր հասկանում գործի էութիւնը, որովհետեւ ոստիկաններից մէկը հանգստացնելու նպատակով ասել էր նրան, թէ ուսանողին վկայ են կանչում մի գործի համար։

Երբ ամէն ինչ վերջացաւ, ուսանողը յանձնեց իրեղէնները տանտիրուհուն, ասելով թէ ինքը գնալու է, եւ կը կարգադրի, որ գան վերցնեն։

Տանտիրուհին աչքերը չռեց.

— Քա գնում ե՞ս... էլ չես գալո՞ւ... Բա հարսնացո՞ւն...

Նա այնքան միամտօրէն սաաց այդ, որ ուսանողը չկարողացաւ ժպիտը պահել։

— Իմ հարսնացուն.— Կարմիր հարսնացու է… սաաց նա խօսքերը ձգելով։

— Վո՛ւյ քա, ուրիշ հարսնացու ես ունեցե՞լ… Բա ինչի՞ չէիր ասում, լացակամած վրայ տուեց տանտիրուհին։

— Կը խնդրեմ չխօսել,— հրամայական տոնով սաաց ժանդարմական սպան։

Ուսանողին տարան բանտը։

ԱՐԱՋԻ

ՓԵՍԱՅ ՕՎԱՆ

Թլկանց Օվան էր այն օրերուն, երբ կը հագնէր հինցած, շատ հինցած շալվար մը: Ոտքերուն կ'անցնէր կապերով փաթաթուած տրեխ. կը հանգնէր տան գործուած կապոյտ շապիկ, գըլխին ունէր թաղիքէ գտակ, արախչիին ծալքերուն մէջ կորսըւած: Անոր ակռաները սովորականէն աւելի խոշոր: Շրթները չողլնքոտ էին երբ կը խօսէր: Այդ բոլորէն աւելի ունէր աւրուած աչքեր: Կ'ըսէին որ աչքերուն մէջ թարթիչներ կը բուսնէին ու զինքն անհանգիստ կ'ընէին:

Գիւղացիները, մեծ թէ պզտիկ, երբ կալ ու կուտի, վար ու ցանի աշխատանքի լծուած էին՝ Թլկանց Օվան միշտ գիւղն էր, աչքերուն վրայ թաշկինակի չափ փոքրիկ լաթի կտոր մը բռնած: Ան միշտ հոն էր, մխ—մինակ, կռնակը Էքնոյենց պատին կռթընցուցած՝ նստած էր ոտքերը օճախի պէս բաց: Շուները յաճախ կուգային իր քով կը ծալլուէին եւ կամ անոր տրեխներուն ծայրը հոտուըտալով կ'անցնէին կամաց: Տանտիկին Գարան իրիկուան օճախը վառելու համար դուրսը, արեւին կը նայէր: Արեւը երբ Էքնոյենց պատին վրայէն սաւանի ճոթի պէս Օվանին թաղիքէ գլխարկին վրայ կախուէր, այլեւս էտիքուայ օճախը վառելու ատենն էր: Ան հոն էր միշտ Էքնոյենց պատին տակ, լաթի կտոր մը աչքերուն դէմ բռնած: Տունն ինչո՞ւ երթար: Կինը տունը չէր, զաւակն ալ ուրիշին մշակ տուած էր: Օվան պիտի սպասէր մինչեւ երեկոյ ըլլար. կինը պատառ մը հաց բերէր իր աշխատանքի տեղէն, որ ճաշէին միասին: Մօտ հինգ տարի էր աչքերը կը նեղէին զինքը: Ամբողջ հինգ տարի աշխատանք ըրած չէր: Հինգ տարի, գարուն, ամառ թէ աշուն, Էքնոյենց պատին տակ նստած էր Օվան:

Օվան անհամբեր կը սպասէր որ երեկոյ ըլլայ, գիւղացիները դաշտէն տուն լեցուէին ու իր շուրջ չէննար պահ մը: Իրաւ ալ երեկոները, գեղի ռէնչբէրները կերակուրէ յետոյ պահ մը դուրս կ'ելլէին Էքնոյենց պատին տակ, ուր միշտ կար Թլկանց Օվանը.

— Բարե՛ւ Օվան։

— Աստու բարին։

— Ի՞նչ կայ, չկայ։

— Սաղութին։

Գիւղացիները կը խօսակցէին, կը կատակէին։ Այդ իրիկուան խօսակցութեան գլխաւոր առարկան Լոտօ Մուսեխին, Սարբից բերած, էժտահարի պէս գոմէշին մասին էր։ Էհ, եթէ օր մը Խօժկանց գոմէշին հետ եղջիւր եղջիւրի գային...

Այդ բոլոր խօսակցութեան ընթացքին Օվանը լուռ էր։ Այդ օր կը մտածէր այն ձիերու ոտնաձայներուն մասին, որ ցորեկին լսած էր հեռուէն։

— Մարկոս, էսօր բան ման չլսեցի՞ր։

— Ի՞նչ բան, Օվան։

— Հիչ։

Օվան չէր համարձակեր ըսել. մի գուցէ ինքը սխալած էր։ Ո՛վ գիտէ։

Օվան ոչինչ ըսաւ։

Սակայն օր մըն ալ սխալած չէր։ Ջային կողմէն ձիաւորներ մտած էին։

Երեկոյին երբ գիւղացիները իրարու մօտ եկան, բոլորին դէմքը կոճղի երեւոյթ էր առեր։ Անոնք այլեւս չէին կատակեր։

— Հարկեր հաւաքողներ են եկեր, լսեցի՞ք։

— Գզիրն էսօր ձիերը ջրել կը տանէր։

— Էս նեղ ճար օրերուն տահա էքինները գետինը...

Այդ խօսքերուն մէջն էին, երբ գզիր Մանօն մութին մէջէն, փոքրիկ առուէն անցաւ, կանգնեցաւ ձիթհանքի տան սիւնին պէս, ձեռքերն ականջներուն սկսաւ մունետիկ պոռալ։ Գիւղն յանկարծակի լուռ պապանձեցաւ կարծես։

Ուշ ատեն գիւղացիք հետզհետէ իրենց տուները կը վերադառնային։ Բերաննին դանակով իսկ չէր բացուեր։

Տէր Դաւթկանց Մարկոսը այնտեղ էր տակաւին։ Օվան կ՚ուզէր խօսիլ հետը, սակայն չէր համարձակեր։ Մանաւանդ որ ուրիշներ ալ կային, մի քանի անգամ բերան լեցուց խօսելու համար։

Է՛հ, Թլկանց Օվանին ո՞վ դրամ կուտար։

— Մա՛րկոս։

— Ի՛նչ է, Օվան։

— Հիչ…

Չէ, չէ, Թլկանց Օվանին մարդ դրամ չի տար, ակամայ մտածեց Օվան, կակազեցաւ ու չըսաւ, չըսաւ։

Ի՞նչպէս ընէր, վաղը իր դուռն ալ պիտի թակեն, այն ատե՛ն..

— Մա՛րկոս։

— Ըսէ՛, ի՞նչ ունիս, Օվան։

— Ախր գիտես հալս Մա՛րկոս, երեսուն ղրուշ ունէի, միտքս դրեր էի վրաս շալվար մը ձգել։ Շալվարիս վրայ քառասուն պիչիմ կարկտան կայ։ Շունի հալ է, շունի հալ. վաղը հարկ պիտի հաւաքեն։ 50 ղրուշ կը պակսի, երեսունին վրայ թեմամցնելու համար։ Ձեռքէ 50 ղրուշ տուր, Մա՛րկոս, Աստուած ողորմած է։ Դրամդ վրաս չի կորսուիր։

— Աղէկ կ'ըսես, Օվան, ամա քիչ էուէնջ Խնկոն որ գիս մէկդի կանչեց, էն էր խօսեցաւ։ Էքինները գետինը. վաղը մանկղուորներուն դրամ կը պակսի։ Տահա ցորենը չժրած քիչ մը քաղեր, հօսեր, աղցեր են որ զաւկնուն հաց ժմնցնէ։ Երկու ոսկի էն ուզեց ձեռքէ, հարկ տալու համար։

— Էհ լաւ, լաւ, Մարկոս, Խնկոյին գործը տես. էն մաղ մը զաւկներ ունի։ Ինձ ալ Աստուած ողորմած է, հէլպէթ դուռ մը կը բացուի վաղը. վրայ տուաւ Օվան երբ Խնկոյի թշուառ վիճակն իմացաւ։

Օվան այլեւս չխօսեցաւ։ Գրեթէ ինքնիրեն անիծեց։ Էն ուշ առուն երթողը Օվանն էր։ Գիշեր էր ու փողոցները խաղաղ։ Վաղը, վաղը, ի՞նչ պիտի ընէր… Ի՞նչ լաւ էր որ վաղն արեւ չըլլար, ըլլար միշտ մութ ու Օվան փոքրիկ կօշիկի մը մէջ մտած պահուըտէր որ չգտնէին զինք։

Առաւօտուն գիւղը իրարանցումի մէջ էր։ Թլկանց Օվան կըռնակը էքնոյենց պատին՝ նստած էր լաթի կտորը աչքերուն դէմ բռնած։ Անոր այնպէս կը թուէր թէ հոգէառները հեռզհետէ իրենց տան կը մօտենային, ինչպէս ալքերը որ ուղնոցներէն կը մտնեն, կը մօտենան տղացկան կիներու, երկար ճանկերով անոնց որդերը դուրս կը քաշեն ու կը հեռանան մութին մէջէն, հովերուն հետ…

Օվան այս ալքերուն սարսափը կ'ապրէր, եւ կարծես իր գըլխուն վերեւ կեցած էին մութ վրաններու չափ մութ թեւերով։

Իրաւ ալ, տեսնես, գզիրը մօտեցաւ Օվանին, որ միս մինակ նստած էր, լաթի կտոր մը աչքերուն դէմ բռնած։

— Ե՛լ տեսնենք, Օվան։

— Հէ՛յ… կոռպակոռպ։

Թըլկանց Օվան գզիրին առջեւ ինկած, մտաւ իր փողոցը։

— Թըդ, Թըդ, Օվան ներս մտաւ, մթութեան մէջ, պարապ փեթակի մէկ անկիւնը պահած դրամը վերցուց դուրս ելաւ ու դողդղան ձեռքերով, փոքրիկ ծրարը յանձնեց…

Մէջը երեսուն ղրուշ կար, բոլորն ալ մանր դրամ։ Սակայն պակաս էր, պակաս։

— Ալ, ա՛լ չկայ, աղա, խօսեց Օվան կմկմալէն։

. . . .

Տան միակ պղինձէ կաթսան տարաւ, գիւղին հրապարակին վրայ աճուրդի դնելու համար։

Էտինքի ատենն էր. տանտիկին Գարան դուրս նայեցաւ։ Արեւը էքնոյենց պատին վրայ, Թըլկանց Օվանին ուսին կը մօտենար. Էտինքուան ճաշ պատրաստելու ժամանակն էր։

Թըլկանց Օվան այդ օր աւելի անշարժ էր։

Երեք օրեր սարսափի պէս անցած էին, ինչպէս մարախը կ՚անցնի դեռ նոր ցանուած բամպակներուն վրայէն։ Երեք օր յետոյ գիւղացին իր բարի ու սովորական կեանքին լծուեցաւ։

— Բարե՛ւ, Օվան։

— Աստու բարին։

— Ի՞նչ կայ, չկայ։

— Սաղութին։

Իրարու մօտ կուգային կը խօսէին, կը կատակէին։

— Աստուած է վկայ, էսօր քիչ մնաց չորախները, Լոտօ Մուսեխին ու Խոճկանց գոմէշները եղջիւր եղջիւրի գային։

Ու ուշ ատեն կը վերադառնային տուն։ Այդ երեկոյ Օվանին կինը ճրագին առջեւ նստած իր զաւկին ելեկը կը կարէր, երբ Օվանն ներս մտաւ։

— Է՛հ, կնիկ, տես, էս շալվարս հալի մի կրնա՞ս բերել։ Նա, էստեղ, նորէն քակուեցաւ, խօսեցաւ Օվան՝ մէկ կողմէն շալվարը հանելով։ Կինը ի՛նչ կրնար ընել։ Շալվարը իր ծունկերուն վրայ

առաւ կարկտնելու համար: Մէկ կուժ որ կը զարնէր, երեք կուժ կը քակուէր: Մաշած էր, մաշած ու ալ կուժ չէր բռներ:

— Ինտո՞ր ընեմ կնիկ, փէլէկը որ թէլս երթայ, ա՛լ քառսուն մոմ օգուտ չըներ: Ես չալվարով դուրս ելլել կ'ամչնամ: Ես քոռնալիք աչքերս ալ չի դուրան...

— Նեղ ճար պարտք ըրէ, չալվար մը ձգէ վրադ, արի մարդկինն էր խօսողը:

— Պարտք, չէ, Մարթա, չէ. Թըկանց Օվանին ո՞վ դրամ կուտայ: Կ'ըսեն չաշխատիր, աչքերը քոռ է. կինն է, որ էրիկն ու զաւակը կ'ապրեցնէ:

Օվանն ի՛նչ ընէր. էդ չալվարով այլեւս դուրս չէր կրնար ելլել: Գէթ՝ կը կարծէր որ ինքն ալ իր կարգին, բարեկամի ու թշնամիի տէր էր: Էրիկ կնիկ լուռ էին. կնիկն ի զուր ճրագին տակ, չալվարը չորս կողմ կը դարձնէր, ձեւի մը բերելու համար:

— Սնտուկէն լաթերդ բերեմ՝ հագիր վաղը, խօսեց կինը յուսահատ:

— Ի՞նչ լաթ, կնիկ, վրայ տուաւ Օվան՝ աչքերը բացխփելով:

— Փեսութեան լաթերդ:

Էրիկ կնիկ լռեցին երկար:

Ամբողջ քսան տարի էր որ Մարթա ու Օվան ամուսնացեր էին: Ամբողջ քսան տարի Մարթա պահած էր Օվանին փեսութեան լաթերը շատ խնամքով ծալլած: Օվան քսան տարուան ընթացքին իր փեսութեան լաթերը հագիւ քսան օր հագած էր: Կը հագնէր Բարեկենդանի օրերը եւ կամ երբ հարսանիքի կը հրաւիրուէր: Է՛հ, ինչ լաւ օրեր էին: Օվանին հայրը իր մէկ հատիկ տղան կը կարգէր: Եկեղեցիին բակը հարիսա զարկաւ: Իր մէկ հատիկ տղուն սուգնոց, մետաքսէ լաթեր ըրաւ: Վարդաթիլէն հարս բերաւ իր մէկ հատիկ տղուն:

Ժամանակը շատ ուշ էր: Մարթա վար իջաւ, սնտուկէն լաթերը բերելու, որ վաղը Օվանը հագնէր:

Էրիկ կնիկ այլեւս չէին խօսեր:

Օվան զգածուած էր, կ'ուզէր լալ մանկան մը պէս:

Պառկելու ժամանակ ճրագը երբ պիտի մարէր, Օվան խօսեց վերջապէս.

— Է՛հ, կնիկ, էս օրերո՞ւն պիտի հասնէինք:

Յաջորդ օրը տանտիկին Գարան պատուհանէն դուրս նայեցաւ արեւն ու Օվանը դիտելու. բա՛, ի՜նչ տեսնէ, Օվանը փեսայի պէս հագուեր նստեր էր, սրունքները օճախի պէս բաց: Տանտիկին Գարան տան հարսներն իր շուրջին հաւաքեց.

— Քա, խեր ըլլի, Օվանը փեսայ է եղեր:

Երեկոյին ուէնչբէրները տեսան, զարմացան ու կատակեցին:

— Օվան, ի՞նչ է, նոր փեսա՞յ ես եղեր:

Անտարակոյս Օվան այդ կատակները շատ չէր սիրեր: Է՛հ, որո՞ւ հասկցնէր թէ մարդ երբ նեղը մնայ, փեսութեան լաթերը կը հագնի: Գիւղացիք, թըկանց Օվանին այլեւս Փեսայ Օվան կը կանչէին:

Անցան երկա՛ր, երկա՛ր տարիներ: Ամերիկայի մէջ, օր մը ինձ ծանօթացուցին բարձրահասակ, հաճելի դէմքով, խոշոր ձեռքերով երիտասարդ մը, Փարսեղ Օվանեան:

— Փէրչէնճցի եմ», — ըսաւ ինձ քիչ մը խոշորցած ակռաներու խնդուքով:

Ես ի զուր կը փորձէի յիշել:

— Մեր տունը Սանդ քարին քովն էր, վրայ տուաւ:

— Հա՛, յիշեցի, յիշեցի, Փեսայ Օվանին տղան չըսե՞ս:

ՀԱՄԱՍՏԵՂ

ՀՐԵՇՏԱԿԸ

Գարոյի ուրախութեանը չափ չկար։

Սայլի վրայ նստած՝ նա շարունակ այս ու այն կողմն էր նայում եւ հրճուանքից ժպտում։

Նրա կողքին, սայլի վրայ, պառկած էր փոքրիկ Վարթուշը՝ ծանր հիւանդ. Նրա մօտ նստած էր մայրը՝ տխրադէմ ու լացակումած, եւ մատաղի գառը՝ փոքրիկ ոտերը բարակ թոկով կապկըպած։ Իսկ սայլի առջեւից գնում էր նրա հայրը՝ ձեռքերը քամակին, խունացած գլխարկը աչքերին քաշած։ Նա դաշտի նորածիլ արտերին նայելով՝ մտածում էր ինչ որ։

Նրանք ուխտ էին գնում։

Հիւանդ Վարթուշին տանում էին Կամակատար խաչը, որ գիշերը այնտեղ մնան, առաւօտեան մատաղ անեն, որ Վարթուշը լաւանայ։

Թիզ բաց անող ընկնաւորն այդպէս էր ասել։

Գարօն, որ նիհար կազմուածքով, մօտ եօթ–ութ տարեկան նիհար երեխայ էր՝ սեւ ու խոշոր աչքերով, ճիպոտը ձեռքին շարունակ քշում էր եզներին եւ խօսակցում մօր հետ։

— Մայրիկ,— հետզհետէ հետաքրքրւում էր նա,— խաչը ո՞նց է լաւացնում հիւանդին։ Նա ի՞նչ է անում որ... Դեղ ունի՞...

— Խաչը՛... մեռնեմ նրա սուրբ զօրութեանը,— երեսը խաչակնքեց մայրը,— խաչը, մատա՛ղ, սուրբ է. Նա զօրութիւն ունի, երբ մենք աղօթում ենք, նա յայտնում է Աստծուն։ Աստուած էլ հրեշտակին ղրկում է, որ հիւանդին լաւացնի... Հասկացա՞ր... Դէ, եզներին քշի, որ շուտ հասնենք։ Այնտեղ դու էլ աղօթք կ'անես, որ Վարթուշը լաւանայ։

Գարօն ճիպոտը վրայ բերեց եզներին եւ նորից հետաքրքրութեամբ հարցրեց.

— Մայրիկ, բաս էդ հրեշտակը ինչո՞վ է վեր գալիս Աստծու մօտից. ձիո՞վ, թէ՞...

Մայրը տխուր ժպտաց, հիւանդ Վարթուշին նայեց եւ ասաց.

— Չէ, մատաղ, հրեշտակը թեւեր ունի, նա թռչում է ներքեւ ու էլի բարձրանում:

Գարօն նայեց երկնքին:

Նա զարմանում էր, թէ հրեշտակն ի՞նչպէս է այնքան բարձր տեղից թռչում գետին, մինչդեռ ինքը, Մօսօանց Սուրիկը եւ Վահէն իրենց հաւանոցի կտրից չեն կարողանում ներքեւ թռչել, կամ իրենց աքաղաղը եւ սեւ սագը գոմի կտրից հազիւ են թռչում, իսկ հրեշտակը... «Նրա թեւերը մեծ կը լինեն»,— մտածեց նա:

— Մայրի՛կ, նրա թեւերը մե՞ծ են:

— Ո՞ւմ թեւերը, մտազբաղ ասաց մայրը.— հրեշտակի՞... հա՛, բա՛ս... ի հարկէ մեծ են:

Գարօն դարձեալ լռեց: Նա մի առժամանակ նայեց նօրաբոյս արտերին, որոնք սայլի անիւների ամէն մի արագ պտոյտի հետ՝ շարունակ յետ-յետ էին գնում արագօրէն: Նրանց հետ պտտւում ու յետ էր գնում եւ ամբողջ դաշտը իր թփերով ու ծառերով:

Գարօն մտածմունքի մէջ ընկաւ:

Ապա, փոքր անց, մօրը դառնալով նա հարցրեց.

— Մայրիկ, հրեշտակը տղա՞յ է լինում, թէ՞ աղջիկ:

Մայրիկը դարձեալ ժպտաց Գարոյի միամիտ հարցի վրայ եւ անտարբեր պատասխանեց.

— Տղայ էլ, աղջիկ էլ:

Գարօն կրկին մտածել սկսեց:

Սայլը միօրինակ ձայն բարձրացնելով շարունակ առաջ էր գնում արագօրէն.

— Տի՛-րա, տի՛-րա, տի՛-րա-տի՛րա — միակերպ երգում էին անիւները՝ գլորուելով տեղ-տեղ կանաչած ճանապարհով:

Եւ արտերն ու թփերն էլ անիւների պտոյտի հետ դարձեալ յետ-յետ էին գնում, իսկ եզները պոչերնին շարժելով, քայլում էին շտապ ու դժկամ, կարծես զգում էին որ իրենց զրկել էին կիրակնօրեայ հանգստից, ուստի եւ աշխատում էին ժամ առաջ տեղ հասնել եւ ազատուել բեռից: Իսկ մատաղի սեւ գառը երբեմն թափ էր տալիս կապուած ոտքերը եւ էլի հանգարտ նիրհում:

«Որ թեւեր ունենայի, ես էլ կը թռչէի,— մտածում էր Գարօն,— ա՛յ, Վարթուշն էլ որ լաւ լինէր, նա էլ կը թռչէր, Մօսօանց Սուրիկն էլ»...

Ու նա երեւակայում է, թէ ի՛նչպէս է հրեշտակը թռչում: Ի՛նչպէս է խաչը՝ սպիտակ շորերը հագին, գնում Աստծու մօտ, յայտնում մօր աղօթքը Աստծուն ու հրեշտակի հետ վերադառնում:

— Մայրիկ, խաչն էլ է թռչո՞ւմ:

— Հա՛, բա՛ս:

Նրանք կրկին լռեցին:

Քիչ յետոյ, երբ արեգակը ծածկուեց սարի ետեւ, սայլը հասաւ փոքրիկ բլրակի գլուխը, մատուռի մօտ:

Երբ սայլը կանգնեց, մայրիկը հիւանդ Վարթուշին գրկեց ու տարաւ մատուռի ներսը. յետոյ հայրիկը գառը վերցրեց եւ նոյնպէս ներս տարաւ: Երբ նրանք դուռը բացին ու ներս մտան, մի քանի ծտեր չփոթուած, թռթռալով, դուրս եկան մատուռի նեղ պատուհանով:

Խաչքարերը համբուրելով՝ մայրիկը երեսին խաչ քաշեց: Գարօն ամէն կերպ մօրը նմանեցնելով՝ հետեւեց նրա օրինակին: Յետոյ մայրիկը կամաց ու հազիւ լսելի ձայնով սկսեց աղօթել: Այդ ժամանակ նրա աչքերի մէջ արտասուք էր երեւում:

Գարօն ուշադիր կերպով դիտում էր մօրը, ու ինքն էլ ուզում էր աղօթել, մօրից սովորած աղօթքի խօսքերն ասել, բայց սպասեց դեռ:

Նա նայում էր մօրը եւ միաժամանակ մտածում, թէ խաչը ի՛նչպէս պիտի գնայ Աստծու մօտ, որ հրեշտակին բերի:

Մայրիկը, աղօթքը վերջացնելուց յետոյ, երբ Վարթուշի համար մատուռի մէջ սկսեց տեղ պատրաստել, Գարօն մօտենալով նրան հարցրեց.

— Մայրիկ, հիմի էս դիշեր հրեշտակը կը գա՞յ:

— Հա՛, բա՛ս, մատաղ, դու էլ աղօթք արա, որ քո ձէնը լըսի...

Մոմերը միմեանց կողքի դողդոջուն բոցերով վառւում էին խաչաքարերի վրայ եւ թուլօրէն երերւում:

Դուրսը ժանգառքը կոխեց, բարակ քամի էր փչում եւ նրա հետ էլ հատ-հատ անձրեւ էր կաթկթում:

— Մայրիկ, ես էսէնց աղօթե՞մ. ասեմ՝ Տէր ողորմեա, Յիսուս-Քրիստոս, լուսացրու...

— Հա՛, էդպէս, էդպէս,— պատասխանեց մայրը, նորից

անտարբեր եւ թեքուած մոմերն ուղղեց։

Երբ բոլորովին մթնեց, հայրիկը մնաց դուրսը, եզների մօտ, նրանց պահպանելու, որ գողերը չտանեն, իսկ մայրը նստեց Վարթուշի գլխավերեւը։

Վարթուշը տնքում էր։

«Ով գիտի, գլուխը շատ է ցաւում»,— մտածում է Գարօն նրա կողքին պառկած ու սկսում է ականջ դնել։

Դուրսը անձրեւը շարունակում է կաթկթել։ Հայրիկի ու եզների ձայնը չի լսւում։ Ով գիտի, նրանք թրջւում են անձրեւի տակ։ Չէ՞ որ կը մրսեն... Մայրիկը Վարթուշի մօտ ննջում է, իսկ մառաղի դառը գլուխը փորին դրած կամաց մշմշում։

«Տեսնես հրեշտակը ե՞րբ պիտի գայ»...

Գիշեր է դառնում. երկու վառուող մոմերի բոցերը շարունակում են երերուել. նրանց հետ երերւում են եւ մառուռի պատերը։ Մայրիկը նստած քնել է Վարթուշի մօտ. նրա գլուխը մին բարձրանում է, մին ցածանում։ Վարթուշն էլ քնած է։

Բայց Գարոյի քունը չի տանում. նա պիտի արթուն մնայ, որ հրեշտակին տեսնի. ու նա չգիտի, թէ այդ եկող հրեշտակը տղա՞յ պիտի լինի, թէ՞ աղջիկ։

Եւ նա սկսում է երեւակայել, թէ հրեշտակը ինչպէս պիտի գայ։

«Ա՛յ, նա կը գայ այն ծակից, մառուռի փոքր ու նեղ պատուհանից. թեւերը թափ տալով կը մօտենայ Վարթուշին. կ՚օրհնի նրան, որ լաւանայ, եւ էլի կը թողնի ու կը թռչի»...

Գարօն շուրջն է նայում։

Մառաղի դառը դարձեալ մշշում է հանդարտ։ Մայրիկն ու Վարթուշը քնած են առաջուան նման։ Մոմերը քիչ է մնում հանգչեն։

Խաղաղ է ներսը. ձայն-ծպտուն չկայ։

Միայն դուրսը անձրեւ է գալիս։

Գարօն ուզում է աղօթել։ Չէ՞ որ մայրիկն ասաց՝ աղօթի, որ հրեշտակը գայ Վարթուշին լաւացնի։

Եւ նա ձեռքերը իրար վրայ, մօրը նմանեցնելով՝ դնում է կրծքին, աչքերը յառում մառուռի պատուհանին ու սկսում աղօթել...

Արտասանում է մօրից սովորած խօսքերը.

— Տէր ողորմեա... Հայր մեր, լաւացրու մեր Վարթուշին, — ասում է նա կամաց, շատ կամաց եւ զգոյշ, ու մտածում է, որ եթէ Վարթուշը լաւանայ, միասին կը խաղան, եւ հայրիկը չի տխրի, մայրիկն էլ լաց չի լինի։

Նա անկանոն կերպով երեսին խաչ է քաշում եւ շարունակում.

— Հայր մեր, որ... Ցիսուս-Քրիստոս, մեռնեմ սուրբ. քեզ մատաղ ենք բերել, դու լաւացրու մեր Վարթուշին...

Նա մօր նման խոնարհելով՝ համբուրում է մատուռի յատակը եւ դարձեալ երեսը խաչակնքում...

Մի փոքր ժամանակ է անցնում։ Նա աչքերը պատուհանից չի հեռացնում։

Սպասում է հրեշտակին։

«Նա կը գայ, չէ՞ որ մայրիկը ասաց... Թեւերը թափ տալով կը մտնի ու»...

Այդ ժամանակ յանկարծ լսուեց մի մղկտացող ձայն, շատ մօտիկից, ասես թէ դուրսը, պատի տակ մի երեխայ էր լալիս։

«Էն ո՞ւմ երեխան է անձրեւի տակ լաց ըլում», — վախեցած մտածեց Գարօն եւ աչքերը խփեց։

— Վո՛յ, վո՛յ, վո՛յ... — կրկնուեց նոյն ձայնը այս անգամ աւելի մղկտալի, աւելի տխուր։

«Ջլինի՞ հրեշտակն է. չէ, հրեշտակն այդպէս չի անի... Էն երեխայ է լաց լինում. ով գիտի, մէրը կորցրել է նրան, կամ գէլերն են տարել»։

Գարօն խղճում է երեխային եւ յիշում մօր խօսքերը, որ չար տղին գէլերն ու սատանաները գիշեր ժամանակ գողանում են ու տանում-ուտում...

Այդ մտքից սարսափած՝ նա գլուխը կոխեց ծածկոցի տակ, աչքերն աւելի ամուր սեղմելով. բայց երբ կրկին լսուեց նոյն ձայնը, նա սրտաձաք կերպով զարթեցրեց մօրը։

— Ի՞նչ է, մատաղ, — երկիւղով եւ քնաթաթախ հարցրեց մայրը։

— Մայրիկ, վախում եմ գէլերից, ա՛յ...

— Քնի՛ր, մատաղ, քնիր, էստեղ գէլ չկայ...

— Գէլերը երեխայ են տարել, ա՛յ. հրէն լաց է ըլում...

Նոյն ձայնը կրկնւում է նորից։ Մայրիկը հանգստացնում է

Գարոյին եւ ասում, որ նա երկխայ չի, այլ քոռ բուն է։

— Քնի՛ր, բալիկ, քնի՛ր…

Ո՛չ. Գարոն չի քնի. նա թէեւ վախում է այդ ձայնից, բայց պէտք է արթուն մնայ մինչեւ հրեշտակի գալը։

Եւ մայրիկը նորից նստած քնում է Վարթուշի մօտ։ Մատաղի զառն էլ քնած է։ Մոմերը վաղուց հանգել են եւ մառուրի մէջ մութն է. դուրսը չփչփալով էլի անձրեւ է գալիս։

«Հայրիկը էլի թրջուել է… Սարդարն ու Ծաղիկն էլ թըրջուած կը լինեն»,— մտածում է Գարոն հօր եւ եզների մասին. բայց շուտով թողնում է այդ եւ նորից սկսում մտածել հրեշտակի մասին։

«Ինչո՞ւ չեկաւ. ո՛վ գիտի, խաչը դեռ նրա մօտ չի հասել. որ հասած լինէր՝ կը գար… Մայրիկը սուտ չի ասում… Բաս էսքան ժամանակ ինչո՞ւ չեկաւ… Անձրեւ է, ո՛վ գիտի, վախենում է թրջուի, դրա համար չի գալիս»…

Եւ Գարոն սրտանց ափսոսում է, որ անձրեւ է. եթէ անձրեւ չլինէր, նա շուտ կը գար։ Գուցէ հէնց հիմա էլ գայ, բայց ուշանում է անձրեւի պատճառով…

Բաւական ժամանակ է անցնում. անձրեւը կտրւում է, քոռ բուն էլ ձայն չի հանում։ Ներսը առաջուան նման մութն է։ Մատաղի զառը քնած մշմշացնում է։ Բայց Գարոն չի քնում. նա աչքերը յառած մառուրի նեղ անցքին՝ սպասում է հրեշտակի գալստեան… Բայց նա չկա՛յ։ Ո՛վ գիտի, ի՞նչ է պատահե՛լ նըրան։ Մութն է, գիշեր, երեւի մրսում է կամ վախենում, որ չի գալիս… Մի քիչ էլ, նա կը գայ, կը գայ եւ Վարթուշին կ՚օրհնի, որ լաւանայ… Ու երբ Վարթուշը լաւանայ, հայրիկն ու մայրիկը կ՚ուրախանան, իսկ ինքը նրա հետ, առաջուան նման, միասին կը խաղան եւ իրենց տան դրան աւազի վրայ տնակներ, բներ ու ճանապարհներ կը շինեն…

Մտածելով՝ Գարոն սկսեց ննջել. ապա քնեց։ Նա մէկ էլ զարթնեց այն ժամանակ, երբ արդէն պատուհանից բարակ լոյս էր ներս ընկնում եւ կամաց-կամաց մեծանում։ Մի քանի, թէ մի մեծ խումբ ծտեր ծլլում էին դուրսը։ Քիչ յետոյ հայրիկը անձրեւից թրջուած եւ կարպետի նման կոշտացած շինելը ուսերին գցած ներս մտաւ եւ երեսը խաչակնքելով՝ մատաղի զառը տարաւ դուրս։ Նա տխուր մայում էր։

Գարոյին թուաց, թէ նա լաց էր լինում եւ լաց լինելով՝ մօրը կանչում... Երեւի իմացել է, որ իրեն պիտի մորթեն, դրա համար լաց է լինում... Գարօն խղճաց նրան եւ տխրեց: Բայց նա տխրեց աւելի, թէ ինչու հրեշտակը չեկաւ:

«Ինչո՞ւ չեկաւ, ինչո՞ւ...»,— մտածում է Գարօն երկար եւ հասկանալ չէր կարողանում, թէ ինչո՛ւ:

— Մայրիկ, բա ինչո՞ւ հրեշտակը չեկաւ,— հարցրեց նա մօրը,— ասում էիր՝ աղօթի՛ր — կը գայ...

Մայրը, որ այդ րոպէին մի ծնկով չոքած կրակ էր անում մատաղի համար, պատասխանեց.

— Եկած կը լինի, դու չես տեսել, մատա՛ղ...

Գարօն մտածմունքի մէջ ընկաւ: Ափսո՛ս... ինչո՛ւ իր քունը տարաւ...

... Մի քանի օր անցնելուց յետոյ, Գարօն մի առաւօտ վեր կացաւ եւ տեսաւ, որ մայրիկը լաց է լինում. նրա հետ լաց էին լինում Մօսօանց Սուրիկի մայրիկը, Մարան տատը եւ ուրիշ հարեւան կանայք: Վարթուշին դրել էին իրենց առաջ եւ լաց էին լինում: Հայրիկն էլ էր լաց լինում. բայց նա մայրիկի նման ձայն չէր հանում: Նա ձեռքը ծոցը դրած՝ անց ու դարձ էր անում, եւ նրա աչքերից արտասուք էր գալիս...

Այդ օրը տէրտէրը եկաւ եւ մի քանի մարդկանց հետ, գիր կարդալով՝ Վարթուշին, տարաւ ժամ: Բայց միւս օրը Վարթուշը ժամից տուն չեկաւ: Ինչո՞ւ: Գարօն չգիտէր. եւ երբ նրան յայտնեցին, թէ Վարթուշը մեռել է ու էլ տուն չի գայ, նա սաստիկ տխրեց եւ գնաց իրենց գոմի պատի տակ նստելով՝ լաց եղաւ...

Նա լաց էր լինում ու մտածում, թէ ինչո՞ւ Վարթուշը մեռաւ, ինչո՞ւ մայրիկը թողեց, որ նա մեռնի, որ տէրտէրը նրան ժամ տանի... Բաս ինչո՞ւ հրեշտակը չեկաւ նրան լաւացնի: Չէ՞ մայրիկն ասաց, որ աղօթք անենք, նա կը գայ Վարթուշին կը լաւացնի... Հապա ինչո՞ւ չեկաւ:

Սուտլիկ մայրիկը խաբեց:

Նա լաց էր լինում ու մտածում եւ այն մասին, թէ էլ այսուհետեւ ո՛ւմ հետ պիտի խաղայ ինքը եւ ո՛ւմ հետ պիտի տնակներ, բներ ու ճանապարհներ շինի դրան աւազի վրայ...

ՍՏ. ԶՕՐԵԱՆ

ԵՐՋԱՆԻԿ ՄԱՀԸ

Ա.

Տօքթոր Վահանեան սովորական բժիշկ մը չէ. մարմնի հիւանդութիւններուն չափ ու, թերեւս անոնցմէ աւելի, հոգիի ցաւերուն հետամուտ, հետաքրքիր բժիշկն է անիկա: Իր ըմբռնումին ու դատողութեան չափ՝ իր ներողութեան սահմանը ընդարձակ է: Գիտութեան ֆօրմիւլներուն, կամ իր արհեստին մեքենական կիրառումին մէջ տափակցած ու չքացած միտք մը չէ:

Իր հմտութեան մեծութիւնը՝ չոր ու ցամաք ապառաժի զանգուածին չի նմանիր բնաւ, այլ դալար դաշտավայրի մը ծիծղուն երեւոյթը ունի:

Վաթսունի մօտ, մազը մօրուքը ճերմկած, տկարակազմ, բայց զուարթախոհ մէկն է Տօքթօրը:

Մահուան դէմ՝ իր քառասուն տարուան բժիշկի մղած պայքարովը, մտերմութիւն մը հաստատած է կարծես անոր հետ. անոր ամէն դաւերը ու խաղերը գիտէ. անոր զարհուրելի, երբեմն յանկարծահաս ու երբեմն յամեցող հարուածներուն բոլոր գաղտնիքները ուսումնասիրած է:

Իր խօսակցութիւնը օգտաւէտ դասերով, ուղիղ դիտողութիւններով ու իմաստուն խորհրդածութիւններով կը վխտայ: Անձնական փորձառութենէն ու յիշատակներէն ընդելուզուած պատմութիւնները հետաքրքրութեամբ մտիկ կ'ըլլուին:

Գաւըրգիւղի իր տանը մէջ իրիկուն մը ժողվուեր էինք, եւ մարդոց համար ամենէն հետաքրքրական հարցումը մէջտեղ նետուեցաւ յանկարծ: Ո՞րն էր հազար տեսակ մահերուն ամենէն քաղցրը, բժշկական ու հոգեբանական կրկին տեսակէտով:

Յայտնուած կարծիքներուն մէջ համաձայնութիւն չկար. առողջ ու կայտառ աղջիկ մը, որ Ռաֆայէլ *կարդացեր էր եւ դալուկ ու նիհար կազմուածքի մը կը տենչար, Թոքախտի հիւծումն*

է, ըսաւ, էն գեղեցիկ մահը. երիտասարդի մը կարծիքին նայելով՝ ռէվոլվէրի գնդակն էր ուղեղին մէջ. ուրիշ մը՝ ծովահեղձ ըլլալը ամենէն քիչ տանջանք տուող վախճան մը ըլլալուն վրայ պնդեց. քլորոֆորմը երկու կուսակից գտաւ:

Բնութեան ու գիտութեան հնարած բոլոր միջոցները զատ զատ քննուեցան ու քննադատուեցան. ամէնքն ալ իրենց աղէկ ու գէշ կողմերը ունէին:

Տօքթօրը ինքը, մտիկ կ'ընէր ամենուս, առանց բառ մը արտասանելու. վէճը կ'երկարէր ու համաձայնութեան մը գալէ հեռու էինք:

— Ես, ըսաւ Տօքթօրը, խօսքերնիս կտրելով, ամենէն քաղցր մահը տեսայ, բայց չեմ կրնար պնդել որ ամէն անգամ մարդս կրնայ զայն իր ձեռքին տակ ունենալ. մէկ հատիկ մահն էր ասիկա, զոր իմ տեսած հազարաւորներուս մէջէն, ոչ միայն ամենէն հեշտն էր կրնամ ըսել, այլ իրօք քաղցրն ու երջանիկն էր:

Պատմութիւն մը ունէր լեզուին ծայրը. խելօք կեցած տղոց պէս մտիկ ըրինք զինքը:

Բ.

Տասը տարի կայ անկէ ի վեր. Բարեկենդանի գիշեր մը իմ դրացիներէս մէկուն տանը մէջ երեկոյթ մը կար. տիկին... անունը պէտք չէ ձեզի, այնպէս չէ՞, քառասունը հազիւ թեւակոխեր էր, բայց երեսունը հինգ տարու չէր ցուցներ վրայէն. այն շատ հաւնուած ու շատ սիրուած կնիկներէն մէկն էր, որոնց սերունդը հետզհետէ պակսելու, անհետանալու վրայ է մեր մէջ. իր մասին պատմուած առասպելներու վրայ ամենէն առաջ եւ ամենէն շատ խնդացողը ինքն էր: Սուտ պարկեշտութիւններու, կեղծաւոր կարմրութիւններու կինը չէր այն կինը. գլխէն մինչեւ ոտքը ամէն բան խիզախ ու համարձակ էր վրան:

— Աղուոր կուրծք մը չունեցողները միայն decollete*-ին թըշնամի են, կ'ըսէր խնդալով, եւ յօժարակամ կը պարզէր իր լանջքին կոհակները քոռսէին բացուածքէն:*

Էրիկը, ծերունի մը, հայր մը գրեթէ տարիքով, հօր մը թոյլտըւութիւնները, ազատութիւնները թողած էր անոր: Էն աղուոր երիտասարդները, էն շնորհքով մարդիկը իր շուրջն էին, թիթեռ-

նիկներու պէս դառնալով, երբեմն էրելով մրկելով, իր ջերմ ու կիզիչ մթնոլորտին մէջ:

Բոլոր կիները չէին քաշեր զինքը, կը նախանձէին, կը չարախօսէին իր վրայ. անոր համարձակ վարմունքը իրենց պարտըկուած մեղքերուն, իրենց չինծու ամօթխածութեանը դէմ պայծառ արեւի մը հալածիչ լոյսին կը նմանէր՝ խպնոտ ստուերներու վրայ սփռուած:

Ասոր հետ մէկտեղ, երբեք չէին պակսեր անոր տունէն, անոր երեկոյթներէն, ուր էն աղուոր, էն զուարթ, էն նրբամիտ ընկերութիւնը գտնելնուն ապահով էին:

Ատեն ատեն կը կանչէին զիս այս տունէն, տիկնոջ համար որ մարելիքի պէս տագնապներ կ'ունենար երբեմն: Առջի քննութենէս՝ սրտի հիւանդութեան մը հաստատ նշանները գտեր էի վրան, բայց զինքը չխռովելու համար բաւականացեր էի ըսելով.

— Բան մը չեն ասոնք, պարզ ջղային անհանգստութիւններ:

Գլխաւոր բանը քիչ մը հանդարտ կեանք վարելու պէտքն էր. այս եղաւ իմ պատուէրս ալ. բայց ո՞վ մտիկ կ'ընէր ինծի:

Օր մը նեղացայ:

— Տիկին, ըսի, պարապ տեղ երթալ գալէն չեմ ախորժիր. քանի որ իմ պատուիրած բանս չէք ըներ, պէտք չկայ որ զիս կանչէք ուրիշ անգամ. աւելի հաճոյակատար բժիշկի մը դիմեցէք, խնդրեմ: Հիւանդս հասկցաւ, եւ որովհետեւ մտքի ու սրտի տէր կին մըն էր, իսկոյն ներում խնդրեց այնպիսի քաղցր ու անուշ ձայնով մը, որուն դէմ կենալու էն քարսիրտ մարդն անգամ կարող չէր:

— Ձեր աղէկութեան համար է իմ պահանջումս. չեմ կրնար առողջապահութեան բոլոր կանոններուն հակառակ ձեր վարած կենցաղին աւերումները տեսնել եւ լուռ կենալ, չեմ կրնար ձեզ չարգիլել այս կեանքը շարունակելէ:

— Օր մը աւելի՞ ապրելու համար, Տօքթօռս, պատասխանեց ինծի ժպտելով, օր մը աւելի՞ տառապելու համար. եւ բռնելով ձեռքս, ստիպելով զիս որ քովը նստիմ, երբ ես մեկնելու կը պատրաստուէի արդէն, շարունակեց.

— Դուք, բժիշկներ, կեանքը երկարացնելու աշխատող մարդիկ, կիներուն՝ այս հէգ էակներուն կեանքը պահպանելու մի' աշխատիք, քանի որ չէք կրնար այդ կեանքը իր թարմութեան,

իր գեղեցկութեան մէջ անայլայլ ու հաստատ պահել. ճերմկած թափած մազերու, փոթփոթած երեսի, թուլցած միսի մը աւելի կամ նուազ տեւողութիւնը նշանակութիւն չունի. կինը իր երիտասարդութեան, իր հրապոյրներուն մէջ կրնա՞ք վար դնել, կեցընել: Չէ՞ք կրնար, թող տուէք ուրեմն որ երթայ հոսկէ. իր պաշտօնը, իր կոչումը աւարտած է ան. ի՛նչ, կը պահանջես ձայնը մարած երգիչէն՝ որ սրահին վրա՞յ կենայ, մինչեւ որ սուլեն, ծաղրեն ու նախատեն զինքը. կինը ծիծաղ մըն է, պէտք չէ որ լացի փոխուի:

Հիւանդութիւնը կը սաստկանար, հեղձումները կը յաճախէին ու միշտ խուլ կը մնար անիկա իմ խրատներուս, եւ իր զբօսանքի, հաճոյքի կեանքը անխափան կը շարունակէր: Տարօրինակ, բայց թերեւս ամենէն ուղիղ ըմբռնումն էր իրենը՝ աշխարհիս մէջ կնոջ մը դերին, կոչումին վրայ: Յոյսը եւ Ուրախութիւնն էր ինքը եւ անձնուրաց արիութեամբ մը կը բաշխէր իր կենդանութիւնը, իր շնորհը, իր հրապոյրը, երբոր ինքը պէտք ունէր անոնց, Քօբէի մանիշակ ծախող աղջիկին պէս,

Elle mourait de l'hiver, en vendant le printemps.

Գ.

Երեկոյթը իր ամենէն ցնծայոյզ վայրկեանին մէջն էր: Շատ մը աղուոր կիներ, շատ մը շնորհալից աղջիկներ, այնքան ալ երիտասարդ մարդիկ ու պատանիներ. լուռ ըղձանքներով ծանրացած մթնոլորտ մը, որուն մէջ՝ տանտիկինը իր հասակին ու արդուզարդին չքեղութեամբը ամենէն զմայլելին կը հանդիսանայ:

Քովէս՝ պզտիկ ձայն մը. սանկ երեկոյթներու սովորական չարախօսութիւնները, որոնց ամենէն թունաւորները տանտիրուհւոյն դէմ կ՚արձակուէին:

— Տեսէք, իր սիրած երիտասարդէն վայրկեան մը չի բաժնըւիր. մարդ չի սեպեր աս կնիկը:

Երիտասարդը՝ տժգոյն ու նիհար մէկն էր, զոր կիները իրարու ձեռքէ կը խլէին: Իր վրդովուած կեանքին կը պարտէր այս ձըգողութիւնը: Ուրոյնութիւն մը ունէր անիկա, եւ իրեն յատուկ դրոշմ մը կար իրեն պատկանող ամէն բանի մէջ: Արհամարհոտ

սպիտիկ ժպիտ մը նուրբ ու սեւ պեխերուն ծայրը․ կոպերը կորած աչքեր, որոնք իր գիշերամոլ մարդու յոգնութիւնները կը պատմէին․ վէս խրոխտութիւն մը որ վաղաթարշամ երիտասարդութեանը վրայ ծաւալած ծանրութեան պէս բանի մը կը նմանէր կարծես ուսումներու եւ հսկումներու մէջ խորասուզուող մարդու ծանրութիւնը:

Մտքի ու ճաշակի տէր մէկն էր: Իրաւագիտութիւն սորվելու համար Եւրոպա կեցած տարիներէն՝ միջակ վկայականով մը, բայց նրբացած իմացականութեամբը վերադարձած էր հոս: Համալսարանին սրահներէն աւելի՝ գեղեցիկ կիներու քով, միանգամայն՝ տաղանդաւոր մարդոց եւ լաւագոյն ընկերութեանց մէջ մտած ու ապրած էր, մսխելով, փճացնելով ունեցածը եւ չունեցածը: Հոս ոչ փաստաբան եղեր էր եւ ոչ դատաւոր․ անկեղծութեամբ, քաջութեամբ խոստովանած էր իր ապիկարութիւնը:

Ամէն ինչ չափաւոր, գրեթէ մեղմ էր իր վրայ, իր ձայնը, իր շարժումները․ բայց ատոր խորը կը տեսնայիր անձնավստահ մարդու, կամ՝ աւելի ճիշդը ըսելու համար՝ իր գերազանցութիւնը գիտցող մարդու մը անխռով հանդարտութիւնը:

Աղջիկներու ետեւէն չէր վազեր․ երեխաներ անոնք՝ իր փորձ, գրեթէ հայրական աչքին: Ջիջում մը, ստորնացում մը պիտի ըլլար իրեն համար խռովել կոյսի մը մաքուր հոգին․ այս կենցաղասէր մարդուն մէջ՝ ահա այս կերպ իր կեանքին հակասող ազնուութիւններ ալ կային: Իր ասպետական, կռիւով, յարձակումով բերդ առնող մարդու համբաւին եւ սովորութեանցը հակառակ էր տեսլական սիրոյ մը հեռանկարովը աղջկան մը սրտէն ներս սպրդիլ․ այս Ոդիսեւսի միջոցները իրեն չէին պատշաճեր:

Զրուցուածին նայելով՝ տարիէ մը ի վեր տիկին․․․․–ի մտերիմն էր, ու ամէնքը, իրենց բոլոր չարախօսութեանց մէջ անգամ, այս երկուքին միջեւ ճշմարիտ ներդաշնակութիւն մը գտեր էին ու երկուքին ալ սովորական էակներ չըլլալէն առաջ կուգար անշուշտ:

Դ.

Հիմա կը պարէին. այրերը իրենց պահանջումներուն անհամբերութիւնը բերելով հոս ալ, կիները իրենց անձնամատոյց մեղկութիւնը. խօլական դիրկընդխառնումներու, վէտվէտումներու անընդհատ շարք մըն էր այս ամէնը:

Վալսին՝ Տիկինն ալ եղաւ այն երիտասարդին հետ, որ իր խօսակիցը եղած էր գրեթէ շարունակ, եւ պարողներուն մէջ այս եղաւ էն չնորհալի զոյգը: Զմայլած կը դիտէինք զիրենք. պար մը չէր այս, այլ շլացուցիչ բան մը, եթերային ու ցնորական սլացում մը, յափշտակութիւն մը, քերթուած մը ամբողջ:

Միւս պարողները իրենք ալ կանգ առեր էին այս զոյգին շուրջը հիացած, հիացում, որուն մէջ նախանձը իր արդար բաժինը ունէր:

Յանկարծ, սայթաքումի պէս բան մը պատահեցաւ, կինը իր բոլոր ծանրութեամբ վար իյնալու պէս եղաւ. երիտասարդը մեծ ճիգով յաջողեցաւ իր գիրկին մէջ բռնել զայն:

— Ոտքը սահեցաւ, կ'ըսէին:

Ոչ, աւելի բան մըն էր, նուաղում մը ունեցեր էր:

— Հասէ՛ք, Տօքթօռ, պոռաց երիտասարդը:

Իսկոյն քովը վազեցի ու երկուքնիս բազմոցին վրայ տեղաւորեցինք զինքը. հազիւ կրցաւ աչքերը բանալ. անմիջապէս տեսայ սրտի կաթուածի բոլոր նշանները:

Ընդհանուր տակնուվրայութեան մէջ՝ դեղ մը ապսպրելն անգամ անկարելի կը դառնար. օտարականները հեռացուցինք. հիւրերը մէկիկ մէկիկ մեկնեցան. բայց դեռ սանդուխներուն վրայ անոնց ոտնաձայնը չմարած, անիկա իր հոգին աւանդեց, գլուխը իր սիրած տղուն գիրկին մէջ, նոյնիսկ իր բոյնին մէջ նետահար սպաննուած թռչունի մը պէս, ժամանակ չձգելով որ դեղ կամ դարման մը ընեմ:

Այս եղաւ ահա իր վախճանը. կեանքին բոլոր երանութիւնները միացած, խառնած էին այն երկվայրկեանին մէջ, ուր կեանքը կը թողուր. ասկէ աւելի երջանիկ մահ մը կրնա՞ք երեւակայել, պատրաստել, չինել ձեզի համար:

Հիւանդութիւններու, ցաւերու մէջ չտառապեցաւ. ծերու-

թիւնը չփճացուց իր շնորհները․ պաշտելի ու պաշտուած կինը մնաց մինչեւ վերջի վայրկեանին ու ընդհանուր զմայլումով մը ողջունուած, իր սիրած տղուն թեւին վրայէն գնաց հեռացաւ անիկա: Բաժակի մը պէս, որ կոչունքի մը սեղանին վրայ, ցնծութեան մաղթանքներու, բախումներու մէջ կը փշրուի, փոխանակ դուրսը սպասաւորներու ձեռքով, լուացքի աղտոտ ջուրին մէջ օր մը կոտրելու անհետանալու, այս կինն ալ էն շնորհագեղ պատկերի մը մէջ գերագոյն երջանկութիւնը զգացած ու պարգեւած ժամուն անհետացաւ:

Գ. ԶՕՀՐԱՊ

ԻՄ ԽՆԱՄԱՏԱՐԸ

Բագւում ես իջեւանեցի իմ մեծ մօրաքրոջ մօտ: Այնտեղ պիտի մնայի մինչեւ որ վիճակս քիչ թէ շատ պարզուէր:

Այդ անսահման բարի եւ զգայուն կինը պանդխտութեանս մէջ եղաւ ինձ համար երկրորդ մայր: Երբեք չեմ մոռանայ այն ջերմ գուրգուրանքը, որով նա սեղմելով ինձ իւր նիհար կրծքին, իւր հինգ զաւակներին աւելացրեց վեցերորդը:

Տասնեակ տարիներ յետոյ, երբ մի աշնանային օր այցելեցի նրա գերեզմանը, որ գտնւում է մօրս գերեզմանի քով, ինձ պաշարեց կրկնակի վիշտ: Մարդիկ մի անգամ են զրկւում իրանց թանկագին մօրից, ես զրկուել էի երկու անգամ:

Ես ունէի մի մօրեղբայր Յակովբ անունով, որ պիտի զբաղուէր իմ վիճակով: Դա մի հասարակ դերձակ էր, որ սակայն ունէր բազմաթիւ ծանօթներ եւ վայելում էր նրանց յարգանքը:

Որոշուեց, որ ես կարող եմ ծառայել կամ մի մասնաւոր գրասենեակում կամ որեւէ արքունական հիմնարկութիւնում: Շամախիում, չորս ամիս ոստիկանատանը ծառայելով իբրեւ գրագիր, ես ռուսերէն ձեռագիրս բաւական մշակել էի:

Մօրեղբայրս պատուիրեց ինձ մի որեւէ բան գրել խնամքով եւ տալ իրան: Ես տողացանցը դրեցի մի մեծ թերթի տակ եւ ամենայն բարեխղճութեամբ ընդօրինակեցի ամենագեղեցիկ էջը գեղագրութեան տետրակից:

— Ափարի՛մ տղայ, մարգարիտներ ես շարել,— գոչեց մօրեղբայրս, ձեռագիրս տեսնելով,— ես քո մասին արդէն խօսել եմ Առստամ-բէգի հետ:

Եւ թերթը ծալեց, դրեց իւր մինդարի տակ, որպէսզի հարկաւոր դէպքում ցոյց տայ Առստամ-բէգին, որ նահանգական ատեանում պաշտօնեայ էր:

Բագուն յափշտակել էր ինձ: Ամբողջ օրերով ես թափառում էի նրա անսալայատակ, փոշիալի փողոցներում: Ամենից աւելի

սիրում էի ծովափը: Այստեղ ես ժամերով պտտում էի նաւամատոյցները, դիտելով լայնատարած ծովը եւ նրա վրայ սփռուած նաւերն ու նաւակները:

Ամէն ինչ այդտեղ ինձ համար նոր էր, տարօրինակ, գրաւիչ: Այնքան գրաւիչ, որ երբեմն կարծում էի, թէ ընկել եմ տատիս նկարագրած կախարդական աշխարհներից մէկը:

Ես նայում էի ջրի երեսին մեղմիկ սահող մակոյկներին, եւ նրանք ինձ թւում էին կենդանի էակներ: Նայում էի հեռացող նաւերի առագաստներին, եւ նրանք ինձ թւում էին հսկայական կարապներ: Եւ իմ մտքերը սլանում էին հեռու ու հեռու, անծանօթ երկրներ, ուր, ինձ թւում էր, մարդիկ աւելի անհոգ են, աւելի երջանիկ: Պատանեկակա՜ն երազներ...

Ես նախանձում էի ամէնքին, ով գնում էր այդ նաւերով, եւ կարծում էի, որ գնացողները խղճում են մնացողներին, առանձնապէս ինձ: Ես նախանձում էի նոյնիսկ այն ծովային անթիւ թռչուններին, որոնք ուրախ եւ համարձակ նստում էին նաւերի խաչաձեւ կայմերի վրայ:

Մի օր մի խումբ աշակերտներ իտալական դպրոցի համազգեստով մի շոգենաւով գնում էին չգիտեմ ուր: Ես կանգնած էի նաւամատոյցի ծայրում եւ նայում էի, թէ ինչպէս նաւի հեռանալով նրա խարիսխը կամաց-կամաց դուրս էր գալիս ծովից: Երբ նա բոլորովին բարձրացաւ եւ կպաւ շոգենաւի կողքին, աշակերտները սկսեցին խմբովին երգել: Բոլորն իմ տարիքի պատանիներ էին, բոլորը զուարթ, ուրախ, իսկ ես նրանց հասակում կեանքի հոգսերով արդէն ծանրաբեռնուած:

Աչքերս ակամայ լցուեցին արտասուքով: Մի վայրկեան գլուխս պտտեց, եւ ես պատրաստ էի ինձ ծովը գցել: Բայց իսկոյն զգացի, որ չունիմ իրաւունք ցնորքներով տարուելու: Չէ՞ որ այնտեղ, հեռու ծննդավայրում իմ օգնութեանն են սպասում թանկագին էակներ, չէ՞ որ ես եմ նրանց միակ ապաւէնը:

Եւ այսպէս, ամէն անգամ երբ երեւակայութիւնս բորբոքւում էր, անողոք իրականութիւնը բռնում էր ինձ իւր երկաթեայ ճանկերով եւ երկրին կպցնում:

Պէտք էր, վերջապէս, մի գործ գտնել:

Այս յուսով ես ամէն օր գնում էի մօրեղբօրս մօտ: Նրա խանութը գտնւում էր ծովափի մօտ, մի փոքրիկ քարվանսարայի

մթին անցքում։ Այնտեղ ես ծալապատիկ նստում էի մինդարի վրայ եւ դիտում դիմացի խանութներն եւ անցորդներին։

Մի զուարթ եւ կատակասէր մարդ էր Քեռիս։ Յիշում եմ նրա կարճլիկ եւ հաստ բեղերը, ժպտուն շրթունքները, լիք-լիք այտերը եւ հեգնանքով լի սեւորակ աչքերը։

Նա գիտէր ծաղրել կեանքը ինչպէս փիլիսոփայ, երբեմն ցինիքաբար։ Յաճախ նրա անփոյթ արտասանած խօսքերը նոյնքան սուր էին, որքան նրա ասեղի ծայրը։

Նա սիրում էր ժամանակ-ժամանակ իւր բարեկամների հետ բաժակ-բաժակի զարկել ոչ յանուն Բաքոսի, այլ չոր ու ցամաք Բագւում Շամախու ծաղկաւէտ հովիտները յիշելու համար։

Տանը նա հիւրեր չէր ընդունում, նոյնիսկ ինձ հազիւ հրաւիրում էր այնտեղ։ Նրա ամուսինը մի եսամոլ եւ անհիւրընկալ կին էր, եւ ես նկատում էի, որ իմ բարի քեռին մի քիչ ճնշուած է նրանից։

Մի բան, որ առանձնապէս սիրում էի այդ գէր եւ կենսախինդ մարդու մէջ, այն էր, որ նա երբեք խրատներ չէր տալիս ինձ։ Այդ ինձ համար հազուագիւտ բան էր, վասնզի ամէն ոք, կարծես, սրբազան պարտականութիւն էր համարում գլխիս քարոզներ կարդալու, նոյնիսկ ժամհար Կարապետը։

Քեռիս միայն ասում էր․

— Մեծ տղայ ես, աչքաբաց եղիր, տե՛ս ինքդ, քննիր, որը վատ է — երես դարձրու, որը լաւ է — օրինակ վերցրու։

Իսկ տեսնելու եւ քննելու բան շատ կար այդ նոր միջավայրում, նոյնիսկ եթէ քեռուս խանութից դուրս էլ չգայի։ Այնտեղ գալիս էին ամէն դիրքի եւ տեսակի մարդիկ։

Բայց կար մէկը, որ շուտով պիտի դառնար իմ խնամատարը։ Քեռիս ամենից աւելի նրա հետ էր բաժակ բաժակի զարկում։

Դա մի արագաշարժ եւ արագխօս մարդ էր, որին կոչում էին Կարկուտ Գասպար։ Տարօրինակ էր այդ մարդու կերպարանքը։ Նրա սեւ ու խիտ միրուքը սկսւում էր ուղիղ աչքերի տակից եւ ծածկելով երեսն ու կոկորդը, տարածւում էր ամենուրեք։ Նրա գլխի թանձր մազերը նեղ ճակատի վրայ գրեթէ միանում էին թաւ ունքերի հետ։ Մինչեւ անգամ նրա մսալի քթի եւ ուռած կոպերի վրայ մազեր կային, իսկ ականջների ծակերը ծիծեռնակի բների էին նմանւում։

Կարկուտ Գասպարի գլխաւոր արհեստն էր միջնորդութիւնը նաւատէրերի եւ ապրանք ուղարկողների միջեւ։ Բայց նա պարապում էր եւ ուրիշ գործերով, օրինակ՝ գնում էր չոր մրգեղէն, բրինձ, փորթուգալ կամ ալխատած ձուկ եւ շահով վաճառում ուքի վրայ։ Երբեմն ես տեսնում էի նրան կռնատակին ապակիներով լի մի պահարան դէպի նաւամատոյց վազելիս։ Այնտեղ նաւերի վրայ նա ապակիներ էր գցում։

Օրն երկու երեք անգամ Կարկուտ Գասպարն անցնում էր մօրեղբօրս խանութի առջեւով։ Յաճախ կանգ էր առնում եւ հաղորդում նորութիւններ այնպէս արագ, որ խօսքերը իսկապէս կարկտի պէս էին տեղում։ Նա ինքը երբեք չէր ճամբորդում, բայց գիտէր բոլորը, ինչ որ անցնում էր ծովի վրայ եւ նրա բոլոր նաւամատոյցներում, սկսած Բագուից մինչեւ Պարսկաստան եւ Հաշտարխան։

Մի օր Կարկուտ Գասպարը իւր բարեհաճ ուշադրութիւնը դարձրեց ինձ վրայ։

— Մի՞ տղան է,— հարցրեց նա քեռուս իւր սովորական արագութեամբ։

— Քրոջս,— պատասխանեց քեռիս։

— Ջի՞ համա էկե,— հետաքրքրուեց Գասպարը։

— Եկել է այստեղ գործի մտնելու։

Առանց երկար խորհելու, Կարկուտ Գասպարը խորհուրդ տուեց ինձ՝ ծովային ծառայութիւն մտնելու։ Ոչ իբրեւ նաւաստի, այլ իբրեւ նաւի գործակատար։ Եւ խոստացաւ այս բանում ինձ օգնել։

Քեռիս հակառակեց։

— Դեռ թող ցամաքը վերցնենք, յետոյ ծովը կը գրաւենք,— ասաց նա իւր սովորական կատակով։

Բայց ես քեռուս հետ համաձայն չէի։ Աւելի լաւ էր ծովից սկսել։ Ես յափշտակուեցի Կարկուտ Գասպարի խորհրդով եւ այդ րոպէից սիրեցի նրան։

Հէնց որ նա հեռացաւ, դուրս եկայ քեռուս խանութից եւ վազեցի ետեւից։ Հազիւ կարողացայ հասնել նրան եւ շունչս կըտրըուած հարցրի.

— Պարոն Գասպար, դուք կարո՞ղ էք ինձ համար մի պաշտօն գտնել որեւէ նաւի վրայ։

Նա ներողամտաբար ժպտաց, հասկացնելով ինձ, թէ դրանից աւելի դիւրին բան չկայ նրա համար։

— Լող տալ, տե՞ս, լող տալ,— հարցրեց նա։

— Ոչ, չգիտեմ,— պատասխանեցի ես, որ կեանքումս ջուր մտած չկայի։

— Դու լող տալը սովորիր,հեշտ է, հեշտ է,— ասաց Գասպարը եւ, ապակիների պահարանը կոնատակին սեղմելով, չքացաւ։

Նրա խոստումն ինձ միանգամայն ոգեւորեց։ Չգիտեմ ինչու, նա ինձ հաւատ ներշնչեց։ Ինձ թուաց, որ այդպէս արագ խօսող եւ արագ քայլող մի մարդու համար կեանքի մէջ անկարելի բան չպիտի լինի։

Ես վճռեցի լող տալը սովորել, թէեւ ոչնչից այնքան երկիւղ չունէի, որքան ծով մտնելուց։ Ես լսել էի, որ հաստ մարդիկ շատ դիւրին են սովորում լողալը։ Որովհետեւ այն ժամանակ ես բաւական գէր էի, ուստի մի օր լողարանում պարանը բաց թողեցի եւ փորձեցի ջրի երեսին մնալ։ Բայց իսկոյն արճիճի գնդակի պէս գնացի ծովի յատակը։ Բարեբախտաբար, սանդուխքը մօտ էր, բռնեցի եւ վերեւ բարձրացայ։

Ապագայում շատ անգամ եմ փորձել, բայց երբեք չկարողացայ լողալը սովորել։ Յիշում եմ, որ մի անգամ խեղդուելուց ինձ ազատեց մօրաքրոջս որդին, Յովհաննէս Արէլեանը, որ շատ ճարպիկ լողորդ էր։

Ամէն անգամ Կարկուտ Գասպարին հանդիպելիս, յիշեցնում էի նրան իւր խոստումը։ Եւ նա ազնուաբար ոչ միայն յետ չէր կանգնում իւր խօսքից, այլ եւ աւելի ու աւելի յուսադրում էր ինձ, ամէն անգամ հաւատացնելով, թէ իւր համար անկարելի բան չկայ աշխարհի երեսին, մանաւանդ ծովի վրայ։ Եւ երբեք չէր մոռանում հարցնել.

— Լող տալ սորցի՞ր, լող տալ։

— Այո՛,— ստեցի ես մի օր, վերջապէս, ամաչելով իմ անշնորհքութիւնից։

— Աֆարիմ, աֆարիմ,— գովեց ինձ Կարկուտ Գասպարը, ձեռը ուսիս զարկելով,— դէ, հիմի, չոեդ փոխի, չոեդ։

Նա ուզում էր ասել, որ հագուստս փոխեմ։ Պէտք է ասած, որ ես Բագու եկել էի Շամախու հագուստով — քօշերով, արխա-

լուղով, չուխայով եւ Բուխարայի մորթուց կարած գդակով: Հայրս ատելով ատում էր նորաձեւ հագուստները եւ հագնողներին անուանում էր «հողկարագ», որ շատ մեծ վիրաւորանք էր:

Յիշում եմ, մի անգամ եկեղեցուց տուն վերադառնալիս, մի խումբ երեխաներ «չիչ փափա՛ղ, չիչ փափա՛ղ» գոչելով, յարձակուեցին ինձ վրայ ձիւնի գնդակներով: Մի բարձրահասակ պատանի նշան դրեց փափաղս եւ գլորեց գետին:

Այդ պատանին այսօրուան իմ բարեկամն է, յայտնի նաւթարդիւնաբեր եւ հասարակական գործիչ Համբարձում Մելիքեանը:

Մի օր մօրեղբայրս ինձ հեգնաբար հարցրեց.

— Հըմ, ի՞նչ է ասում Կարկուտը. տեղ գտա՞ւ քեզ համար նաւի վրայ:

Ես ամաչեցի, որ բանակցութիւնս Գասպարի հետ քեռուցս գաղտնի էի պահել:

— Դո՛ւ գիտես քո գործը,— ասաց բարի քեռիս, գլուխը թեքելով կրծքին, որ իւր կարը շարունակէ,— բայց Կարկուտը մի քիչ քամի փչող է:

Ես վշտացայ, ես հաւատ ունէի դէպի Կարկուտ Գասպարը:

Մի օր նրա հեղինակութիւնը շատ բարձրացաւ իմ աչքում, երբ տեսայ նրան երկու նաւապետների հետ բարեկամաբար զըրոյց անելիս: Բայց, աւա՜ղ, հէնց հետեւեալ օրն այդ հեղինակութիւնը բաւական նսեմացաւ:

Ես անցնում էի ծովափով, միշտ երազելով ինձ նաւի վրայ, միշտ երեւակայութեամբ սլանալով անծանօթ աշխարհներ:

Կարկուտ Գասպարը, կռնատակին երկու հատ քիւթում, այսինքն՝ ապխտած ձուկ, դրած, գնում էր տուն: Ես մօտեցայ նրան եւ դարձեալ խօսք բաց արի պաշտօնիս մասին: Խնամատարս ասաց.

— Մի քիչ էլ համբերիր, մի քիչ էլ. «Ցեսարեվիչի» վրայ տեղ է բացուելու, տեղ է բացուելու:

Եւ սկսեց նկարագրել իմ մօտակայ վիճակն այնպիսի փայլուն գոյներով, որ ես արդէն երջանիկ համարեցի ինձ: Ապա ինձնից անմիջապէս իրան անցաւ եւ սկսեց թուել իւր կապերը ծովային մեծամեծների հետ: Նրա ասելով՝ ոչ մի նաւապետ չի կարող համարձակուել նրա խնդիրը մերժելու: Իսկ եթէ մէկը

մերժի, այն ժամանակ...

Այստեղ Կարկուտ Գասպարը աչքերը փակեց եւ գլխով ինչ որ անորոշ շարժումն արաւ։

Այդ միջոցին մեր դէմուդէմ երեւաց հարբած նաւաստիների մի խումբ, երգելով եւ պարելով։ Խումբը մօտեցաւ եւ շրջապատեց Կարկուտ Գասպարին եւ սկսեց հետը կատակներ անել, սկզբում անմեղ, բայց հետզհետէ աւելի ու աւելի անվայել։ Բանն այնտեղ հասաւ, որ նաւաստիներից մէկը բարձրացաւ խնամատարիս ուսերի վրայ։ Գասպարը կմշտեց նրան եւ վայր գցեց։ Միւսը խլեց նրա կռնատակից մի քիւթում եւ սկսեց կրծոտել։

Ես զարմացայ տեսնելով, որ բարեկամս ոչ միայն չի վիրաւորւում այդ անվայել կատակներից, այլ եւ, կարծես, նրանք հաճելի են իրեն։

Վերջապէս նաւաստիները հեռացան։ Գասպարը դարձաւ ինձ եւ ասաց, թէ բոլորը իւր ստրուկներն են եւ թէ բաւական է, որ հրամայի, ամէնքն իրանց ծովը կը գցեն, եւայլն եւայլն...

Ես բաժանուեցի նրանից անախորժ տպաւորութեան տակ։ Ինչ ուզում էք ասէք, դառն էր հիասթափուել մի մարդու վերաբերմամբ, որին ույժ էի համարում եւ որը այնքան պատրաստակամ յանձն էր առել իմ խնամատարը լինելու։

Բայց եւ այնպէս, հաւատը դէպի Գասպարը չմեռաւ իմ մէջ։

Շաբաթուան վեց օրը նա հագնւում էր շատ հասարակ, մինչեւ անգամ կեղտոտ։ Նրա սեւ ֆուրաշկան այնքան իւղոտ էր, որ փայլում էր պողպատեայ թերթի պէս, նրա արխալուղի եւ պիջակի կուրծքն ու փէշերը միշտ ծածկուած էին ներկի եւ խէժի բծերով։

Բայց կիրակի օրերը նա միանգամայն կերպարանափոխւում էր։ Նա ունէր աղուէսի թէ արջի մորթուց կարած մի մեծ մուշտակ, որի երկայն կինամոնագոյն մազերը ծածկում էին նրա կուրծքը ամբողջովին, եւ նոյն մորթուց կարած կլոր եւ մեծ գդակ։

Ես մտքումս պարծենում էի նրանով, երբ տեսնում էի, ձեռները մուշտակի թեւերի մէջ կոխած՝ մտնում էր եկեղեցու գաւիթը։ Այդ ժամանակ նրա քայլուածքը աղայական էր, ծանր, հանդիսաւոր։ Աջ ու ձախ նա իւր ծանօթներին բարեւում էր հըպարտ, ինչպէս վայել էր սեփական արժանապատուութիւնը յարգող մի մարդու։ Իսկ իմ խոնարհ բարեւներին հազիւ պատասխա-

նում էր գլխի թոյլ շարժումով։ Այդ պահերին, հարկաւ, ես չէի համարձակւում նրան մօտենալ։

Մի օր յանկարծ Կարկուտ Գասպարը չքացաւ եւ չերեւաց ամբողջ երեք օր։ Ես սկսեցի անհանգստանալ։ Վերջին անգամ նա ինձ լիովին ապահովել էր, ասելով.

— Տեղդ «Ցեսարեվիչի» վրայ պատրաստ է հաա՛, դու էլ պատրաստ կաց։

Հարցրի մօրեղբօրս, ասաց՝ թէ Գասպարը հիւանդ պառկած է տանը։

— Ես կը գնամ նրան տեսնելու,— ասացի ես։

— Լաւ էլ կ՚անես,— համաձայնուեց քեռիս,— բարեկամը բարեկամին ձախորդ օրերին է հարկաւոր։ Գասպարը մի քիչ քամի փչող է, բայց ինձնից բարեւիր նրան։ Ասա՛, թող շուտ առողջանայ, Բարեկենդանը մօտենում է, չոլախ Բախիչը Սաղեանի լաւ գինի է ստացել։

Ես վազեցի խնամատարիս տունը։ Ա՜հ, երանի թէ չգնայի։

Նա ապրում էր քաղաքի Բերդ կոչուած արուարձանում, մի շատ նեղ փողոցում, սեփական տանը։

Ես մտայ մի փոքրիկ, կեղտոտ եւ խոնաւ բակ։ Մի մեծ սագ, ինձ տեսնելով, անմիջապէս թեւերը բարձրացրեց եւ ճչալով վազեց դէպի ինձ, կարծես, անցագիր էր պահանջում։ Երկու բադ մի անկիւնում ծանրաբարոյ աջ ու ձախ անցուդարձ էին անում, իրանց երկճիւղանի ոտներով ցեխոտ գետնի վրայ նախշեր դնելով։

Ես անցայ աստղաձեւ կապած պարանների վրայ փռած լըւացքի տակով, փափաղս պահելով, որ չընկնի։ Մտայ գետնին հաւասար մի պատշգամ։ Այստեղ երկու գրեթէ հասակակից մանուկներ, կեղտոտ ինչպէս թափառական գնչուներ, խաղում էին խոնաւ յատակի վրայ։

Ինձ դիմաւորեց շալը ուսերին գցած մի կին, տգեղ ու քացախած դէմքով, եւ հարցրեց՝ ում եմ կամենում։

— Կարելի՞ է պարոն Գասպարին տեսնել։

Կինը նայեց ինձ ոտից մինչեւ գլուխ, առանց մի խօսք ասելու բաց արաւ դէպի պատշգամ նայող դռներից մէկը եւ ձեռքով նշան արաւ, որ մտնեմ։ Ես մտայ. ինքն էլ հետեւեց ինձ։

Առաջին րոպէ ոչինչ չկարողացայ նշմարել — սենեակը

մութն էր: Յետոյ մի անկիւնից լսեցի ծանր տնքտնքոցի ձայն: Մօտեցայ:

Այնտեղ, պատի տակ, մի մեծ թախտի վրայ պառկած էր Կարկուտ Գասպարը: Բարեկամս թաղուած էր բազմաթիւ վերմակների տակ, որոնց վրայ գցած էր նրա փառաւոր մուշտակը:

— Սանդրօ, դո՞ւ ես,— արտասանեց նա, կապոյտ թաշկինակով կապած գլուխը դուրս բերելով վերմակների տակից: Բարով: Տեսնում ե՛ս էլի: Քեռիդ ինչպէ՞ս է: Վայ մէջքս... Ա, կընիկ... ողնաշարս կտոր կտոր է լինում: Նստիր, Սանդրօ. ա կընիկ, չայ բեր, մուրաբա բեր Սանդրոյի համար:

Բայց քացախած դէմքով կինը տեղից չշարժուեց: Նա մի կատաղի հայեացք ձգեց հիւանդի վրայ եւ երեսն արագ դարձրեց դէպի պատշգամ, քթի տակ ինչ որ տրտնջալով:

— Ի՞նչ է պատահել, պարոն Գասպար,— կամեցայ ես իմանալ խնամատարիս հիւանդութիւնը:

— Նաւի վրայ մրսել եմ, վայ, վայ մէջքս: Ջերմ ու տենդ է, վա՛յ, կ'ասես չուռ է տալիս սաթլջամի: Ա կնիկ, աղիւս տաքացրու... Վա՛յ...

Կինը դարձեալ անշարժ մնաց:

Ես մօրեղբօրս պատուէրը Բարեկենդանի մասին յայտնեցի խնամատարիս: Երբ խօսքս հասաւ Սաղեանի գինուն, յանկարծ տգեղ կինը փոթորկուեց:

— Հա՞,— գոչեց նա,— հիմա էլ Սաղեանի գինի, Մատրասինը հերիք չէ հա՞: Խմիր, խմիր, տեսնենք վերջդ ի՛նչ է լինելու:

— Ա՛յ, կնիկ, մի՛ տաքանար, դու գիտես, որ Յակովբը հանաքչի է,— փորձեց մեղմացնել կնոջ կատաղութիւնը խնամատարս:

Բայց երեւում էր, որ տգեղ կնոջ սիրտը վաղուց էր լցուել թունով եւ առիթի էր սպասում, որ ժայթքի: Եւ սկսեց: Աստուած իմ, ինչեր ասաց նա խեղճ մարդուն: Դուրս եկաւ, որ եռանդուն, արթուն բարեկամս ե՛ւ ծոյլ է, ե՛ւ հարբեցող, ե՛ւ մեծախօս, ե՛ւ սուտ ասող:

Մարդը մուշտակը քաշել էր գլխին եւ լուռ լսում էր: Երբ կինը դուրս թափեց իւր սրտի ամբողջ թոյնը, այն ժամանակ նա մուշտակը յետ քաշեց եւ ասաց.

— Պրծա՞ր, դէ հիմի մուրաբա բեր Սանդրոյի համար:

Ես հրաժարուեցի հիւրասիրութիւնից։ Ինձ համար անսահման ցաւալի էր նրա խեղճութիւնը։ Մինչեւ այդ ժամանակ իմ տեսած ընտանիքներում մարդն էր հալածել կնոջը, այդ օրը հակառակն էի տեսնում։

Ի՛նչ, Կարկուտ Գասպարը, որ խօսելիս կրակ էր թափում բերանից — այդպէս ընկճուա՞ծ իւր տանը, այդ տգեղ կնոջի՞ց։

Բայց մի բան, որ ինձ ամենից աւելի վշտացրեց, հետեւեալն էր։ Երբ ես Գասպարին ասացի, թէ արդէն պատրաստ եմ ծովային ծառայութեան համար, տգեղ կինը նորից կատաղեց.

— Ի՛նչ,— գոչեց նա,— ուրեմն դրա՞ն էլ ես պաշտօն խոստացել նաւի վրայ։

Եւ, դառնալով ինձ, աւելացրեց.

— Մի՛ հաւատար, գնա քեզ համար ուրիշ գործ գտիր։ Դրա ձեռքից բան չի վեր գալ։ Մեծախօ՛ս...

Օհ, որքա՛ն խղճալի էր այդ պահին իմ խնամատարը եւ որքա՛ն ողորմելի նրա փառահեղ մուշտակը։

Ես հրաժեշտ տուեցի նրան դառնացած սրտով։

Երբ տեսածս պատմեցի հօրեղբօրս, նա ասաց խորհրդաւոր եղանակով.

— Կնիկ կայ, որ անուշ վարդ է, կնիկ կայ, որ ցաւ ու դարդ է։

Եւ գլուխը թեքելով իւր գործին, հառաչեց։ Քիչ անցած՝ նա ասաց.

— Ձեռագիրդ Առստամ-բէգին տուեցի։ Վաղը գնա նրա մօտ, կարծեմ տեղ կայ նահանգական դատարանում։

Եւ այսպէս, իմ երազը չիրագործուեց, ես չարժանացայ ծովային ծառայութեան։

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

“ԵՍ ԻՆ՞Չ ԸՆԵՄ ՀՈԳԻՈՎ”

Ձմեռուան անուշ կիրակիներէն էր, ցուրտ օդով մը որ աւելի քաղցր կ՚ընէ տունը մնալու եսական հաճոյքը: Տան վարի պզտիկ սենեակին մէջ, ուր վառարանին տաքութեամբը թուլցած մթնոլորտը ապրիլը հաճելի կ՚ընէր այդ մտերիմ ու ապահով եղկութեան մէջ, երկու եղբայր մինակ մնացեր էին: Զարմայր սեղանին առջեւ անցած՝ պատմութեան գիրք մը կը կարդար, առասպելի աշխարհի ոլորտներուն մէջ մոլորած: Պատուհանին առջեւ, պզտիկ Տրդատը, իր խաղալիկները առած, լուրջ բան մը ընելու խորունկ ձեւով մը՝ անոնցմով կը զբաղէր:

Տրտում երգ մը երկնցաւ փողոցին ծայրէն. Թաւ ձայնի կըտորներ լայն ողբերգ մը կը թուցնէին՝ որ հովին մէջ կտոր կտոր կ՚ըլլար: Տրդատ ականջ դրաւ: Ձայները մօտեցան, խունկի հոտ մը մինչեւ սենեակին ներսը մտաւ, եկեղեցիի քաղցրութիւն մը բերաւ հոն, ու պատուհանին առաջքը, թափօր մը երեւցաւ, խաչերով, մոմերով, սեւազգեստ մարդերով: Ցուղարկաւորութիւն մըն էր:

Տրդատ, զարմացած, նայեցաւ: Առջի անգամն էր որ իր կեանքի մէջ կը հանդիպէր այս տեսարանին: Չհասկցաւ զայն: Եւ բնազդաբար, տղոց անյագ եւ բռնաւոր հետաքրքրութեամբը.

— Զարմայր, պոռաց, ի՞նչ է աս:

Զարմայր, դժգոհ իր ընթերցումին գինովութենէն սթափելուն, գլուխը վեր առաւ, վայրկեան մը նայեցաւ, ու՝

— Մեռել է, մրմնջեց:

Ցետոյ գլուխը գրքին վրայ կախեց նորէն:

Տրդատ, ապշած, դուրս կը նայէր. փողոցին վարի ծայրը, դեռ կ՚երեւային սեւ մարդերը, եւ խաչը որ անոնց վերեւ օդին մէջ կը ցցուէր. ու ձայները լալագին, կ՚երկննային փողոցին մէջ:

Մեռե՛լ:

Վախ մը չէր զգացածը, բայց անհանգստութիւն մը՝ չհաս—

կրցուած բանէն, անծանօթին առջեւ վրդովումը:

— Ի՞նչ ըսել է մեռել:

— Զարմայր դիրքը ձգեց: Պզտիկին հարցումը իր ծիծաղը շարժած էր: Բզէ՛զ. դեռ չէր գիտեր:

Ու բացատրեց անոր.

— Ատ մարդիկը հիմա գերեզման կը տանին կոր մարդ մը որ մեռած է: Ատ մարդը ա՛լ չպիտի ապրի, ա՛լ աշխարհի վրայ չպիտի պտըտի, ա՛լ պիտի չուտէ, պիտի չխօսի, պիտի չտեսնէ...

Տրդատ, աչուըները բացած, մտիկ կ'ընէր: Խաղալիկ մը զոր ձեռքը բռներ էր, վար ինկաւ:

— Ի՛նչ, հիմա ատ մարդը ա՛լ պիտի չքալէ՞:

— Չէ՛, հողին մէջ պիտի դնեն զայն, վրան ալ քար մը: Եւ հողին մէջ որդերը պիտի ուտեն անոր մարմինը: Աչքերը, թեւերը, ոտքերը պիտի փրթին, հալին, եւ մինակ ոսկորները պիտի մնան:

— Ամէն մարդ ասա՞նկ պիտի ըլլայ. ե՞ս ալ ասանկ պիտի ըլլամ:

— Դուն ալ, ես ալ, հայրիկն ալ, մայրիկն ալ:

Ահագին սարսափ մը ցցուեր էր Տրդատին պզտիկ հոգիին մէջ, եւ այդ թարմ իմացականութիւնը՝ առաջին անգամ բախելով ջնջումի գաղափարին, կը ճզմուէր անկից: Չկրցաւ դիմանալ, ու վախուն, սկսաւ լալ:

Զարմայր անոր քով եկաւ, անոր վախէն զուարճանալով:

— Խե՛նթ ես, Տրդա՛տ. վախնալու բան չկայ. դեռ շատ ատեն ունինք մեռնելու:

Տրդատ կուլար, սիրտը այնչափ կոտրած՝ որչափ եթէ իր խաղալիկներէն մէկը կորսուած ըլլար:

Լացին ձայնէն մայրը վար վազեց:

Տրդատ, զայն տեսնելով, լացը շատցուց. թեւերը անոր վզին անցուց, ու գլուխը անոր երեսին դնելով.

— Մայրի՛կ, կը հեծկլտար, ես պիտի մեռնիմ եղեր, դուն պիտի մեռնիս եղեր, ա՛լ պիտի չքալենք եղեր, ա՛լ պիտի չխօսինք եղեր... իրա՞ւ է...

Զարմայր բացատրեց. ու մայրիկը, յուզուած, պզտիկը կուրծքին վրայ սեղմեց, եւ ըսաւ անոր, համբոյրներու մէջ.

— Մի՛ վախնար, տղա՛ս. մեռնելէն ետքը, նորէն պիտի ապ-

րինք։ Աս աշխարհէն ետքը ուրիշ աշխարհ մը պիտի երթանք։ Մեր մարմինը պիտի մեռնի, բայց հոգիներս անդին պիտի երթայ։

Տրդատը լացը դադրեցուցեր էր։

— Հոգի՛ն...

Քիչ մը խորհեցաւ, եւ հարցուց.

— Մինակ հոգի՞ս պիտի երթայ անդին. հապա գլո՞ւխս, հապա թեւե՞րս, հապա ոտքե՞րս։

— Անոնք հողին մէջ պիտի մնան։ Հոգին պիտի երթայ մինակ։

Այն ատեն, ճշմարիտ յուսահատութիւն մըն էր որ պայթեցաւ խեղճ պզտիկին միամիտ սրտէն։

— Ի՛նչ... ըսել է ա՛լ պիտի մայրիկը չտեսնե՞մ, ա՛լ հայրիկիս ձեռքը պիտի չբռնե՞մ, ալ պիտի չքալե՞մ, ալ կերակուր պիտի չուտե՞մ... է՛, ի՛նչ ընեմ։ Հոգիով ի՛նչ ընեմ ես։

Ու լացը նորէն սկսաւ, կատաղի, խորունկ, անյոյս լաց մը այս անգամ։ Եւ մայրիկը, որ պատասխան չէր գտներ, զգաց որ իր աչքերն ալ կը թրջէին։

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

ԵՐԿԻՆՔԷՆ ԻՆԿԱԾ ԿԻՆԸ

Ամառ օրերուն իրիկունները շատ համով կ՚ըլլան լեռներուն մէջ։

Բարձունքներուն վրայ ծառերուն կանանչը մեղմօրէն կը դեղնի, կարմրած երկինքին ծայրերէն, բարակ բայց կարծես այրող ամպեր կրակ կը թափեն, դէմ‑դէմ բլուրներուն մէջտեղ պարապը խունկի գոյն բանով կը լեցուի։

Բոլորովին հանգչած այդ ամայութիւններուն վրայ, զանազան կէտերէ, մաքիներն ու այծերը իրենց սեւ ու ճերմակ գոյներով կը հաւաքուին Եայլան։

Լեռնաշղթային գեղեցկագոյն մէկ մէկ թեւն է ան։ Անկէց վեր Մենծ‑Լեռը կը քաշուի, ինք իր գլխուն, քէն ըրած հսկայի մը պէս ահարկու ու անմատչելի։ Անկէց վար կէս ճամբան մնացած բլուրներուն թօփիկ կանանչը կը կլորնայ։

Գեղին հովիւները լման ամառը Եայլան կը պառկեցնեն իրենց տաւարը։

* * *

— Կրա՛կը, տղա՛ք, կրա՛կը։

Ձայնը Այանինն է որ է՛ն ուշը կը հասնի։ Ձեռքի հաստ գաւազանը մեղմով զարնելով քարերուն, յետամնաց ու չուտիկ այծերը վախցնելու համար։

— Ո՞ւր էս, աղբա՛ր, սպասելէն հոգիս ելաւ,

Վրայ կուտան Ալօն ու Գոլոն, որոնք արդէն տեղաւորած են իրենց հօտերը արտին մօտ, բնական թուփերէ գոյացած փարախներու մէջ։

Մութը կոխելու վրայ է ալ։ Արեւմուտքի դին կրակը իջեր, ծովուն վրայ բոցը հանգչեր է։ Իրիկուն ըլլալուն պէս, Եայլային վրայ օդը յանկարծ կը տաքուկնայ, հովերը կ՚իյնան ատենի մը համար։ Հանդարտ գաղջ ու հոտերով լեցուն մթնոլորտին մէջ հովիւները կը սիրեն թուլնալ, կը նետեն իրենց ձեռքի մականը,

կը հանեն իրենց կռնակին վրայ պառկելէն աղեղցող մախաղը, զգուշութեամբ երկուքի կը ծալլեն, գլուխնուն տակ դնելով:

— Օ՛խ, սանկ քանըմէկ մատներնիս փռենք, ըսելով կ'երկըննան խոտերուն վրայ:

Ցուները իրենց ագին փարտելէն, գետինները հոտուըտալէն կը քաշուին վեր, իրենց դիրքերուն վրայ մուլտկալու:

Այդ հանգիստը հազիւ հինգ վայրկեան կրնայ տեւել:

— Ե՛լ, ծե՛, Ալօ՛, ե՛լ կրակը մէկտեղէ:

Ալօն հովիւներուն պզտիկն է: Ինքնաբերաբար սորված է այն բոլոր պարտականութիւնները, որոնք կը ծանրանան պզտիկներու ճիտին: Զկամ չկամ կ'ելլէ ոտքի, աչքերը շփելով կը մօտենայ օճախին, ուր շատ հաստ ծառի մը կոճը դիշեր ցերեկ կը մխայ: Հովիւը ուժով պուկ մը շունչ կուտայ կոճին, մոխիրները ճերմակ ճերմակ թեւ կը բանան, կը թռին, կ'երթան ու կարմրուկ կրակը մէջտեղը կ'ելլէ:

Ալօն մէկ ծունկը գետին փակցուցած, երկու ձեռքերով կը հաւաքէ մոխիրներուն վրայ սեւ ծայրերով մարած չերտերը, կը դնէ կրակին վրայ: Քանի մը խոշոր պուկէ ետք բոցը արդէն իր ուրախ կարմիրը կը նետէ հովիւին զուարթ երեսներուն վրայ:

— Հա՛յտէ, կրակը եղաւ:

Քիչ վերջը տքալէն կ'ելլէ ծերուկ Այանը: Աչք մը կը նետէ չորս դին, անգիտակցաբար, հին օրերու զգուշութիւններէն մնացած սովորութեան մը հնազանդելով: Մօտի հիւղակը մտնելով կաթին կէրտէլը մէկ դին կախած կը շտկի դէպի պառկած տաւարը:

Լուսնկան փրթած է ալ: Ու Մեծ Լերան հեռաւոր ծայրին վրայ, ամպերը կաթի պէս ճերմակ, արծաթի պէս փէլփլուն՝ կը լուացնեն միջոցը: Լուսնին լոյսը գագաթէն վար դէպի լիճ կը թափի: Ջուրերուն վրայ շուքը կը հաստնայ, ցածուկ բլուրներուն կէսը կը լուսնայ:

Այանը կը մտնէ պառկող հօտին մէջ: Կենդանիները գիտեն արդէն այդ իրիկուան կութին մանրամասնութիւնները: Ցատեր իրենց ոտքերն անգամ քաշելու միտք չեն ըներ հովիւին քայլերէն, կը շարունակեն աղալ իրենց ակռաները:

Հովիւը դոց գիտէ մաքիներուն պտուկները: Իրիկուան այս ՔԷյֆին համար կաթը դժուար է ճարել արդէն կոչնակին հեղ մը

կթուած կենդանիներէն։ Բայց կան պապա մաքիները, Հովիւներուն բացատրութեամբ, որոնց ծիծերը չցամքող աղբիւրի կը նմանին։ Որ ատեն որ փարչ դնես անոնց տակ, լեցուն կը գտնես։

Այանը գիտէ անոնց պառկած տեղն ալ։ Ընտրուած մաքին թեթեւ դժկամութիւնով, գլուխ մը կը թոթուէ, ճիտի բոժոժին ձայնը անուշ տրտմութեան մը պէս կը խառնուի օդին։ Քանի մը կենդանիներու առջեւ տեսարանը կը կրկնուի։ Ու Այանը կէրտէլը լեցուն կը դառնայ օճախին մօտ։

Ալօն պատրաստ է արդէն։ Կէրտէլը կ'առնէ, նախապէս լըւացուած կաթսային մէջ կը վաթէ կաթը, կը տեղաւորէ կաթսան օճախին վրայ։ Յետոյ կ'երթայ հիւղակին եզերքին մէջ պահ դրուած փայտէ խոշոր դգալները բերելու։

Երբ այս ամէնը ըլլան, ամէն մարդ նորէն կռնակը կը փռէ գետին ու կը սկսի վեր նայիլ։ Աստղերը բաւական շատցած են։

Յաճախ օրուան դէպքերը կ'անցնին հովիւներուն շրթունքէն։ Նոր գտնուած արօտի մը փառաբանութիւնը, պաղուկ ջուրի մը գովեստը, խըյախ շուքի մը օրհնենքը իրար կը խառնուին։

Յետոյ կատակներ, լեցուն ու պատկերով հայհոյութիւններ, մոռցուած երգի մը յանկարծական մէկ տունը, իր այրած եղանակովը, հովիւի մտածումներ իրենց պարզ տարօրինակութեամբը կը գրաւեն այդ պահն ալ, երբ անդին քիչ քիչ մեծցող բոցին վրայ կաթսային սեւ կաղապարը կը նստի անշարժ։ Բոցերը անոր կողերէն կը շուլլուին, երբեմն ալ մեծ լեզուներու նման կլորցած՝ կը դառնան կաթին մէջ։

Պզտիկ հովիւը կ'ելլայ պառկած տեղէն, գլխի գտակը մէկ ձեռքը, մէջքի թաշկինակը միւս ափը, կը մօտենայ‿կաթսային, կը բռնէ շրթունքներէն ու կ'առնէ։

Պէտք է սպասել որ կաթին փրփուրները հանդչին, շոգին նուաղի։ Նախնական գիծերը դէմէդէմ կը քաշուին ու ասոնց վրայ սերը իր թրթռուն ոստայնը կը փռէ։ Անմիջապէս վերջը լուսնի լոյսով աղուորցած անհամար բիւրեղներ գիծերուն տակէն կը բուսնին իրարու ետեւէ, իրար հրելով։ Դեղնօրէն ճերմակ երեսին վրայ լուսնին ճառագայթները կտոր կտոր կ'ըլլան, կաթսային կլայուած կողերուն վրայ կ'աստղանան ու մեղմ շոգի մը, անզգալի խունկի մը պէս կը տարածուի կաթսային մէջն ու դուրսը։ Սերը լման կապած է։

Անդին անհամբեր հովիւները իրենց վարտիքին աղերը բացած կ'ըլլան ծունկերուն փոսին վրայ։ Հացը մանր մանր կը փրթեն այդ փոսին մէջ։ Երբ տաքուկ կաթին հոտը կ'երթայ զգուելու Այանին ռունգերը, հրամանը կ'ելլէ։ Պատառները ափերով կը նետուին կաթին մէջ։ Առջի դդալները ընդհանրապէս շատ արագաշարժ կ'ըլլան։ Պատճառը՝ կաթին երեսն է, որմէ ամէն մէկը իր արդար բաժինը կ'ուզէ ունենալ։ Ետքը ետքը դդալներուն երթեւեկը կը դանդաղի։ Կը պատահի որ կաթսային ներսը անոնք իրար դոգեն, պատառներ գրաւեն։ Հովիւները հոդ կը խնդան, կը կատակեն ու բարի խաղաղութիւնով կը վերջացնեն իրենց ՃԱՇԸ։

Լուսնկան աղուոր մը բարձրացած է․ օճախին մէջ կրակը քունի տարուած։ Լիճէն անդին լերան կողն ի վեր փայփլող բոցերն ալ հատնելու վրայ են։ Քունի ատեն է։

Պզտիկ հովիւը աս իրիկուն շատ չէն է սակայն։

— Հա՛տէ, աղբօ, խավալ *մը զարկ,* քէֆը *ըլլալուն, լման ըլլայ, կը պաղատի ան ծերուկ Այանին, գլուխը, մազերը, մօրուքը շոյելով։*

— Զգէ՛, տղա՛յ, ձգէ՛, ատենը չէ։

Այանը շատ կը սիրէ ինքզինքը սուղ ծախել։ Բայց տեսնուած չէ որ ճահիլներուն սիրտը կոտրէ։ Կամացուկ մը ձեռքը կը նետէ գօտիին փաթը քնացող սրինգին, ափին փափուկ մխոցը կը սրբէ գործիքին բերանը, կը հազայ, կը չոկի։

— Հա՛տէ, մտիկ ըրէ՛ք։

Օդը աւելի տաքուկ է, լոյսը աւելի շատ։ Ատեն ատեն զանգակի մը ճիչը լալկան գծի մը պէս կ'երկննայ Եայլային վրայ։

Այանը խորամանկ երգող մըն է։ Առջի բերան իր ածած եղանակները միօրինակ ու դանդաղ կ'ըլլան ու մանաւանդ մաշած։ Գեղի աղջիկներուն բերնի ծամոց եղած պարերգներն ու խաղերը կը ձանձրացնեն շուտ մը։

— Ատամ աղբօր, դուն ալ, ու Աղուէնին աղջկան խաղը զա՛րկ։

Աղուէնին աղջկան խաղը շատ հին երգ մըն է․ հիմա բոլորովին մոռցուած, Այանը զայն սորված է երիտասարդ օրերուն։ Աղջիկն ալ կը ճանչնայ։ Պատմութիւնն ալ կը զրուցէ։

Ու երգը եղէգին մէջէն կ'ելլէ այս անգամ տաքցած, կենդանացած։ Ատեն ատեն հովիւը բերնէն վար կ'առնէ սրինգը կը դնէ

ծունկերուն, գլուխը ճիտին հակած կ'երգէ։

Երկու հովիւները յուզմունքով կը հետեւին անոր խազերուն։

Հովիւները բոլորը մէկ գեղը ծախած են *արդէն։ Անոնց մէջ կ'արթննան անպատմելի բաներ, անուանը չտրուող փափաքներ։ Թմրութիւն մը կուգայ իրենց սիրտը փաթթելու։ Ամէնն ալ նոյն մտածումէն, նոյն երազէն կը չարչարուին։*

— Պա՛, հիմա էրկինքէն կնիկ մը իյնար հոս, ըսողը Ալօն է, երիտասարդ հովիւը։

— Ծօ՛, ադ ինչ ըսիր տղայ։ Ինչա՛նկ ալ գիտես բերնիդ համը։

— Վա՛շ, կը շարունակէ Ալօն, աս քէֆին վրայ կը դրկէի, կը պառկէի։

— Է՛, ինծի փայ *չկա՞յ ծօ, խօսքը կը կտրէ Այանը, եկայ, կ'երթամ կոր, մատներս կնկան երեսը չեն դպած։*

— Աստամ աղբօ՛ր։ Մազերդ ճերմկեր են ալ։ Ինչ որ հիմա ապուր մը չես կերեր, հըմա կէնճըլայ *կ'ուզե՞ս։ Դուն ի՞նչ ընես պի կնիկը. կը շարունակէ Ալօն ոգեւորուած, դէմքը դարձնելով Գոլոյին որ փայտի պէս պառկած տեղէն արդէն ականջները սրած ու նստած է։*

— Անանկ չէ՞, ատաշ։

Ծերուկ Այանը թեթեւ մը կը խնդայ տաք երիտասարդին վրայ, բայց չի կրնար ակռան սեղմել։

— Ծօ՛, խըլը՛տ, դուն ի՛նչ գիտես կնկան համը։ Երէկի տղան չե՞ս։

— Ծօ դուն իրիկուան մը կ'ըլլա՛ս, աղբօ՛ր։

— Դուն ի՛նչ գիտես։

— Ես գիտեմ եա։

— Է՛, էս չուլտի՞մ ծօ։ Մէջ մտնողը Գոլոն է այս անգամ, որ յայտնապէս վիրաւորուած է իր բարձի թողի ըլլալէն։

— Հա՛։ Դուն պակաս էիր կ'աւելցնէ հանդարտօրէն Այանը։

— Ծօ՛, խախուլլի *ճուռպոտ, հոտած, գլուխուդ* ֆէլը *չես նայիր, ելեր կնկա՞յ տիրութիւն կ'ընես։*

Ալոյին ձայնը բարձր է արդէն։ Ձեռքերը գետնին վրայ բան մը փնտռելու ձեւով աջ ու ձախ կը շարժին։

Գոլոն փրփրած, ոտքի կը նետուի։

— Ինծի նայէ՛, ինծի, քու կանգունովդ քեզի կտաւ չեն տար։ Կնիկը ինծի պ'ըլլայ։

Ալօն ալ ոտքի է։

— Ինծի պ՚ըլլայ։

— Չէ, ինծի պ՚ըլլայ։

— Ինծի պ՚ըլլայ կ՚ըսեմ ա՛։

Երկու հովիւները իրենց գունաւոր գաւազանները վերցուցած են։ Իրարու աւելի մօտեցած ու պատրաստ իրարու վրայ նետուելու։

— Ինծի պ՚ըլլայ։ Այանն է որ կուգայ երկուքին մէջտեղը անկուելու։

Հովիւները արդէն իրենց խելքին տէրը չեն։ Երեքն ալ միեւնոյնատեն կը վերցնեն իրենց գաւազանները ու՝

— Ինծի պ՚ըլլայ, ինծի պ՚ըլլայ, ինծի պ՚ըլլայ, պոռալով կը կը նետուին իրարու վրայ։

Գաւազանները աջ ու ձախ վեր ու վար կը շարժին, արագ արագ։ Շուները իրենց դիրքերէն վազելով կուգան կռուողներուն մօտ։ Մաքիները գլուխնին վեր կ՚առնեն վախցած աղմուկէն ու ժխորէն։

Ամենէն առաջ գետին կ՚իյնայ Ալօն։ Անոր կը յաջորդէ Գօլոն։ Ծերուկը ընդհանրապէս խնայուած է երկուքէն ալ։ Ու գաւազանը ձեռքը հանդիսաւոր կերպով մը կը պոռայ.

— Ինծի պ՚ըլլայ։

Պառկողներէն Գօլոն ինքզինքը շուտ կը գտնէ։

Բայց Ալօն կռնակի վրայ ինկած է։ Ծերուկը կը մօտենայ անոր, կը կծկըտի գլխուն մօտ, ու երեսին վրայ սեւ գիծ մը տեսնելով.

— Ի՞նչ է եղեր ծօ։

Մատները կը թաքնան արիւնէն։

Ծերուկին խելքը կը թռի գլխէն։

— Գօլօ՛, Գօլօ՛, վազէ ջուր բեր։

Ու ծերուկը հովիւին սիրտը մտիկ կ՚ընէ։ Կը հանգչի անոր զարկը լսելով։ Ցետոյ ափով ջուր կը սրսկէ, երեսին, բաց կուրծքին, անութին փոսերը։

Ալօն նուաղած էր։

Ծերուկը կը շարունակէ իր խնամքները, կը թոթուէ տղան, լեզուն դուրս կը քաշէ։

— Ելիր, օղուլ, ելիր, բէք ելիր տէ, *կնիկը քեզի ըլլայ։*

— Քեզի ըլլայ, քեզի ըլլայ, *կը ձայնակցի Գոլոն ալ։*

Քիչ ետքը արդէն գլխուն վէրքը ծխախոտով կապուած երիտասարդ հովիւը ոտքի էր։ Ու կնիկը իրն էր այս անգամ, իր արիւնին գինովը։

ՕՇԱԿԱՆ

ՔԱՋ ՆԱԶԱՐԸ

(ՀԷՔԵԱԹ)

1.

Լինում է չի լինում մի խեղճ մարդ՝ անունը Նազար: Էս Նազարը մի անշնորհք ու ալարկոտ մարդ է լինում. է՜նքան էլ վախկոտ, է՜նքան էլ վախկոտ, որ մենակ ոտը ոտի առաջ չէր դնիլ, թէկուզ սպաննէիր: Օրը մինչեւ իրիկուն կնկայ կողքը կտրած՝ նրա հետ դուրս գնալիս դուրս էր գնում, տուն գալիս՝ տուն գալի: Դրա համար էլ անունը դնում են Վախկոտ Նազար:

Էս Վախկոտ Նազարը մի գիշեր կնգայ հետ չէմքն է դուրս գալի: Որ չէմքն է դուրս գալի՝ տեսնում է ճրըքճրըքան լո՜ւսլուսնեակ գիշեր՝ ասում է.

— Ա՛յ կնիկ, ի՜նչ քարւան կտրելու գիշեր է՜... Սիրտս ասում է՝ վեր կաց գնա Հնդըստանից եկող Շահի քարւանը կտրի բեր տունը լցրու»...

Կնիկը թէ.

— Ձէնդ կտրի, տեղդ նստի, քարւան կտրողիս մտիկ արա...

Նազարը թէ.

— Ա՛նզգամ կնիկ, ինչո՞ւ չես թող անում ես գնամ քարւան կտրեմ բերեմ տունը լցնեմ: Էլ ի՞նչ տղամարդ եմ ես, էլ ինչո՞ւ եմ գդակ ծածկում, որ դու համարձակւում ես իմ առաջը խոսես:

Որ շատ կռւում է՝ կնիկը տուն է մտնում, դուռը փակում:

— Հո՛ղեմ էդ վախկոտ գլուխդ, դէ հիմի գնա քարւան կտրի:

Էս Նազարս մնում է դրանը: Վախից լեղապատառ է լինում: Ինչքան աղաչում-պաղատում է, որ կնիկը դուռը բաց անի, չի լինում, բաց չի անում: Ճարը կտրած գնում է մի պատի տակի կուչ

է գալի, դողալով գիշերն անց է կացնում, մինչեւ լուսը բացւում է: Նազարը խռոված պատի տակին արեւկող արած սպասում է, որ կնիկը գայ տուն տանի ու միտք է անում: Ամառուայ շոգ օ՜ր՝ գազազած ճանճեր. ինքն էլ էնքան ալարկոտ, որ ալարում է քիթը սրբի — ճանճերը գալիս են սրա քիթ ու պռունգին վէր գալի, լցւում: Որ շատ նեղացնում են՝ ձեռը տանում է երեսին զարկում: Որ երեսին զարկում է՝ ճանճերը ջարդւում են, առաջին վէր թափում:

— Վա՛հ, էս ինչ էր... մնում է զարմացած:

Ուզում է համրի թէ մի զարկով քանիսն սպանեց՝ չի կարողանում: Մտածում է, որ հազարից պակաս չի լինիլ:

— Վա՛հ, ասում է, ես էսպէս տղամարդ եմ էլել ու մինչեւ էսօր չեմ իմացե՜լ... Ես, որ մի զարկով կարող եմ հազար շունչ կենդանի ջարդել, էլ ի՞նչ եմ էս անպիտան կնգայ կողքին վէր ընկել...

Էստեղից վեր է կենում, ուղիղ գնում իրենց գիւղի տէրտէրի մօտ:

— Տէ՛րտէր, օրհնեա ի տէր:

— Աստուած օրհնի, որդի՛ս:

— Տէ՛րտէր, բա չես ասիլ էսպէս էսպէս բան:

Պատմում է իր քաջագործութիւնը ու հետն էլ յայտնում է, որ պէտք է իր կնգանից կորչի, միայն խնդրում է՝ իր արածը տէրտէրը գրի, որ անյայտ չմնայ, ամէնքն էլ կարդան իմանան: Տէրտէրն էլ, կատակի համար, մի փալասի կտորի վրայ գրում է.

Անյաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի ջարդի հազար,

Ու տալիս է իրեն:

Նազարս էս փալասի կտորը մի փէտի ծէրի ամրացնում է, մի ժանգոտած թրի կտոր կապում մէջքը, իրենց հարեւանի էշին նստում ու գիւղից հեռանում:

2.

Իրենց գիւղից դուրս է գալի մի ճամբայ է ընկնում ու գնում: Ինքն էլ չի իմանում թէ էդ ճամբէն ուր է տանում:

Գնում է գնում, մին էլ ետ է նայում, տեսնում է գիւղից հե-

ռացել է։ Էստեղ սիրտն ահ է ընկնում։ Իրեն սիրտ տալու համար սկսում է քթի տակին մրմռալ, երգել, իրեն իրեն խոսել, իշի վըրայ բարկանալ։ Քանի հեռանում է՝ էնքան վախը սաստկանում է, քանի վախը սաստկանում է՝ էնքան ձէնը բարձրանում է, սկսում է գոռգոռալ, հարայ—հրոց անել, հետն էլ միւս կողմից էշն է սկսում զռալ… Էս աղմուկից ու աղաղակից թռչունները մօտիկ ծառերից են թռչում, նապաստակները թփերից են փախչում, գորտերը կանանչիցն են ջուրը թափում…

Նազարը ձէնն աւելի է գլուխը գցում. իսկ որ մտնում է անտառը — թւում է՝ թէ ամէն մի ծառի տակից, ամէն մի թփի միջից, ամէն մի քարի ետեւից՝ որտեղ որ է՝ գազան է յարձակուելու կամ աւազակ. սարսափած սկսում է գոռգոռալ, ո՛նց գոռգոռալ՝ ականջդ ոչ լըսի։

Դու մի՛ ասիլ հէնց էս ժամանակ մի գիւղացի ձին քաշելով անտառում միամիտ գալիս է։ Էս զարհուրելի ձէնը ականջն է ընկնում թէ չէ՝ կանգնում է.

— Վա՜յ, ասում է, ո՞նց թէ իմն էլ էստեղ էր հասե՜լ. կայ-չկայ էս աւազակներ են…

Ձին թողնում է, ընկնում է ճամբի տակի անտառն ու՝ երկու ոտն ունէր, երկուսն էլ փոխ է առնում՝ փախչում։

Բախտդ սիրեմ Քաջ Նազար. գոռգոռալով գալիս է տեսնում մի թամբած ձի ճամբի մէջտեղը կանգնած իրեն է սպասում։ Իշից վեր է գալիս էս, թամբած ձիուն նստում ու շարունակում իր ճամբէն։

3.

Շատ է գնում, քիչ է գնում, շատն ու քիչն էլ ինքը կ՚իմանար, գնում է ընկնում մի գիւղ. ինքը գիւղին անծանօթ, գիւղն իրեն։ Ո՞ւր գնայ, ո՞ւր չգնայ։ Մի տանից զուռնի ձէն է լսում. ձի քշում է էս ձէնի վրայ, գնում է ընկնում մի հարսանքատուն։

— Բարի օր ձեզ։

— Ա՛յ Աստծու բարին քեզ, բարով հազար բարի եկար։

Համե՛ցէք, հա, համե՛ցէք. դէ ղոնախն Աստուծոն է. սրան տանում են իր դրօշակով սուփրի վերի ծէրին բազմեցնում։ Աչքդ էն բարին տեսնի, ինչ որ լցնում են առաջը՝ թէ ուտելիք, թէ խըմելիք։

Հարսանքաւորները հետաքրքրւում են իմանան, թէ ո՞վ է էս տարօրինակ անծանօթը: Ներքի ծէրից մինը բոթում է իր կողքի նստածին ու հարցնում, սա էլ իր կողքի նստածին է բոթում, էսպէս հերթով իրար բոթելով ու հարցնելով բանը մնում է վերի ծէրին նստած տէրտէրին: Տէրտէրը մի կերպով ղոնախի դրօշակի վրայ կարդում է·

Անյաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար:

Կարդում է ու զարհուրած յայտնում է իր կողքի նստածին, սա էլ իր կողքի նստածին, նա էլ երրորդին, երրորդը չորրորդին· էսպէսով հասնում է մինչեւ դրան տակը ու ամբողջ հարսանքատունը դղրդում է թէ՝ բա՛ չես ասիլ նորեկ ղոնախն է ինքը՝

Անյաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար:

— Քաջ Նազարն է հա՛... բացականչում է պարծենկոտի մինը. ի՜նչքան է փոխուել. միանգամից լաւ չճանաչեցի...

Եւ մարդիկ են գտնւում, որ պատմում են նրա արած քաջագործութիւնները, հին ծանօթութիւնն ու միասին անցկացրած օրերը:

— Հապա ի՞նչպէս է, որ էսպէս մարդը հետը ոչ մի ծառայ չունի, զարմանքով հարցնում են անծանօթները:

— Էդպէս է դրա սովորութիւնը, ծառաներով ման գալ չի սիրում: Մի անգամ ես հարցրի, ասաւ՝ ծառան ի՞նչ եմ անում, ամբողջ աշխարհքն իմ ծառան է ու իմ ծառան:

— Հապա ինչպէս է, որ մի կարգին թուր չունի, էս ժանգոտ երկաթի կտորն է մէջքին կապել:

— Շնորհքն էլ հէնց դրա մէջն է, որ էս ժանգոտ երկաթի կտորով մին զարկես ջարդես հազար, թէ չէ լաւ թրով, ի՞նչ կայ որ, սովորական քաջերն էլ են ջարդում:

Ու ապշած ժողովուրդը ոտի է կանգնում, խմում է Քաջ Նազարի կենացը: Իրենց միջի խելօքն էլ դուրս է գալի ճառ է ասում Նազարի առաջ. ասում է՝ մենք վաղուց էինք լսել քո մեծ հռչակը, կարօտ էինք երեսդ տեսնելու եւ ահա էսօր բախտաւոր ենք, որ քեզ տեսնում ենք մեր մէջ: Նազարը հառաչում է ու ձեռքը

թափ է տալի։ Ժողովրդականները խորհրդաւոր իրար աչքով են անում, հասկանում են, թէ էդ հառաչանքն ու ձեռքի թափ տալը ինչքան բան կը նշանակէր...

Ու ցրուելով հարբած հարսանքաւորները տարածում են ամէն տեղ, թէ գալիս է

Անյաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար։

Պատմում են նրա զարմանալի քաջագործութիւնները, նկարագրում են նրա ահռելի կերպարանքը։ Ու ամէն տեղ իրենց նորածին երեխաների անունը դնում են Քաջ Նազար։

4.

Հարսանքատանից հեռանում է Նազարն ու շարունակում է իր ճամբէն։ Գնում է հասնում մի կանանչ դաշտ։ Էս կանանչ դաշտում ձին թողնում է արածի, դրօշակը տնկում է, ինքն էլ դրօշակի շուաքումը պառկում քնում։

Դու մի՛ ասիլ օխտը հսկայ եղբայրներ կան, օխտը աւազակապետ, էս տեղերը նրանցն են, իրենց ամրոցն էլ մօտիկ սարի գըլխին է։ Էս հսկաները վերեւից մտիկ են տալիս՝ որ մի մարդ եկել է իրենց հանդում վէր է եկել։ Շատ են զարմանում, թէ էս ինչ սրտի տէր մարդ պէտք է լինի, քանի գլխանի, որ առանց քաշուելու եկել է իրենց հանդում հանգիստ վէր եկել ու ձին էլ բաց թողել։ Ամէն մինը մի գուրզ ունէր քառասուն լըդրանոց։ Էս քառասուն լըդրանոց գուրզները վերցնում են գալի։ Գալիս են ի՞նչ են տեսնում. հրէս մի ձի արածում է, մի մարդ կողքին քնած, գըլխավերեւը մի դրօշակ տնկած, դրօշակի վրէն գրած.

Անյաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար։

Վա՛յ, Քաջ Նազարն է՛... Մատները կծում են հսկաներն ու մնում են տեղները սառած։ Դու մի ասիլ հարբած հարսանքաւորների տարածած լուրը սրանց էլ է լինում հասած։ Էսպէս թուքները ցամաքած, չորացած սպասում են, մինչեւ Նազարն իր քունն առնում է ու զարթնում. որ զարթնում է, աչքերը բաց է

անում տեսնում գլխավերեւը քառասուն լդրանոց գուրզները ուսներին օխտն ահռելի հսկաներ կանգնած՝ էլ փորումը սիրտ չի մընում։ Մտնում է իր դրօշակի ետեւն ու սկսում է դողալ, ոնց որ աշունքուայ տերեւը կը դողայ։ Էս հսկաները որ տեսնում են սա գունատուեց ու սկսեց դողալ, ասում են՝ բարկացաւ, հիմի որտեղ որ է մի զարկով օխտիս էլ կը սպաննի, առաջին գետին են փըռւում ու խնդրում են.

Անյաղթ հերոս Քաջըդ Նազար,
Որ մին զարկես՝ ջարդես հազար,

— Մենք լսել էինք քո ահաւոր անունը, տեսութեանդ էինք փափաքում. այժմ բախտաւոր ենք, որ քո ոտով ես եկել մեր հողը։ Մենք, քո խոնարհ ծառաներդ՝ օխտն ախպէր ենք, ահա մեր ամրոցն էլ էն սարի գլխին է՝ մէջը մեր գեղեցիկ քոյրը։ Աղաչում ենք շնորհ անես՝ գաս մեր հացը կտրես...

Էստեղ Նազարի շունչը տեղն է գալի, նստում է իր ձին, նրանք էլ դրօշակն առած՝ առաջ են ընկնում ու հանդիսաւոր տանում են իրենց ամրոցը։ Տանում են ամրոցում պահում, պատւում թագաւորին վայել պատուով ու էնքան են խօսում նրա քաջագործութիւններից, էնքան են գովում, որ իրենց գեղեցիկ քոյրը սիրահարւում է վրէն։ Ինչ ասել կ'ուզի՝ յարգն ու պատիւն էլ հետն աւելանում է։

5.

Էս ժամանակ մի վագր է լուս ընկնում էս երկրում ու սարսափ է գցում ժողովրդի վրայ։ Ո՞վ կը սպաննի վագրին, ո՞վ չի սպանել։ Ի հարկէ Քաջ Նազարը կը սպանի։ Էլ ո՞վ սիրտ կ'անի վագրի դէմ գնայ։ Ամէնքն էլ Նազարի երեսին են մտիկ տալի. վերեւը մի Աստուած, ներքեւը մի Քաջ Նազար։

Վագրի անունը լսելուն պէս Նազարը վախից դուրս է վազում, ուզում է փախչի ետ գնայ իրենց տունը, իսկ կանգնածները կարծում են թէ վազում էր, որ գնայ Վագրին սպանի։ Նշանածը բռնում է կանգնեցնում, թէ՝ ո՞ւր ես վազում էդպէս առանց զէնքի, զէնք առ հետդ էնպէս գնա։ Զէնք է բերում տալիս իրեն, որ գնայ իր փառքի վրայ մի քաջութիւն էլ աւելացնի։ Նազարը զէնքն

առնում է դուրս գնում: Գնում է անտառում մի ծառի բարձրանում, վրէն տապ անում, որ ոչ ինքը վագրին պատահի, ոչ վագրը իրեն: Ծառի վրայ կուչ է գալի ու Նազարն ո՞վ կը տայ — հոգին դառել է կորկի հատ: Հակառակի նման անտէր վագրն էլ գալիս է հէնց էս ծառի տակին պառկում: Նազարը որ վագրին չի տեսնո՛ւմ՝ լեղին ջուր է կտրում, աչքերը սեւանում են, ձեռն ու ոտը թուլանում են ու թը՛մփ, ծառից ընկնում է գազանի վրայ: Վագրը սարսափած տեղից վեր է թռչում, Նազարն էլ վախից կպչում է սրա մէջքին: Էսպէս զարհուրած Նազարը մէջքին կպած էս խրտնած վագրը փախչում է, ո՛նց է փախչում, էլ սար ու ձոր, քար ու քօլ չի հարցնում:

Մարդիկ մին էլ տեսնում են, վա՛յ, Քաջ Նազարը վագրին նստած քշում է:

— Հա՛յ-հարա՛յ, եկէ՛ք հա, եկէ՛ք, Քաջ Նազարը վագրին ձի է շինել հեծել... տուէ՛ք հա, տուէ՛ք... Սրտաւորւում են, ամէնքը մի կողմից հարայ-հրոցով, հրհըռոցով յարձակւում են՝ խանչալով, թրով, թուանքով, քարով, փէտով տալիս են սպանում:

Նազարը որ ուշքի է գալի, լեզուն բացւում է՝ ափսո՛ս ասում է, ընչի՞ սպանեցիք, զոռով մի ձի էի շինել նստել... էնքան պէտք է քշէի ո՛ր...

Լուրը գնում է, հասնում է ամրոցը: Մարդ, կին, մեծ, պըստիկ՝ ժողովուրդը դուրս է թափում Նազարին ընդունելու: Վրէն երգ են կապում ու երգում:

Ու պսակեցին Քաջ Նազարին հսկաների գեղեցիկ քրոջ հետ, օխտն օր, օխտը գիշեր հարսանիք արին, երգելով գովեցին թագաւորին ու թագուհուն:

6.

Դու մի՛ ասի էս աղջկանը ուզած է լինում հարեւան երկրի թագաւորը: Որ իմանում է իրեն չեն տուել՝ ուրիշի հետ են ամուսնացրել՝ զօրք է կապում պատերազմով գալիս է օխտն ախպօր վրայ:

Էս օխտը հսկան գնում են Քաջ Նազարի մօտ, պատերազմի

լուրը յայտնում են, գլուխ են տալի, առաջը կանգնում՝ հրաման են խնդրում:

Պատերազմի անունը որ լսում է՝ սարսափում է Նազարը, դուրս է պրծնում, որ փախչի եւ գնայ իրենց գիւղը: Մարդիկ կարծում են՝ ուզում էր խոյն դուրս վազել յարձակուել թշնամու բանակի վրայ: Առաջն են ընկնում, բռնում են խնդրում, թէ ախր առանց զէնքի ու զրահի մենակ ո՞ւր ես գնում, ի՞նչ ես անում, գլխիցդ ձեռք ես վերցրել, ի՞նչ է...

Բերում են զէնք ու զրահ են տալի, կնիկն էլ եղբայրներին խնդրում է, որ չթողնեն Նազարին իր քաջութիւնից տարուած մենակ յարձակուի թշնամու զօրքի վրայ: Եւ լուրը գնում տարածւում է զօրքի ու ժողովրդի մէջ, լրտեսների միջոցով էլ հասնում է թշնամուն, թէ Քաջ Նազարը մենակ առանց զէնքի թռչում էր դէպի պատերազմի դաշտը, հազիւ են կարողացել զսպել ու շրջապատուած բերում են...

Պատերազմի դաշտում մի ամեհի նժոյգ ձի են բերում, Նազարին նստեցնում վրէն: Ոգեւորուած զօրքն էլ հետը վեր է կենում ահագին աղմուկով,— կեցցէ՛ Քաջըն Նազա՛ր... մահ թշնամո՛ւն...

Նազարի տակի նժոյգը, որ տեսնում է վրէն ինչ անպէտքի մինն է նստած՝ խրխնջում է, գլուխն առնում ու թռչում առաջ, ուղիղ թշնամու բանակը: Զօրքերը կարծում են Քաջ Նազարը յարձակուեց, ուռա՛ են կանչում ու իրենք էլ ետեւից յարձակւում ամենայն սաստկութեամբ: Նազարը որ տեսնում է չի կարողանում իր ձիու գլուխը պահի, քիչ է մնում վէր ընկնի, ձեռը գցում է, ուզում է մի ծառից փաթաթուի, դու մի՛ ասիլ ծառը փտած է, մի գերանաչափ ճիւղը պոկ է գալիս մնում ձեռին: Թշնամու զօրքերը, որ առաջուց համբաւը լսել էին ու ահը սրտներումն էր, էս էլ որ իրենց աչքով տեսնում են՝ էլ փորներումը սիրտ չի մնում. երես են շուռ տալիս,— փա՛խի, որ փա՛խի, թէ մարդ ես գլուխդ պրծացրու, որ Քաջ Նազարը ծառերն արմատահան անելով գալիս է...

Էդ օրը թշնամուց ինչքան կոտորւում է կոտորւում, մնացածները թուրները գնում են Քաջ Նազարի ոտի տակին, յայտնում են իրենց հպատակութիւնն ու հնազանդութիւնը:

Ու պատերազմի ահեղ դաշտից Քաջ Նազարը հսկաների ամ-

րոցն է վերադառնում։ Ժողովուրդը յաղթական կամարներ է կապում, աննկարագրելի ոգեւորութեամբ, ուռաներով եւ կեցցէներով, երգով ու երաժշտութիւնով, աղջիկներով ու ծաղիկներով, պատգամաւորութիւններով ու ճառերով առաջն է դուրս գալի, էնպէս մի փառք ու պատիւ, որ Նազարը մնացել էր ապշած շըշկըլուած։

Էսպէս առքով-փառքով էլ բերում, հրապարակում են իրենց թագաւոր ու բազմեցնում են թագաւորի թախտին։ Քաջ Նազարը դառնում է թագաւոր, էն հսկաներից ամէն մէկին էլ մի պաշտօն է տալիս։ Մին էլ տեսնում է աշխարհքը իր բռան մէջ։

Ասում են մինչեւ էսօր էլ դեռ ապրում ու թագաւորում է Քաջ Նազարը։ Ու՝ երբ քաջութիւնից, խելքից, հանճարից մօտը խօսք են գցում՝ ծիծաղում է, ասում է.

— Ի՞նչ քաջութիւն, ի՞նչ խելք, ի՞նչ հանճար. դատարկ բաներ են բոլորը։ Բանը մարդու բախտն է։ Բախտ ունե՞ս՝ քէֆ արա...

Եւ ասում են, մինչեւ էսօր էլ քէֆ է անում Քաջ Նազարը ու ծիծաղում է աշխարհքի վրայ։

ՅՈՎ. ԹՈՒՄԱՆԵԱՆ